

**ԵՐՎԱՆԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ՆԵԼԼԵՆԻՉՄԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱԿՆԱՐԿՆԵՐ**



**ԵՐԵՎԱՆ 2018**

9(3)  
Ձ-35  
h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՎԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

6100

ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ԴՐՈՅԶԵՆԻՑ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԱՎԵՐԶԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ  
ՄԱՏԵԼԱՄԱՐ  
184



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
184

ԵՐԵՎԱՆ - 2018



ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Մ 350

**Նվիրվում է իմ սիրելի կնոջը՝  
Գայանե Մարգարյանին**

**Երաշխավորել է տպագրության  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի  
բաժնի որոշմամբ**

**Երվանդ Մարգարյան**

Մ 350 Հելլենիզմի պատմագրության ակնարկներ (Դրոյզենից մինչև XX դարավերջը)/ Մարգարյան Երվանդ – Եր.:  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2018. – 269 էջ:

Մենագրությունը նվիրված է XIX-XX դդ. հելլենիզմին նվիրված հետազոտությունների պատմագրության: Ցույց է տրված համաշխարհային պատմագիտության մեջ տեղի ունեցած այն փոխակերպումները, որոնք տեղի են ունեցել գաղութատիրական համակարգի փլուզման գուզրնթաց և հետգաղութատիրական դարաշրջանում: Աշխատանքը հասցեագրված է հելլենիզմի պատմության մասնագետներին, պատմաբան ուսանողներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են հին պատմության խնդիրներով:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-76-3

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2018

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբանի փոխարեն .....	5
Առաջին քայլերը: Գերմանական դասական պատմագիտություն: Դրոյզեն .....	7
Հելլենիզմի անգլո-ամերիկյան ուսումնասիրության պատմությունից .....	14
Ֆրանսիայում հելլենիզմի հետազոտությունների պատմությունից .....	43
Հելլենիզմի պատմության ուսումնասիրությունները Գերմանիայում, Հոլանդիայում և Բելգիայում .....	55
Ուսումնասիրություններն եվրոպական այլ երկրներում ...	59
Հրեական պատմագիտությունը հելլենիզմի առանձնահատկությունների մասին: Հելլենիզմը և գելոտությունը արդի հրեական հելլենիստագիտության մեջ .....	61
Հելլենիզմի ուսումնասիրությունը Ռուսաստանում .....	79
Հելլենիզմի պատմագրության ուսումնասիրությունը Խորհրդային շրջանում .....	100
Հելլենիզմի ուսումնասիրության Խորհրդահայ դպրոցի պատմությունից .....	129
Վերջաբան .....	157
Резюме .....	161
Summary .....	194
Գրականություն .....	221

## ՆԱԽԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հելլենիստական ուսումնասիրություններն այսօր՝ Արևմուտքի համակարգային ճգնաժամի և Արևելքի սրընթաց աճի պայմաններում՝ ստացել են առավել քան երբևիցե արդիական հնչեղություն, որը բացի զուտ ակադեմիական հետաքրքրությունից պայմանավորված է ուշ անտիկ շրջանի և մեր օրերի տիպաբանական և մշակութային նմանությամբ: Այդ նմանությունը բնորոշվում է մի քանի կարևոր հանգամանքներով.

Դեռևս Ք.ա. 4-րդ դարի վերջերից հելլենիստական աշխարհը ներքաշվել էր քաղաքակրթական ինտենսիվ երկխոսության մեջ, ինչի արդյունքում նախկինում մեկուսի մշակութային ավանդույթները փոխկապակցվեցին մեկ համադրական (սինկրետիկ), համաշխարհայնացված (առնվազն Միջերկրածովյան օյկումենայի շրջանակներում) քաղաքակրթության մեջ: Այդ քաղաքակրթական երկխոսությունը տեղի էր ունենում ավանդական մշակութային արժեքների ճգնաժամի և նոր աշխարհայեցարկարգային հարացույցերի (պարադիգմերի) հասունացման պայմաններում, մի բան, որ բնորոշ է նաև մեր ժամանակներին: Ուսումնասիրողները նշում են հելլենիստական դարաշրջանի (հատկապես ուշ հելլենիզմի) և արդի (հերարդյունաբերական և հետմոդերնիստական) ժամանակաշրջանի ակնհայտ ֆենոմենոլոգիական նմանությունը: Պատահական չէ, որ մեր ժամանակներն երբեմն անվանում են նոր հելլենիզմ (նեոհելլենիզմ): Հելլենիզմի անցած ուղիներն արդիական են ոչ միայն այդ շրջանն ուսումնասիրող պատմաբանների, այլև քաղաքակրթության և քաղաքագիտության հիմնահարցերով զբաղվողների համար:

Հայաստանի համար հեյլենիզմի ուսումնասիրությունները ևս միշտ եղել են կարևոր և արդիական: Բանն այն է, որ հին Հայոց պատմության մեջ հեյլենիզմն եղել է ամենագեղեցիկ և բեղմնավոր դարաշրջան: Միննույն ժամանակ այն հող է նախապատրաստել միջնադարյան Հայաստանի մշակութային Ոսկե դարի համար և աներկյի կերպով առկա էր ողջ հայոց պատմության ընթացքում: Լինելով Հայոց պատմության թերևս ամենանշանակալից և հետաքրքիր դարաշրջաններից մեկը, հեյլենիզմն արդի հայոց պատմագրության մեջ հանիրավի մատնվել է անտարբերության և վերջին քառորդ դարում գրեթե չի ուսումնասիրվել: Հրապարակ հանված աշխատանքը նպատակ ունի լրացնել վերջին տասնամյակներում գոյացած բացը և երիտասարդության մեջ հետաքրքրություն արթնացնել հեյլենիստական ուսումնասիրությունների և առհասարակ հեյլենիզմի նկատմամբ:

Ընթերցողի ուշադրության ներկայացված ակնարկները բնավ չեն հավակնում ամփոփել հեյլենիստական քաղաքակրթությանը նվիրված բոլոր ուսումնասիրությունները: Հեյլենիզմին նվիրված հոդվածների և մենագրությունների նույնիսկ մակերեսային դիտարկումը, բրիտանական անտիկագետ Փ. Քարթլեջի պատկերավոր արտահայտությամբ. «հասարակ մահկանացույի հնարավորություններից զանց է»<sup>1</sup>: Այնուամենայնիվ, բոլոր թերություններով և մասնակիությամբ հանդերձ, նման աշխատանքի անհրաժեշտությունը հայ պատմագրության մեջ անհրաժեշտ է:

<sup>1</sup> Cartledge 1997: 1.

## ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ: ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԴՐՈՅՋԵՆ

*Мы слушали. Народов бич и бремя,  
Семи царям грозил Ассаргадон  
В завистливо недремлющее Время  
За камнем камень падал Вавилон,  
Ушла Семирамида, Маккаеви,  
Маяк Сидона корабли манил,  
Вздымались ввысь дворцы и мавзолеи,  
Загадочно глядели сфинксы в Нил...*

**Т. Шумовский**

Ինքնին, հեյլենիզմ եզրը գիտական շրջանառության մեջ է մտել բավականին ուշ, XIX դ. 30-ական թթ.: Մինչ այդ պատմաբանների մեծ մասը, օրինակ՝ Ֆ. Վոլֆը (F. Wolff), Ռ. Բենթլին (R. Bentley) և այլք, հետդասական անտիկ ժամանակը համարել են հունական մշակույթի աստիճանական քայքայման և բարբարոսացման շրջան, ուստի իրենց ուշադրությունը չէին սևեռում այդ «այլակերպված և ապականված» դարաշրջանի վրա: Անգամ անտիկ պատմության այնպիսի խոշոր ներկայացուցիչ, ինչպես Բ. Նիբուրը (B. Niebuhr), որն ի տարբերություն շատերի, չէր սահմանափակվել միայն դասական ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ և իր Հին Հունաստանի պատմության դասախոսությունների հրատարակման ժամա-

նակ այն հասցրել էր մինչև Ք.ա. II դ., չկարողացավ տալ այդ շրջանի շատ թե քիչ համոզիչ և իմաստավորված պատկեր: Նախաբանում նա ազնվորեն խոստովանել էր, որ չի հասկանում այդ «խեղձ» դարաշրջանը, թեև գտնում է այն շատ հետաքրքիր: Դասական Հունաստանի պատմության շրջանակներից դուրս չեկավ նա XIX դ. առաջին կեսի, թերևս, ամենախոշոր անտիկագետ, հերմենևտիկայի<sup>1</sup> հիմնադիրներից մեկը՝ Ֆ.Ա. Բյոքը<sup>2</sup> (Philipp August Böckh):

Այդ կնճոտ և խնդրահարույց պատմական շրջանի ուսումնասիրության հարցում ճեղքում կատարեց Բյոքի թերևս ամենաշնորհալի աշակերտ Յոհան Գուստավ Դրոյզենը (1808–1884), որը 1833 թ. հրատարակեց իր հանրահայտ «Հելլենիզմի պատմություն» հիմնարար աշխատության առաջին հատորը: Հաջորդ տասը տարվա ընթացքում լույս տեսան այդ մենագրության ևս երկու պրակ<sup>3</sup>: Դա առաջին նշանակալից և, ինչպես ցույց տվեց ժամանակը, ծրագրային աշխատություն էր հելլենիզմի քաղաքական պատմության ուսումնասիրության բնագավառում: Կիրառելով գերմանական պատմագիտական դպրոցում փայլուն մշակված պատմա-քննական մեթոդի նվաճումները, Դրոյզենը փութաջանորեն ուսումնասիրել և

<sup>1</sup> Коновалова 2008: 148–156.

<sup>2</sup> Ա. Բյոքը առաջինն էր ձեռնարկել հունարեն արձանագրությունների դիվանի (կորպուս) ժողովումն ու հրատարակումը (1825–1859): Այդ կորպուսը, որում տեղ են գտել ոչ մեծ թվով հելլենիստական շրջանի վիմագրություններ, մինչև օրս համարվում է ամենատարած և ճշգրիտ: Չեստեղված վիմագրային կյուրի հիման վրա Բյոքը ձեռնարկել էր Աթենքի տնտեսական պատմության համակողմանի ուսումնասիրություն («Աթենացիների պետական տնտեսությունը» 3 հատ. 1817–1823): Նրա աշակերտ Կ. Մյուլլերը ընդլայնելով ուսումնասիրության դաշտը քննության առարկա է դարձրել առանձին քաղաք-պետությունների, ցեղերի (դորիացիներ, Էգինե կրգի և այլն) պատմությունը, զարկ է տվել հունական դիցարանության և դասական հնագիտության զարգացմանը: Ըստ էության այդ երկու խոշոր պատմաբանների մշակած մոտեցումներն ու մեթոդները որոշեցին դասական անտիկագիտության հետագա ընթացքը, տվեցին նրան ժամանակակից տեսք:

<sup>3</sup> Дройзен 1995 (репринт издания 1914 г. (Сергиев Посад), 1890–1893 (перизд.: СПб, 1999, М.: 2002); Т. 1 2003; Т. 2: 2003.

ի ցույց է հանել անտիկ պատմության ամենաբարդ և կնճոտ դարաշրջաններից մեկը, որը, ըստ գերմանացի պատմաբանի, մեկնարկել է Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքների ժամանակ՝ և ավարտվել հռոմեացիների Միջերկրականի նվաճմամբ: Այսպիսով Դրոյզենը փորձեց ընդլայնել հունական պատմության շրջանակները գրեթե երեք դարով, այն հասցնելով Ք.ա. 31 թ.: Հենվելով Գերմանիայում փայլուն մշակված աղբյուրագիտական բազայի վրա Դրոյզենը ստեղծեց հետդասական անտիկ դարաշրջանի ամփոփ և ավարտուն պատկեր, որոշեց դրա բնույթը, անվանելով այդ դարաշրջանը ոչ թե «հելլենություն» (այսինքն՝ հույների դարաշրջան), այլ *հելլենիզմ* (այսինքն՝ հունականության դարաշրջան, երբ հունական քաղաքակրթական արժեքները լայն տարածում գտան ոչ հունական միջավայրում): Այդ անվանումը Դրոյզենը պայմանավորում էր դարաշրջանի բարդ, համադրական բնույթով: Գերմանացի պատմաբանի համոզմամբ հելլենիզմն երկու մշակութային՝ արևմտյան և արևելյան առանցքատարրերի միախառնման շրջան, որում սակայն հունական սկիզբն առաջնային է և գերիշխող: Ու թեև Դրոյզենը հելլենիզմն անվանում էր քաղաքակրթություն, այդ բառի հետևում նա տեսնում է այլ բովանդակություն, որն էապես տարբերվում է վերջինիս մերօրյա իմաստից: Բանն այն է, որ դեռևս ֆրանսիական լուսավորիչների (Բյուֆֆոն, Տյուրգո, Ռուսո) դարաշրջանից ու մինչև Օ. Շպենգլերը, եվրոպական լեզուներում «քաղաքակրթություն» եզրը իմաստով ավելի մոտ էր «բարձր մշակույթ», «բարեկրթություն», «քաղաքավարություն» հարանիշերին<sup>2</sup> (ընդ որում հիմնականում նկատի էր առնվում եվրոպական քաղաքակրթությունը) և հակառակ էր «բարբարոսություն», «վայրի վիճակ», «տգիտություն», «խավարամտություն» իմաստներին: Օ.

<sup>1</sup> Անշուշտ մեկնարկային կետ պետք է համարել եգիպտական Ալեքսանդրիայի հիմնադրումը:

<sup>2</sup> Февр 1991: 291–293.

Շպենգլերը և Ա. Թոյնբին առաջիններն էին, որ սկսեցին այդ եզրն օգտագործել հոգնակիով (համաշխարհային քաղաքակրթություններ), դրան հայտնելով ավելի լայն և խորքային բովանդակություն:

Հատկանշական է նաև, որ հետագայում, մոտ մեկ դար անց, կասկածի տակ դրվեց Դրոյզենի «հելլենիզմ» եզրի հեղինակային իրավունքը: Այսպես Ֆ. Ուոլբանքի համոզմամբ «հելլենիզմ» եզրն ունի շատ ավելի հին պատմություն և հիշատակվում է դեռևս ուշ դասական և բուն հելլենիստական աղբյուրներում<sup>1</sup>: Օրինակ Արիստոտելը բազմիցս օգտագործում է *hellenizein* բայը՝ «խոսել հունարեն» իմաստով (*Arist. Rhet. III.51; 1407a 19; cf.: II. 12*), իսկ դրանից գոյացած *hellenismos* գոյականը, որը նշանակում է «համահունարեն լեզու և հելլենական մշակույթ» առաջինն օգտագործել է նրա աշակերտ Թեափրաստոսը<sup>2</sup>: Այսպիսով, Ֆ. Ուոլբանքը և շատ ուրիշները «հելլենիստական» (*hellenistic*) եզրի սկզբնական իմաստը համարում են «խոսել հունարեն»<sup>3</sup>, որը միայն հետագայում ձեռք է բերել այսօր լայնորեն տարածված «նոր աշխարհ, ուր իշխում են հույները և հունական մշակույթը» դրոյզենյան հարանիշը: Սակայն Ֆ. Ուոլբանքի կարծիքով այդ հարանիշը ևս գոյություն ունեւ հելլենիստական շրջանից<sup>4</sup>, այսպես Մակաբեացիների II գրքում (4.13) խոսվում է Երուսաղեմի «հելլենացման» մասին. հետազոտողների կարծիքով, այդ հատվածում *hellenismos* եզրը նշանակում է «հունական հաստատություններ, բարքեր և ավանդույթներ»:

Բայց անկախ ամենից փաստ է, որ «հելլենիզմ» եզրը գիտական հանրության միջավայրում ճանաչում ստացավ միայն Դրոյզենի վերոհիշյալ աշխատության հրատարակումից հետո: Թեև «հելլե-

<sup>1</sup> Walbank 1988: 108.

<sup>2</sup> Sté'u Laqueur 1925: 24; Sté'u նաև. Bichler 1983: 5-22.

<sup>3</sup> Վերջինիս ցայտուն դրսևորումը նրանք համարում են հունարենի գերիշխումը մյուս լեզուների նկատմամբ և անշուշտ շուրջ մեկ ու կես հազարամյակ այդ լեզվի *lingua franca*-ի կարգավիճակը (Walbank 1991/1992. Vol. 11: 14).

<sup>4</sup> Walbank 1991/1992: 108.

նիզմ» եզրը շրջանառվում է արդեն ավելի քան մեկ ու կես դար, դրա բովանդակային իմաստի վերաբերյալ արդի պատմագրության մեջ չկա միասնական ու միանշանակ կարծիք: Ասվածը վերաբերվում է հելլենիստական պատմության աշխարհագրական, ժամանակագրական սահմանների ու բազմաթիվ այլ ընդհանուր և մասնավոր խնդիրների:

Միևնույն ժամանակ Դրոյզենը հելլենիզմը համարում էր անտիկ հունական պատմության անբաժանելի մաս, վերջինիս օրինաչափ շարունակությունը և ի վերջո՝ տրամաբանական ավարտը: Նա մշակել է յուրօրինակ սխեմա, որում անտիկ Հունաստանի պատմությունը հելլենիզմի միջոցով ազուցվում էր Հռոմեական տերության պատմությանը: Ներկայացնելով հելլենիզմն իբրև անտիկ Հունաստանի մարման շրջան, Դրոյզենն ըստ էության, այն ճանաչել է մի կողմից՝ հունական պատմության վերջնամաս և մյուս կողմից՝ Հռոմեական տերության նախերգանք:

Այսպիսով, կարելի է ասել, որ Դրոյզենը հելլենիզմը դարձրել է եվրոպական պատմության բաղակցական մասը և ներկայացրել իբրև եվրոպական պատմություն, որը սակայն ավելի քան երեք դար ծավալվել էր եվրոպայից դուրս՝ Ասիայում և Աֆրիկայում: Դա անշուշտ բարձրացրել էր հելլենիզմի արժեքը եվրոպացիների աչքում: Բայց միևնույն ժամանակ նման մոտեցումը ինքնաբերաբար զրկում էր հելլենիզմն ինքնուրույն քաղաքակրթական նշանակությունից և խիստ սահմանափակում վերջինիս տարածական և ժամանակագրական շրջանակները: Դա թերևս կարելի է բացատրել XIX դարին բնորոշ ընդգծված եվրոպակենտրոնությամբ, սակայն, Դրոյզենը (ի տարբերություն, օրինակ, Ռանկեի, Մոմզենի և շատ իր ժամանակակիցների) գոնե մասամբ կարողացավ հաղթահարել:

Բայց և այնպես, հելլենիստական ուսումնասիրությունների մեջ Դրոյզենի դերակատարությունն անգնահատելի է: Նրա «Հելլենիզ-

մի պատմություն» աշխատությանը, որը դարձավ պատմաբանի կյանքի գլխավոր գործը<sup>1</sup>, մեկնարկեց ժամանակակից պատմագիտության մի ամբողջ ուղղություն. Արևելքի հետդասական պատմության ուսումնասիրությունները ձեռք բերեցին բոլորովին նոր որակ: Դրոյզենին հաջողվեց ամփոփ ձևով ներկայացնել հելլենիստական պետությունների քաղաքական անցուդարձը, պարբերացնել իրադարձությունները, զույս հանել հելլենիստական տիրակալների բարդ և խճճված փոխհարաբերություններից, ուրվագծել Ալեքսանդրի և այլ պատմական գործիչների քաղաքական դիմապատկերները: Անշուշտ Դրոյզենի աշխատությունը, մերօրյա չափանիշներով զուրկ չէ որոշ միակողմանիությունից. մենագրության մեջ հասկապես շեշտը դրվում է քաղաքական պատմության վրա, իսկ հունական և արևելյան հարացույցների համաձուլումը գերմանացի պատմաբանը զլխավորապես տեսնում է մշակութային և կրոնական առանձին տարրերի մեխանիկական միավորման մեջ: Մինևույն ժամանակ աշխատությունում ակնբախ է այդ XIX դարին բնորոշ Ալեքսանդրի կերպարի բացարձակացում, տեղ-տեղ կարելի է հանդիպել եկարաշունչ, ընկալման համար բարդ նկարագրություններ: Ասկայն իր այդ ամենով հանդերձ, Դրոյզենի աշխատությունն իր նշանակությամբ անկասկած մնում է խոշոր իրադարձություն, որի ազդեցությունը հաջորդ դարերի պատմագիտական մտքի զարգացման վրա դժվար է գերազնահատել:

Դրոյզենի հեղինակությունն այնքան մեծ էր, որ իր ժամանակակիցներն ու հաջորդ դարերի հետազոտողները երկար ժամանակ չէին վճռում դուրս գալ նրա ուրվագծած շրջանակներից: Գերմանիայում մինչև Առաջին աշխարհամարտը Դրոյզենի մշակած հղաց-

<sup>1</sup> XIX դ. 50-ական թվականներից Դրոյզենը սկսեց զբաղվել Դրուսիայի պատմությամբ, դառնալով այսպես կոչված երիտգերմանական պատմական դպրոցի հենասայուններից մեկը, պրուսական ռազմականացման և գերմանական ազգայնականության ջատագով:

քը շարունակում էին զարգացնել Կ. Հուլիուս Բելոխը (Beloch)<sup>1</sup>, Բենեդիկտ Նիգեն<sup>2</sup>, Հուլիուս Կերստը<sup>3</sup> և հայագետ Յոզեֆ Մարկվարտը, իսկ պատերազմից հետո Ուլրիխ Վիլկենը<sup>4</sup>, Հելմուտ Բերվեն<sup>5</sup>, Զ. Գրեգորը<sup>6</sup> և Հերման Բրեգստոնը<sup>7</sup>, Գ. Շոյցը<sup>8</sup>, գերմանական պատմագիտական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից էր նաև ավստրիացի Ֆրիտց Շահերմեյրը<sup>9</sup>:

Նացիստների իշխանության օրոք հելլենիզմի նկատմամբ Գերմանիայում կրկին աճել էր հետաքրքրություն: Դա պայմանավորված էր հելլենիզմի նկատմամբ Անաներբեի ականավոր գործիչներից մեկի Ֆրանց Այթհայմի հատուկ վերաբերմունքով հելլենիստական քաղաքակրթության նկատմամբ: Հելլենիզմին Այթհայմը նվիրել է մի շարք արժեքավոր աշխատություններ<sup>10</sup>: 1938 թ. նա մասնակցել է Անաներբեի դեպի Մերձավոր Արևելք կազմակերպված արշավանքի: Այթհայմը համոզված էր, որ Արևելքը շատ գաղտնիքներ է թաքցնում, որոնք սպասում են իրենց բացահայտման ժամին: Դրանք երբեք չեն բացվի ավանդական արևմտյան ռացիոնալիստական մտքի առջև, միայն բնագանցական և անկաշկանդ միտք ունեցող և Արևելքի հոգին հասկացող հետազոտողը կարող է լույս սփռել այդ գաղտնիքների վրա:

<sup>1</sup> Beloch 2009.

<sup>2</sup> Niese 1893 (1963): 162.

<sup>3</sup> Kaerst 1897: 406–12; idem 1927 & 1926.

<sup>4</sup> Wilcken 1938: 298–321; idem 1974.

<sup>5</sup> Berve 1925–26; idem 1926: 179–86; idem 1938: 135–68; idem 1959; idem 1966; idem 1966: 312 ff.; idem 1967: xvi.

<sup>6</sup> Gregory 1940: 13.

<sup>7</sup> Bengtson 1934: 126–55; idem. 1937. Reprinted 1952; idem 1937–53.

<sup>8</sup> Scholz 1918.

<sup>9</sup> Schachermeyr 1920: 332–7; idem 1925: 435–61; idem 1949; idem 1954: 118–40; idem 1970; idem 1973.

<sup>10</sup> Altheim 1942; Idem 1953.



## ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

Հելլենիզմի պատմության և մշակույթի անգլերեն լեզվով առաջին նշանակալի ուսումնասիրությունները հայտնվում են բավականին ուշ՝ երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում: Հելլենիզմի անգլո-ամերիկյան պատմագրության ակունքների մոտ կանգնած էր Միխայիլ Իվանովիչ Ռոստովցևը [1870, Կին - 1952, Նյու Հեյվն (ԱՄՆ)]: Վերջինս չանտեսելով հելլենիստական պետությունների քաղաքական պատմության խնդիրները, տվեց նաև հելլենիստական քաղաքակրթության համակողմանի պատկեր. զգալիորեն համարել է Դրոյզենի ուրվագծած երևույթների համայնապատկերը:

Լինելով կադետական կուսակցության անդամ և ցարիզմի խիստ քննադատներից մեկը, նա ցնծությամբ էր ընդունել Փետրվարյան հեղափոխությունը, բայց չկարողացավ համակերպվել բոլշևիկյան հեղաշրջման հետ: Ռուսաստանյան շատ մտավորականների նման նա դարձավ քաղաքական վտարանդի: 1918 թ. ակադեմիական գործուղման պատրվակով նա լքում է հեղափոխական Պետրոգրադը և հանգրվանում Բրիտանիայում: Տեղի ակադեմիական ընտրախավը սկզբում կարեկցանքով էր վերաբերում «բոլշևիկյան ռեժիմի զոհ» արհեստակցին, սակայն հելլենիզմի և Հռոմի պատմության հետ կապված Ռոստովցևի հեղափոխական գաղափարները միանգամայն անընդունելի էին բրիտանական համալսարանական պրոֆեսուրայի համար: Դաստիարակված դասա-

կան անտիկագիտության ավանդույթներով այն անվստահություն է հայտնել ռուս գիտնականին, նույնիսկ ժամանակավոր աշխատանք չառաջարկելով նրան: Ռոստովցևի գաղափարները թերևս կարող էին ըմբռնողություն հանդիպել գերմանական ավելի առաջադիմական և արհեստավարժ պատմագետների միջավայրում, առավել ուս, որ իբրև պատմագետ Ռոստովցևը ձևավորվել է հենց այդ միջավայրում, սակայն Գերմանիան Առաջին աշխարհամարտում Ռուսաստանի թշնամին էր, և երբեմնի գերմանասեր պատմաբանը հայտնվել էր ընդգծված հակագերմանական դիրքերի վրա, ինչը հետագայում «շատ վնասեց նրան: Էդուարդ Մեյերը, ըստ որոշ տեղեկությունների, իր ամբիոնը կտակել էր Ռոստովցևին, բայց գերմանական գիտնականները հրաժարվեցին հաստատել այդ պաշտոնում պանգերմանիզմի մարտնչող թշնամուն»<sup>1</sup>.

Համոզվելով, որ խորհրդային կարգերը Ռուսաստանում ամուր են հաստատվել, իսկ անգլիական ակադեմիական միտքը աներեր է իր կարծրատիպերին հավատարմության հարցում, 1920 թ. 50-ամյա Ռոստովցևը տեղափոխվում է ԱՄՆ, որտեղ գրեթե անմիջապես ստանում է Վիսկոնսին նահանգի Մեդիսոնի համալսարանի պրոֆեսորի պաշտոն, այնուհետև 1925 թ. նա հրավեր է ստանում Յեյլի (Նյու Հեյվն) համալսարանից և հաստատվում այնտեղ մինչև 1944 թ.: Առաջին աշխարհամարտից հետո ամերիկյան դասական պատմագիտությունը կատարում էր առաջին քայլերը և Ռոստովցևի պես խարիզմատիկ լիդերի կարիք ուներ: Միացյալ Նահանգներում գիտնականի համար թերևս իր կյանքում առաջին անգամ ստեղծվել էին լիահարմար պայմաններ և նա ընձեռնված հնարավորությունը բաց չթողեց: ԱՄՆ-ում Ռոստովցևը վեր է ապրել ստեղծագործական աննախընթաց վերելք:

<sup>1</sup> Анциферов 1992: 162.

Պետք չէ կարծել, որ Ռոստովցևի գաղափարներն ընդունելի էին Ռուսաստանում: Նույնիսկ նախախորհրդային շրջանում նա առանձնակի ըստ արժանի գնահատված չէր: Պետերբուրգյան անտիկագիտության մեջ այն ժամանակ և հետագայում իշխում էին «սոկոլովյան» ուղղության հետևորդները՝ հայտնի անտիկ բանասիրության մեջ իրենց սերտողական ուսումնասիրություններով և կասկածանքով վերաբերող ամեն տեսակի «նորածնական» նոմոթետիկ տեսություններին: «Սոկոլովյանները» մերժողաբար էին տրամադրված Գերմանիայում սովորած երիտասարդ և խոստումնալից հետազոտողի և նրա մոտեցումների նկատմամբ: Ըստ էության համաշխարհային ճանաչմանը Ռոստովցևը արժանացավ միայն հայրենիքը քելուց հետո: Անտիկ պատմության նշանավոր իտալացի մասնագետ Ա. Մոմիլյանոն այդ կապակցությամբ նկատել է, որ «Ռոստովցևի վտարանդիությունը դարձրել է նրան այն մեծ մարդը, որին մենք գիտենք»<sup>1</sup>: Թերևս Ռոստովցևի ճանաչմանը նպաստել է այն, որ նա սկսել էր գրել և դասախոսություններ կարդալ անգլերեն: Բանն այն է, որ ոուսերենը երբեք չի եղել անտիկագետների լեզու և Ռոստովցևը մինչև 1914 թ. հրապարակում էր իր մենագրություններ ու հոդվածները տարբեր արտասահմանյան հանդեսներում գերմաներեն (հիշեցնենք, որ գերմանական անտիկ ուսումնասիրությունների դպրոցն այդ ժամանակ աշխարհում առաջատարն էր): Սակայն նրա աշխատանքների հիմնական մասը, հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին, հրատարակվում էր ռուսերեն: Բրիտանիա և ԱՄՆ տեղափոխվելուց հետո նա ստիպված եղավ հիմնականում հրապարակվել անգլերեն<sup>2</sup>:

Բացի այդ, Ռոստովցևի ստեղծագործական ժառանգության հետազոտողների կարծիքով, իր ինտելեկտուալ հասունության գա-

<sup>1</sup> Momigliano 1966: 92.

<sup>2</sup> Shi'u Shaw 1992: 217–218.

6100

գաթնակետին պատմաբանը հասավ հենց վտարանդիության տարիներին, քանի որ իր պատմագիտական հայեցակարգի ձևավորման վրա հսկայական ազդեցություն էին թողել 1917–1918 թթ. ողբերգական իրադարձությունները: Ռոստովցևի կենսագիրների կարծիքով պատմաբանը պատկերել է անտիկ տնտեսական համակարգի և արժեհամակարգի փլուզումն ընդհանուր առմամբ նույնական Ռուսական կայսրության փլուզմանը՝ այսպիսով մոդերնացելով մարդկության հին պատմությունը<sup>1</sup>: Միաժամանակ Ռոստովցևի կանխավարկածներից և գուշակումներից շատերն իրենց հաստատումն են ստացել դեռևս ֆրանսիացիների կողմից սկսած Դուրա-Եվրոպոսի պեղումների արդյունքում, որոնց արդեն ոչ երիտասարդ գիտնականը միացավ 1928 թ.: Դեռևս Ռուսաստանում Բոսպորի պեղումների ժամանակ ստացած որոշակի հնագիտական հմտությունների և հելլենիստական իրողությունների փայլուն իմացության և պատմագիտական ներըմբռնողականության շնորհիվ Ռոստովցևը դարձավ հնագիտական աշխատանքների ճանաչված լիդեր՝ այն ղեկավարելով ընդհուպ մինչև նրանց ավարտը 1937 թ.: Պեղումների արդյունքները ցնցող էին և վտարանդի գիտնականին բերեցին մեծ համբավ<sup>2</sup>:

Ռոստովցևի հաջողությունները նրա առջև բացեցին բրիտանական ակադեմիական աշխարհի դռները, 1930-ականների սկզբից նրան սկսում են հրավիրել Քեմբրիջ, հելլենիզմի և հռոմեական պատմության մասին դասախոսություններ կարդալու և համատեղ գիտական նախագծերին մասնակցելու համար: Ռոստովցևին հաջողվեց կոտրել Բրիտանական ակադեմիական աշխարհին բնորոշ թերահավատ մթնոլորտը հելլենիզմի և հելլենիստական հետազոտությունների նկատմամբ: Նրա ներդրումը հուշակավոր Քեմբ-

<sup>1</sup> Momigliano 1966: 100; Dow: 549–550; Wes 1990: 26.

<sup>2</sup> Миллар 1996: 184–187; Мэтесон 1992: 130–139.



րիջյան հոռմեական և հատկապես հեյլենիստական ուսումնասիրությունների դպրոցների կայացման գործում անգնահատելի է: Աշխարհի տարբեր երկրներում Ռոստովցևը արժանացել է ամենաբարձր ակադեմիական տիտղոսների: Համարվում է արևմտյան հեյլենիստագիտության նահապետներից մեկը<sup>1</sup>:

Մինչդեռ խորհրդային Ռուսաստանում փախստական «սպիտակ պրոֆեսորին» շփում էին գաղափարախոսական կեղտաջրերով, իսկ նախկին կոլեգաները պահում էին այնպես կարծես երբեք չեն լսել նրա մասին, Արևմուտքում, հատկապես Ամերիկայում և Ֆրանսիայում, անգլերեն հրատարակված նրա վիթխարի բազմահատոր աշխատությունները դարձել էին դասական և հիմնարար Հոռմեական և հատկապես հեյլենիստական քաղաքակրթությունները հասկանալու համար: Ռոստովցևը ցույց է տվել հեյլենիստական աշխարհի համայնապատկերը՝ Արևմուտքից Արևելք, ընդլայնելով նրա ժամանակային և տարածքային սահմանները, բացահայտել շատ երևույթների բուն էությունը, ցույց է նախկինում հունա-մակեդոնական զավթիչների կողմից Արևելք ներմուծված համարվող շատ ինստիտուտների տեղական ծագումը և բնույթը: Նա ավելի սուր քան դասական հնության հետազոտողներից շատերը հարց է դրել հունական գաղութացման «երկկողմանիության» մասին ինչպես Հյուսիսային Մերձսևծովյան, այնպես էլ այլ հեյլենիստական երկրներում: Նա առաջ է քաշել պատմագրության առանցքային հարցեր, որոնք մաթեմատիկայում համադրելի են չլուծված «Հիբերտի յոթ հիմնախնդիրների» հետ: Ռոստովցևի առաջադրած հեյլենիզմի հիմնախնդիրների թվում են պետության տեղն ու դերը հեյլենիստական և հոռմեական հասարակությունների տնտեսական կյանքում, պոլիսի և տերունական իշխանության հակամարտությունը և փոխհամագործակցությունը, հեյլենիստական պետությունները

րի և Հոռմեական աշխարհակալ տերության հարաբերությունները, կախման ճևերը՝ փոքրասիական լաոյների և կոլոնների օրինակով, անտիկ աշխարհի փոխհարաբերության խնդիրները բարբարոսական ցեղերի հետ, հեյլենիզմի սաղմնավորման հարցը Բուսպորում, համապարփակ և տեղական պատմագրության փոխհարաբերությունների խնդիրները և այլն:

Պատճառներից մեկը, թե ինչու Ռոստովցևի աշխատություններն առաջացնում էին ոչ միայն խորհրդային կուսակցականացված պատմագիտության ծայրահեղ հակակրանքը այն է, որ ի տարբերություն բազմաթիվ անտիկագետների, նա չէր սևեռվում մասնավորությունների վրա, չէր տարվում բանասիրական մանրագնություններ (թեպետ փայլուն գիտեր դասական լեզուներ), չէր վախենում լայնարձակ ամփոփումներից, միշտ գրում էր համարձակ վրձնահարվածներով, ստեղծելով Հին դարերի պատմության բազմակողմ և բազմերանգ համապատկեր:

Նոմոթետիկ հարցերը հետաքրքրում էին Ռոստովցևին իր գիտական ուղղու առաջին իսկ քայլերից: Դեռևս մինչև մագիստրոսական թեզի պաշտպանելը նա, երիտասարդությանը բնորոշ ավյունով, ներգրավվել էր անտիկ աշխարհի տնտեսական պատմության երկու խոշորագույն մասնագետների վեճին: Երկուսն էլ գերմանացիներ էին՝ Կարլ Բյուխերը<sup>1</sup> և Էդուարդ Մեյերը<sup>2</sup>: Նրանցից առաջինը պնդում էր, որ մարդկությունը զարգանում էր առաջադիմորեն, փուլային եղանակով՝ տնային (բնամթերային, առանց փոխանակման) տնտեսությունից դեպի քաղաքային տնտեսություն (ուղիղ փոխանակության շրջան), այնուհետև դեպի պետական տնտեսության և վերջապես դեպի համաշխարհային (կամ ժողովրդական) տնտեսություն, որը ենթադրում է զարգացած տնտեսություն և փոխա-

<sup>1</sup> Алипов 2009.

<sup>1</sup> Бюхер // Энциклопедический словарь Брокгауза и Ефрона 1891: Том V.

<sup>2</sup> Мейер 2003.

նակման հարանշանների օգտագործման եղանակներ: Ողջ հին շրջանը նա դիտարկում էր որպես տնային (բնամթերային) տնտեսություն: Էդուարդ Մեյերը համարում էր, որ արդեն այդ ժամանակ կար կապիտալ և այն տնտեսության մեջ ուներ մեծ դերակատարություն տնտեսության մեջ, իսկ տնտեսական զարգացումն ընթանում էր ոչ թե առաջադիմորեն, այլ շրջափոխվելով: «Կապիտալիզմը և հին աշխարհի տնտեսությունը» Ռոստովցևը հունա-հռոմեական աշխարհի տարբեր տնտեսական միտումների վերլուծության փորձ է արել և եկել եզրակացության, որ Հռոմեական հանրապետությունը եղել է «անպտուղ, սպեկուլյատիվ կապիտալիզմի» շրջան, մինչդեռ հելլենիստական և Հռոմեական կայսրության վաղ շրջանները եղել են Անտիկ աշխարհի «զարգացած կապիտալիզմի» ժամանակաշրջան: Սակայն, Ռոստովցևյան ինտելեկտուալ հորինվածքի համաձայն Հռոմեական կայսրության վերջնաշրջանը դառնում կապիտալիզմի վերածնամբության ժամանակ տնային տնտեսության<sup>2</sup>: Այս ծրագրային հողվածում Ռոստովցևը աներկբայորեն հանդես է գալիս Մեյերի մշակած քաղաքակրթական տեսության դիրքերից, իսկ Անտիկ դարաշրջանը դիտարկում է, իբրև ինքնամփոփ և ավարտուն շրջափոխ:

Այսպես, Ռոստովցևը զգալիորեն ընդլայնել էր հելլենիստական աշխարհի սահմանների ընկալումը, դրա մեջ ընդգրկելով Բոսպորի թագավորությունը, Փոքր Ասիայի որոշ հատվածները, որոնք մինչ այդ չէին ճանաչվում որպես հելլենիստական աշխարհի մաս: Հելլենիստական երկրների թվին նա դասել էր նաև Սիրակուզյան տիրան Հիերոն Բ-ի պետությունը Սիկիլիայում: Այդ բոլոր տարածքները երբևիցե չեն նվաճվել Ալեքսանդրի կողմից և բնավ չեն եղել մակեդոնական պատմության մասը: Բայց, ինչպես գրում էր ինքը՝

<sup>1</sup> Немировский 1980: 144–145.

<sup>2</sup> Ростовцев 1900: 217.

Ռոստովցևը, դրանք «իրենց կառուցվածքով և քաղաքակրթությամբ եղել են հունական» և այդ առումով չէին տարբերվում մնացած ողջ հելլենիստական աշխարհից: Սակայն Ռոստովցևը նախագգուշացնում էր, որ հելլենիզմի պատմությունը երբեք չի կարելի նույնացնել որոշակի դարաշրջանի համաշխարհային պատմության հետ, քանի որ հելլենիստական աշխարհը արևելքում և արևմուտքում եզերվում էր պետությունների երկու ընդարձակ գոտիներով (Իտալիա, Սիկիլիայի մեծ մասը, Կարթագեն, Հնդկաստանի մեծ մասը, Չինաստան, Պարթևստանի արևելյան հատվածները, Հարավային Արաբիա, Մերոե): Սրանք, ճիշտ է, հելլենիստական աշխարհի հետ գտնվում էին սերտ շփման մեջ և պահպանում էին իրենց քաղաքական, հասարակական և մշակութային ինքնատիպ կառույցները: Բացի այդ, ըստ Ռոստովցևի, հելլենիստական աշխարհի ծիրից դուրս մնացին բազում «բարբարոսական» ժողովուրդներ՝ սկյութներ, սարմատներ, կովկասյան ժողովուրդներ, թրակիացիներ, իլլիրիացիներ, կելտեր, իբերներ և այլք:

Ինչ վերաբերում էր «*հելլենիստական աշխարհ*» ընդարձակ հասկացությանը, Ռոստովցևն այն բնութագրում էր որպես պետությունների և երկրների միասնական համակարգ, որին բնորոշ են սերտ քաղաքական և հասարակական-տնտեսական կապեր: Ըստ Ռոստովցևի, այդ պետությունների հիմքը կազմում են պոլիսները և ձեռներեց «բուրժուական դասակարգը» (առևտրականներ, համքարներ, կլերիկներ, միջին և խոշոր հողատերեր): Վերջինս ապահովում էր հելլենիստական պետությունների գլխավոր հենարանները և ապահովում հելլենիստական աշխարհի քաղաքական և տնտեսական կայունությունը, նպաստում հելլենիստական մշակույթի և ապրելակերպի տարածումը: Արևելքի նվաճումը բացեց նոր շուկաներ և ստեղծեց գործունեության ընդարձակ դաշտ, հելլենիստական աշխարհը հասավ ծաղկմանը, սակայն, Ռոստովցևի համոզմամբ,

որոշ ժամանակ անց քաղաքական կայունության խաթարման և «արևելյան ռեակցիայի» սաստկացման պատճառով հելլենիստական քաղաքակրթությունը մարել էր: (Թեև մենք դժվար համաձայնվենք ավանդական այն կարծիքին, որ Ք.ա. 31 թ. հելլենիստական քաղաքակրթությունը վերացավ: Ավելի հարիր է ասել, որ այդ ժամանակ հելլենիստական քաղաքակրթությունը ստացավ հուժկու, բայց ոչ մահացու հարված Հռոմից: Կերպարավորվելով հելլենիզմը ոչ միայն պահպանվեց, այլև իր մեջ ձուլեց հռոմեական քաղաքակրթությունը):

Կատարելով հելլենիստական երկրների հասարակական-տնտեսական կյանքի խորագույն և բազմակողմանի ուսումնասիրություն, Ռոստովցևն ընդհուպ մոտեցավ հելլենիստական սինկրետիզմի բազմակողմանի ընկալմանը: Հատկապես մեծ է Ռոստովցևի դերակատարությունը հելլենիզմի հասարակական-տնտեսական համադրականության գաղափարի մշակման գործում: Հելլենիստական քաղաքակրթության համադրական բնույթն ընդգծելու համար նա ակտիվ շրջանառության մեջ է մտցրել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հելլենիստական ավատատիրություն և ավատատիրական ասպետություն, լեննային հարաբերություններ, հելլենիստական, ինչպես նաև հռոմեական բուրժուազիա, պրոլետարիատ, լյուսպեն-պրոլետարիատ և այլն: Միխայիլ Ռոստովցևը «Հելլենիզմի հասարակական և տնտեսական աշխարհը» հիմնարար աշխատության մեջ<sup>1</sup>, հելլենիստական քաղաքակրթությունը հիմնականում ներկայացնում է իբրև էկլեկտիկ հասարակական-տնտեսական միջավայր, որտեղ երբեմն ներդաշնակվում, երբեմն էլ իրար են բախվում նահապետական, թագավորական, պատրիմոնալ, ավատատիրական և պոլիսային-բուրժուական հարաբերությունները:

<sup>1</sup> Rostovtzeff 1941.

Այդ գաղափարները թեև սկզբում անակնկալի բերեցին արևմտյան հետազոտողներին, սակայն հետագայում գրեթե անվերապահորեն ընդունվեցին շատ առաջատար անտիկագետների կողմից: Նոր մոտեցումները մեծ ազդեցություն թողեցին քեմբրիջյան պատմա-տնտեսագիտական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներ Վ. Թարնի, Ֆ. Ուոլբանքի<sup>1</sup> և, ինչու չէ, Ա. Թոյնթրիի պատմագիտական հայացքների վրա: Քեմբրիջյան պատմագիտական դպրոցը միշտ հենվել է անգլոսաքսոնական տնտեսագիտական մտքի նվաճումների վրա և գտնվել է առաջատար դիրքերում<sup>2</sup>: Դրան զուգահեռ Քեմբրիջյան դպրոցին ի սկզբանե բնորոշ էր հելլենիստական քաղաքակրթությունը որպես ամբողջության ընկալում, մինչդեռ Օքսֆորդյան դպրոցը, հարկավ գերմանական պատմագիտական դպրոցի նմանությամբ<sup>3</sup>, աչքի էր ընկնում իր թարգմանչական և մեկնողական մոտեցմամբ<sup>4</sup>: Քեմբրիջյան դպրոցի և հատկապես Ռոստովցևի հետազոտական մեթոդները կիսում էին նաև Ֆ. Հայխելիայմ<sup>5</sup>, Վ. Էրենբերգը<sup>6</sup>, Ա. Մոմիլյանոն<sup>7</sup> և XX դ. այլ ակադեմիկոս պատմաբանները: Անգլիական դպրոցի այդ մոտեցումները սկզբում մերժած ֆրանսիական պատմաբանները այնուհետև ըն-

<sup>1</sup> Walbank 1952: 33.

<sup>2</sup> Ավստրիացու օրինակը կարելի է համարել «The Cambridge Ancient History» (1928–1938) և «The Cambridge Economic History of Europe» (Cambridge, 1952. Vol. 2) կոլեկտիվ հիմնարար աշխատությունները:

<sup>3</sup> Գերմանիայում իսկապես, սկսած 19-րդ դարից, ավելի զարգացած էր պատմա-բանասիրական, մինչդեռ Ֆրանսիայում և Իտալիայում պատմա-մշակութային ուղղվածությունները:

<sup>4</sup> Ավստրիացու բնավ չի նշանակում, որ Քեմբրիջում անտեսված էր թարգմանչական և մեկնողական դպրոցը: Օրինակ տես՝ Headlam & Knox 1922 (նոր հրատարակությունը լույս տեսավ 1966 թ.): Gow 1952 և իհարկե Ֆ. Ուոլբանքի հանրահայտ աշխատությունները հելլենիստական պատմագրության և հատկապես Պոլիբիոսի վերաբերյալ Walbank 1957–1979; Idem 1933; idem 1936: 64–71.

<sup>5</sup> Heichelheim 1925; idem 1968.

<sup>6</sup> Ehrenberg 1958; Idem 1938.

<sup>7</sup> Momigliano 1955–1992: 172.

տելացան նոր գաղափարներին և սկսեցին դրանք լայնորեն կիրառել իրենց հետազոտություններում<sup>1</sup>:

Ինչպես և կարելի էր սպասել, խորհրդային պատմագիտությունը մերժել էր Ռոստովցևի տեսական եզրահանգումները, դրանք որակելով որպես «բուրժուական մոդեռնացում»<sup>2</sup>, այլ կերպ ասած, ժամանակակից երևույթների և հասկացությունների էքստրապոլացիա ստրկատիրական և ավատատիրական հասարակական-տնտեսական հասարակարգերի վրա: Խորհրդային պատմագիտության համար նման վերաբերմունքը վտարանդի գիտնականի գաղափարների հանդեպ բնական էր և օրինաչափ, քանի որ դրանք հակասում էին մարքսիզմին բնորոշ պատմական ժամանակի գծային-փուլային ընկալմանը: Դա բացառում էր տարբեր դարաշրջաններում երևույթների և իրավիճակների շրջափուլային կրկնությունը, կամ էլ դրանք դիտում լուկ որպես պատահականություն: Խորհրդային պատմաբանները թեև ընդունում էին, որ հելլենիստական դարաշրջանում իսկապես բուռն թափ առավ ապրանքային արտադրանքը, ինչն իր հերթին խթանեց առևտրի զարգացումը և դրամափոխանակության շրջանառությունը, նաև վարձու աշխատանքի ամենալայն և բազմակողմանի կիրառումը, այնուամենայնիվ դա բավարար հիմք չհամարվեց երևույթները բուրժուական հարաբերությունների սաղմնավորման և զարգացման հետ կապելու համար<sup>3</sup>: Բացի այդ, մարքսիստական պատմագիտության համար, օրինակ, անընդունելի էր Ռոստովցևի արված համեմատությունները Եգիպտոսի և Խորհրդային պետության միջև<sup>4</sup>: Ինչպես և կարելի էր սպասել, խորհրդային պատմագիտությունը սկզբում Ռոստովցևի գաղափարները հայտարարեց վնասակար և

ենթարկեց խիստ քննադատության<sup>1</sup>, իսկ հետագայում աշխատում էր դրանց ուղղակի չանդրադառնալ:

Սակայն անգլիական և ամերիկյան շատ ուսումնասիրողներն այդ գաղափարները ևս համարեցին չափազանց համարձակ<sup>2</sup>: Մարքսիստ պատմաբանների նման նրանք խիստ քննադատեցին Ռոստովցևի և Հայխելհայմի<sup>3</sup> այն պնդումը, որ կապիտալիստական և սոցիալիստական արտադրածները<sup>4</sup>, ինչպես և դրանց միջև հակասությունները շատ ավելի հին են, քան ընդունված էր կարծել: Դրանք բնավ XIX դարի արգասիքը չեն<sup>5</sup>:

Իսկ ընդհանուր առմամբ շարունակում էին իշխել դոյզենյան պատմագիտական հոլացքները<sup>6</sup>: Անգամ Վիլյամ Թարնի պես առաջադեմ և բանիմաց պատմաբանը սկզբունքորեն շատ չհետացավ հելլենիզմի ուսումնասիրության նահապետի մշակած հարացույցներից: Ճիշտ է, իր հանրահայտ «Հելլենիստական քաղաքակրթություն»<sup>7</sup> (1927 թ.) աշխատության մեջ Թարնը որոշակիորեն ավելի լայն է մեկնաբանում հելլենիստական դարաշրջանի հետ առնչվող երևույթները և, բացի այդ, լինելով Թոյնթրիի և Ռոստովցևի ժամա-

<sup>1</sup> Шофман 1972: 5; Шестаков 1963: 19; Кошеленко Г.А. Указ. соч. С. 38.

<sup>2</sup> Badian 1964; Baldry 1965.

<sup>3</sup> 1938 թ. Ֆրից Հայխելհայմը (Fritz Heichelheim) հրատարակեց երկատորանոց ծավալուն աշխատություն «Հին աշխարհի տնտեսական պատմություն պայթիթից մինչև գերմանների պալոնների և արարների գաղթը» (Wirtschaftsgeschichte des Altertums von Pala-oliticum bis zur Volkerwanderung der Germanen, Slaven und Arabes). որը սակայն իր ոչ ավանդական մոտեցումների պատճառով երկար ժամանակ մնաց մերժված գերմանական գիտական հանրության կողմից:

<sup>4</sup> Պետական սոցիալիզմի հասկացությունը իրենց աշխատություններում կիրառել են պատմագիտության և սոցիոլոգիայի այնպիսի դասականները, ինչպիսիք Ռ. Պեյմանը, Մ. Վեբերը, Ե.Ա. Վիտֆոգելը (Вебер 1925; Heichelheim 1930 (1979); idem 1938 (1969); Wittfogel 1957): Կույն գաղափարները սկսեցին ակտիվորեն շրջանառվել նաև խորհրդային վերջին շրջանում: Стів Шарапеннидзе 1986; Козырева 1988; Стариков 1996.

<sup>5</sup> Finley 1973; ibid. 1980.

<sup>6</sup> Стів ТшерикOVER 1927; Cary 1932.

<sup>7</sup> Тарн 1949.

<sup>1</sup> Cloche 1961; Petit 1965; Бикерман 1985.

<sup>2</sup> Стів Немировский 1980: 194–195; Кошеленко 1980: 250–254; Крих 2003: 94–105; Он же 2005: 67–87.

<sup>3</sup> Кошеленко 1979: 45.

<sup>4</sup> Rostovtzeff 1928.

նակակից ու գործընկերը, նա օգտագործում է նորաձև «քաղաքակրթություն» եզրը, այնուամենայնիվ նրա հելլենիզմի ընկալումներն էապես չեն տարբերվում նախորդ սերնդի պատմաբանների ընկալումից: Թարնի աշխատության անվիճելի առավելություններից է այն, որ մշակութային փոխազդեցություններից զատ նա նաև քննել է հելլենիստական երկրների քաղաքական և հասարակական կազմակերպման ձևերի ընդհանրություններ: Այն օրինակներով պարզաբանելու համար Թարնը անդրադառնում է այնպիսի երևույթներին, ինչպիսիք էին Արևելքում պոլիսային ձևերի համատարած հաստատում, պոլիսի քաղաքական բաղադրյալի կերպափոխում, հելլենիստական միապետությունների առանձնահատկություններ, հունա-մակեդոնական և տեղական բնակչության փոխհարաբերություններ, տնտեսական կյանքի որոշ առանձնահատկություններ և այլն:

Համադրական հելլենիստական քաղաքակրթության խնդիրներին անդրադարձել է ականավոր պատմաբան Առնոլդ Թոյնբիին (1889–1975): Թոյնբին ծնվել է Լոնդոնում վիկտորյական «Ոսկեդարի» մայրամուտին և երիտասարդ տարիներին ականտես է եղել Բրիտանական կայսրության աստիճանական մարմանը, ինչը մեծ ազդեցություն է թողել դարի այդ խոշոր մտածողի պատմագիտական հայացքների վրա: Թոյնբին ապրել է երկար կյանք, ինչը շատ օգտակար է պատմաբանի համար: Ի տարբերություն մաթեմատիկոսների և ֆիզիկոսների, որոնք իրենց հայտնագործությունները հիմնականում կատարում են երիտասարդ տարիքում, փիլիսոփայող պատմաբանին կայացածն անհամար պետք է ժամանակ: Թոյնբին տեսել է անհանգիստ 20-րդ դարի երեք քառորդ: Սակայն փոթորկոտ քսաներորդ դարը չչեղեց Թոյնբիին ընտրված ուղուց: Ավելին, դինամիկ և անհանգիստ դարաշրջանն օգնեց Պատմաբանին նորովի նայել անտիկ պատմությանը: Ուսումնասիրողները վաղուց

նկատել են, որ Թոյնբիի կոտ պատմիմաստասիրական կառույցի հիմքում ընկած է անտիկ քաղաքակրթության մոդելը: Հայտնի հռլանդացի պատմաբան դեն Վոյեգը, քննադատելով Թոյնբիի մոտեցումները գրում էր, որ վերջինս շատ է տարված անտիկայով և իր պատմագիտական սխեմաները գծելիս տարբեր քաղաքակրթությունները դիտարկում է հելլենիստական քաղաքակրթության հետ համադրության մեջ: Ինքը՝ Թոյնբին առանց վարանելու պատասխանում էր, որ դասական քաղաքակրթությունն իր համար չափանիշ է և մյուս քաղաքակրթությունները նա երբեմն իրոք չափում է անտիկ քաղաքակրթության համեմատության մեջ<sup>1</sup>:

Իր տասներկու հատորանոց «Պատմության յուրացում» աշխատության մեջ Թոյնբին մշակել և շրջանառության մեջ է մտցրել հելլենիզմի սկզբունքորեն նոր՝ իսկապես քաղաքակրթական հղացք<sup>2</sup>: Այդ ընկալման հիմքում ընկած է պատմական ժամանակի շրջափոխային հղացքը: Թոյնբիի աշխատությունների մեջ հելլենիզմը ներկայացված է որպես ինքնուրույն ու ինքնարժեք քաղաքակրթություն և ոչ անտիկ Հունաստանի քաղաքակրթական սովեր՝ կարծես պատահաբար ընկած Արևելքի վրա: Մյուս կողմից Թոյնբին զգալի ներդրում ունեցավ անտիկ աշխարհի ուսումնասիրության գործում: Նա ի մի բերեց և արժևորեց մեծ քանակությամբ էմպիրիկ նյութեր, տվեց անտիկ քաղաքակրթության բացառիկ պատմական բնութագիր, ի տարբերություն Շպենգլերի՝ այն դիտարկելով որպես հասարակական կատեգորիա:

Սակայն սկսած XX դ. կեսերից Թոյնբիի գաղափարներն Արևմուտքում սկսում են կորցնել երբեմնի գրավչությունը: Արևմտյան հեղինակներից շատերը Ա. Թոյնբիի աշխատություններն իրենց համապարփակ պատմիմաստասիրական քաղաքակրթական մոտե-

<sup>1</sup> Сепрев 1983.

<sup>2</sup> Toynbee 1959: 108.

ցումներով հայտարարում են «ժամանակավրեպ»: Փոխարենը եվրոպական և ամերիկյան պատմագիտության մեջ ակնհայտորեն դրսևորվեցին միտումներ վերադառնալու XIX դ. վերջին և XX դ. առաջին քառորդներում գերիշխած *պատմականության* մեթոդի: Հատկապես կատաղի գրողի Թոյնթին ենթարկվեց այսպես կոչված լոնդոնյան տնտեսագիտական դպրոցի The (London School of Economics and Political Science) ներկայացուցիչների կողմից<sup>1</sup>: Անգամ այնպիսի անկաշկանդ մտածող պատմաբան, ինչպիսին «Աննալների» դպրոցի հիմնադիր Լ. Ֆերը հեզնում էր Ա. Թոյնթիի աշխատությունը, այն դասելով «մեռածների երկխոսության» ժանրին, որը «կատակերգական լավատեսության» արդյունքն է: Այդ որակավորումը, հարկավ, կարելի է ընկալել ոչ թե որպես ծաղրանք, այլ իբրև բարձրագույն դրվատանք, քանի որ մարդկային պատմությունը հիրավի թատրոն է՝ համակված «կատակերգական լավատեսությամբ» կամ, միգուցե այն «լավատեսական ողբերգություն է»<sup>2</sup>: Հատկանշական է 1950–1960-ականների արևմտյան պատմագիտության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության մեջ լայն տարածում գտած կարգախոսը՝ «մոռանալ Թոյնթին», «դուրս պրծնել պատմության փիլիսոփայական մտացածին կառույցների տեսության ծուղակից»<sup>3</sup>: Սակայն պատմագիտությունը չի կարող հրաժարվել նյութի «խաղարկումից» և տեսական ընդհանրացումից, հակառակ դեպքում այն կդառնա տաղտուկ և անիմաստ: Եվ ահա հայտնվում են նոր «արդի» տեսաբաններ: Բայց Թոյնթին մերժող այդ «քաղաքակրթական առաքյալները» ակամայից շարունակում են (գիտակցում են նրանք դա, թե ոչ) մտածել և վերլուծություններ անել «թոյն-

<sup>1</sup> Kedourie 1970; 1984.

<sup>2</sup> Մահվանից մի քանի տարի առաջ նա գրել է. «Սիրո կանչը միշտ ինձ համար ուղեկցվելու է հետաքրքրասիրության ներքին մղումով: Ինձ հետաքրքիր է իմանալ ինչպիսին կլինի մարդկային պատմության դրամայի ներկայիս գործողության հանգուցալուծումը» (Тойнби 2003):

<sup>3</sup> Гарбар // <http://www.berkovich-zametki.com/Nomer18/Garbar2.htm>

բիյան» ոճով<sup>1</sup>, ուղղակի ավելի նեղ և սահմանափակ կատեգորիաների շրջանակներում:

Տեսական ընդհանրացումներից խուսանալու մեջ էր կարող անդրադարձ չունենար հելլենիստական ուսումնասիրությունների վրա: Համալսարանական միջավայրում մասամբ վերահաստատվեցին հելլենիզմի նախադրոյզենյան ընկալումները՝ առանձին պատմաբաններ կրկին սկսեցին հելլենիզմը դիտարկել որպես աղճատ հունականություն, որը էական հետք չի թողել մարդկային պատմության մեջ և ընդամենը նահանջ էր՝ նախորդ պանծալի դասական դարաշրջանի համեմատ: Փոխարենը առաջնությունը կրկին տրվեց ոչ համադրական մաքուր և հասկանալի քաղաքակրթական ձևերին՝ օրինակ Հռոմին, որն իրավամբ ընկալվում էր իբրև զուտ արևմտյան քաղաքակրթություն: Դրան հակառակ հելլենիզմը հայտնվեց խորհրդային պատմագիտության ուշադրության կենտրոնում, մի բան, որ շատ բնական է, եթե հաշվի առնենք, որ Հին Հռոմը բոլորի կողմից ընկալվում էր իբրև ներկայիս արևմտյան քաղաքակրթության ակունք, մինչդեռ հելլենիզմը ճանաչվեց մայր քաղաքակրթություն բյուզանդական ու եվրասիական այլ քաղաքակրթությունների համար:

Երկրորդ աշխարհամարտից հետո հելլենիստական ուսումնասիրությունները Անգլիայում որոշակիորեն փոխեցին իրենց բնույթը: Խոշոր կտավները, հատկապես տեսական բնույթի, կտրուկ նվազեցին, փոխարենը շատացան մասնավոր խնդիրներին նվիրված հոդվածներ: Զգալի առաջընթաց արձանագրվեց հնագիտության, դրամագիտության և այլ նեղ մասնագիտական բնագավառներում<sup>2</sup>: Հեղինակների մեծ մասն իրենց հետազոտություններում շարունակում էին հենվել ռազմա-քաղաքական նյութի վրա,

<sup>1</sup> Այդ:

<sup>2</sup> Այդ մասին տես՝ Тимофеева 1981: 14–15; Гайфуллин 1991.



որը նախորդ շրջանի պատմաբանների կողմից առանց այդ էլ բավականին լավ ուսումնասիրված և մշակված էր:

Մերժվեց Ռոստովցևի համադրականության գաղափարը ոչ միայն Հոռմի, այլև հելլենիստական աշխարհի տնտեսության բնութագրման համար: Այսպես, եթե նախկինում արևմտյան հելլենիստական գիտության մեջ (Հայխեհայմ, Թարն, Ռոբինսոն, Մոմիլյանո և այլք) գերիշխում էր այն կարծիքը, որ հելլենիստական Եգիպտոսում առկա էր պլանային տնտեսություն և անգամ պետական կապիտալիզմի և սոցիալիզմի առանձին դրսևորումներ, ապա այժմ ապացուցվում է, որ Եգիպտոսում տնտեսության պլանավորումը չուներ էական նշանակություն, պայմանավորված չէր հին ավանդույթներով և թխում էր հարկային համակարգի առանձնահատկություններից<sup>1</sup>:

Բացի այդ, հետազոտողներից շատերը շարունակում էին հույներին դիտարկել որպես արևմտյան քաղաքակիրթ գաղութարարների, իրենց էությանը խորթ տեղի բնակչությանը, որն իր հերթին միշտ ձգտում էր հակազդել նվաճողներին և վերջ տալ նրանց քաղաքակրթական ազդեցությանն Արևելքի վրա: Այստեղից էլ այդ շրջանում եվրոպական պատմագիտության մեջ լայն տարածում գտած «արևելյան ռեակցիայի» կարծրատիպը: Ըստ դրա, Ք.ա. II դարում, առանց այդ էլ թուլացած և իր ներքին ռեսուրսը սպառած հելլենիզմը վերջնական վախճան գտավ մի կողմից հռոմեական նվաճումների և մյուս կողմից «արևելյան հակազրոհի» պատճառով: Վերջինս, ըստ եվրոպական հետազոտողների, լայնածավալ շարժում էր, որը սկսվել էր քայքայվող հելլենիստական կայսրությունների տարածքում Հուդայում, Պոնտոսում, Հայաստանում, Պարթևստանում, Բակտրիայում, Հնդկաստանում և այլուր: Այդ հղացքը, երբեմն զգուշորեն և զգալի վերապահումներով, երբեմն՝ ծայրահեղ

<sup>1</sup> Crawford 1971.

դրսևորմամբ, բնորոշ է Վ. Թարնի<sup>1</sup>, Զ. Վուդքոքի<sup>2</sup> և այլոց աշխատանքներին<sup>3</sup> (միակ բացառությունն այդ շրջանում թերևս կազմում է Ա. Թոյնբիի վերջին գործերից մեկը)<sup>4</sup>:

Բացի այդ, արևմտյան ուսումնասիրողները տեսելով հելլենիզմի նախադրյալները դեռևս դասական շրջանի Հունաստանում, իսպառ մերժում էին արևելյան նախահելլենիզմի գաղափարը: Ըստ էության, նրանք չէին տեսնում կամ հաշվի չէին առնում հին արևելյան քաղաքակրթությունների բարդ և համադրական բնույթը: Համոզված լինելով, որ Արևելքի ժողովուրդները պատրաստ չէին հելլենիզմի գալստյանը, որը մինչև վերջ խորթ մնաց տեղի ժողովուրդների մտքին և սրտին, հետազոտողների մեծ մասը Արևելքում հելլենիստական քաղաքակրթության հաղթական երթի, եթե ոչ միակ, ապա գլխավոր շարժառիթը տեսնում էին Ալեքսանդրի կամային հատկանիշների և հունական ոգու արարչագործ բնույթի մեջ<sup>5</sup>: Նման ընկալումն անխուսափելիորեն պետք է հանգեցնեի Ալեքսանդրի կերպարի բացարձակացմանը<sup>6</sup>: Ուսումնասիրողների գործերում վերջինս հանդես է գալիս ոչ միայն որպես «կուլտուրգետեր»<sup>7</sup>, այլև դիվային կրքերի և միաժամանակ սթափ ողջամտությանը օժտված գերմարդ, որը գիտակցում է իր առաքելությունը հունականության տարածման և նոր մշակույթի ստեղծման գործում<sup>8</sup>:

<sup>1</sup> Tam 1984. P. 183.

<sup>2</sup> Woodcock 1966.

<sup>3</sup> Banerjee 1961; Narain 1957 (repr. by Oxford, 1962, 1967, 1980); idem 1976; National Geographic Magazine, Oct. 1981, 7; Holt 1989; Puri 2000; Vassiliades 2000; Seldeslachts 2003. (Also available online): Iranica Antica, Vol XXXIX, 2004.

<sup>4</sup> Toynbee 1961.

<sup>5</sup> Уилер 1972; Worthington 1994.

<sup>6</sup> Wilcken 1931 (repr. München, 1990. S. VIII; idem 1932, 1967, 1997: Ուիլքենի պատմագիտական հայացքների մասին տես նաև՝ Шофман 1976: 23.

<sup>7</sup> Уилер 1972.

<sup>8</sup> St' u Burn 1962; Brunt 1962: 141–155; idem 1965: 205–215; Fox 1973; Adams, Borza 1982; Wepman 1986; O'Brien 1992. chap. 4, Epilogue.

Վ. Թարնի «Ալեքսանդր Մեծ»<sup>1</sup> և ամերիկացի գիտնական Չ. Ռոբինսոնի «Ալեքսանդր Մեծ: Արևելքի և Արևմուտքի հանդիպումը, համաշխարհային կառավարության և եղբայրության»<sup>2</sup> և մի շարք ուրիշ աշխատություններում<sup>3</sup> Ալեքսանդրը՝ ժամանակակից համաշխարհայնացման գաղափարախոսության ոգով՝ ներկայացվում է որպես «առաջին ինտերնացիոնալիստ», «ժողովուրդների եղբայրության» ջատագով, որը զգալիորեն առաջ անցավ իր ժամանակից<sup>4</sup>: ԳՖՀ-ի գիտնականները ևս ակտիվորեն մշակել են Ալեքսանդրի, իբրև «համապարփակ եղբայրության» գաղափարի ջատագովի և այն կյանքի կոչած առաջին պետական գործչի կերպարը<sup>5</sup>:

Միաժամանակ շարունակելով Դրոյզենյան ավանդությունը, արևմտանվորոպական պատմաբաններն այսօր էլ սևեռվում են Ալեքսանդրի ներաշխարհի ուսումնասիրության վրա<sup>6</sup>: Հետաքրքիր է, որ տարիների ընթացքում Ալեքսանդրի անձի նկատմամբ արևմտյան պատմաբանների հետաքրքրությունը ոչ միայն չի նվազում, այլև հակառակը՝ աճում է: Ավելանում է նաև Ալեքսանդրի կերպարը բացարձակացնող մենագրությունների թիվը<sup>7</sup>: Սակայն դրա կողքին, վերջին շրջանում, հայտնվում են աշխատություններ, որոնցում Ալեքսանդրը ներկայացվում է մերթ իբրև փառասիրական մուլտիպլի խենթացած բռնակալ<sup>8</sup>, մերթ իբրև հիրավի օժտված, բայց անսկզբունքային, սառը հաշվարկով առաջնորդվող քաղաքական գործիչ, որն ամեն գնով ձգտում էր հաստատել իր իշխանությունը

ողջ օյկումենայի վրա<sup>1</sup>: Նման մոտեցման բնորոշ օրինակներից է Ջ. Համիլտոնի աշխատությունը, ում հաջողվել է ստեղծել Ալեքսանդրի անսովոր, բայց ոչ համոզիչ կերպար՝ տարբեր Թարնի և հելլենիզմի մյուս դասականների ստեղծած կերպարներից<sup>2</sup>: Քննարկվում է Ալեքսանդրի և իր յուրայինների փոխհարաբերությունների խնդիրը, Փիլիպոսի դեմ դավադրության նրա մասնակցության աստիճանը, իր արշավանքների բացասական հետևանքները Հունաստանի և Մակեդոնիայի տնտեսական վիճակի համար: Ստեղծվում են հելլենիստական շրջանի գործիչների և առաջին հերթին Ալեքսանդրի հաջորդների նոր պատմական դիմանկարներ<sup>3</sup>, որը եվրոպական պատմագիտության մեջ վաղուց ձևավորված ավանդույթի շարունակությունն էր<sup>4</sup>:

Հատուկ ուշադրության առարկա էր Փիլիպոսի և Ալեքսանդրի<sup>5</sup> և հաջորդ դարաշրջանների հունա-մակեդոնական բանակը, հատկապես դա վերաբերվում էր վարձկան ջոկատներին, որոնց նվիրված էր Գրիֆֆիթի մեծ աշխատանքը<sup>6</sup>: Հետագայում ևս այդ խնդիրը շարունակում էր մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում<sup>7</sup>: Վերջին շրջանում լուրջ քննության առարկա է դարձել արևել-

<sup>1</sup> St'u Griffith 1966; Green 1961, repr. 1990; Milns 1968: 20–25; Welles 1970; Nylander 1993.

<sup>2</sup> Hamilton 1974: 196.

<sup>3</sup> Errington 1969; Badian 1975: 147–170; Ellis 1976; Cawkwell 1978; Perlman 1973; Garoufalas 1979; Grainger 1990; Lund 1992: 200–204; Gabbert 1997; Burstein 1982: 197–212; Pomeroy 1984; Heckel 1992; Carney 1994: 123–131; Billows 1989: 173–206; idem 1990( 2nd edition 1997 (pb.); idem 1993: 249–57.

<sup>4</sup> St'u Bevan 1902; repr. 1966; idem 1927. Reprinted: Chicago: Ares Press. Also available online at <http://tinyurl.com/3kz3n>; Ferguson 1911; Tarn 1913 (Later editions: Oxford University Press, 1969; Chicago: Argonaut, 1969).

<sup>5</sup> Ashley 2004: 13–110; Fuller 1958; Brunt 1963: 27–46; Milns 1966; idem 1976: 87–136; Hauben 197: 55–65; Engels 1978; Bar-Kochva 1979; Head 1982; Sekunda 1994–1995; idem 2002: 388–389; Gaebel 2002: XIV, Reviews: Glenn R. Bugh, BMCR 2002.07.15 || Peter Hunt. Classical Review, 53, 2003: 403–5; Chaniotis 2005. Reviews: Fronda: 2005.08.20.

<sup>6</sup> Griffith 1935: VII.

<sup>7</sup> Parke 1933.

<sup>1</sup> Tarn 1933; idem 1948 (New ed., 2002): 748–822, 112 ff.

<sup>2</sup> Robinson 1947.

<sup>3</sup> Robinson 1953 (HG 356/1.–II.); idem 1932: 353–359; idem 1957; idem 1950; idem 1952: 169; idem 1949: 299–304; idem 1940: 402–412.

<sup>4</sup> Anson 2009: 981–992.

<sup>5</sup> Schachermeyr 1973: 494.

<sup>6</sup> Badian 1962: 80–91; Renault 1975.

<sup>7</sup> Hammond 1980; idem 1981; idem 1997; Briant 1996.

<sup>8</sup> Carney 1981: 149–160; Bosworth 1988; idem 1996.

յան ժողովուրդների դիմադրության խնդիրը հունա-մակեդոնական իշխանությանը: Այդ թեմայով առավել հետաքրքիր է Ս. Էդդիի «Արքան մեռել է...»<sup>1</sup> մենագրությունը:

Դրա հետ մեկտեղ անգլո-ամերիկյան պատմագիտության մեջ լայնորեն ներկայացված էին աշխատանքներ՝ նվիրված հելլենիստական աշխարհի խոշորագույն քաղաքային կենտրոններին. Եգիպտոսի Ալեքսանդրիային<sup>2</sup>, Օրոնտեսի Անտիոքին<sup>3</sup> և ուրիշ: Աճեց ուշադրությունը Եվրոպայի հունամակեդոնական քաղաքային կենտրոնների նկատմամբ<sup>4</sup>: Բալկանյան թերակղզու պատմության խոշոր մասնագետ է համարվում Ն.Ջ.Լ. Համմոնը: Լինելով Գ. Գրիֆֆիթի և Ֆ. Ուոլբանքի տարեկից, նա բավականին ուշ սկսեց զբաղվել ակադեմիական գիտությամբ, քանի որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին որպես գաղտնի գործակալ աշխատում էր Հունաստանում, Մակեդոնիայում և Ալբանիայում: Միայն պաշտոնանկությունից հետո նա վերադարձավ Քեմբրիջ և իրեն նվիրեց գիտությանը: Համմոնի աշխատությունները հիմնականում վերաբերվում են Հունաստանի, Մակեդոնիայի և Էպիրոսի (երկրներ, որտեղ նա անցկացրել է երկար և դժվարին տարիներ) հին պատմությանը<sup>5</sup>:

Անգլո-ամերիկյան պատմագիտության մեջ հելլենիզմի խնդիրներով զբաղվող թերևս վերջին խոշոր ներկայացուցիչը պրոֆեսոր Ֆրենք Ուիլյամ Ուոլբանքն էր (1909–2008), որին Առնալդր Մոմիլյանոն, Ա. Ջոնսի և Ռոնալդ Սայմի հետ մեկտեղ, դասել է XX դարի

<sup>1</sup> Eddy 1961: X.

<sup>2</sup> Fraser 1972; Argyle 1974: 348–350; Bowman 1986; Lewis 1986; Thompson 1988; Samuel 1989.

<sup>3</sup> Downey 1961; Grainger 1990; idem 1991.

<sup>4</sup> Larsen 1968; Hansen 1971; Badian 1980; Allen 1983; Berthold 1984; Gruen 1984; Cartledge / Spawforth 1989; Piper 1986; Errington 1990; Ginouves 1994.

<sup>5</sup> St'u Hammond 1967; idem 1972; Hammond, Griffith 1979; Hammond \ Walbank 1988; Hammond 1996: 99–109, <http://hdl.handle.net>

բրիտանական պատմաբանների «մեծ եռյակի» շարքին<sup>1</sup>: Սակայն ի տարբերություն առաջին երկուսի, Ուիլյամ Ուոլբանքը պատկանում է Քեմբրիջյան անտիկագետների դպրոցին և չէր սահմանափակվում մասնավոր խնդիրների ուսումնասիրությամբ, չէր խորշում պատմական լայն ընդհանրացումներից: Նա ուսումնասիրել է Կ. Մարքսի, Մ. Վեբերի, Վ. Լենինի, Օ. Շպենգլերի, Ա. Թոյնբիի և այլ տեսաբանների գործերը, ակտիվ մասնակցում գիտական բանավեճերի անտիկ և արդի քաղաքակրթությունների ճակատագրերի մասին, մի բան, որ հետագայում մեծապես ազդեց Ուոլբանքի աշխարհայեցակարգի, գիտական հետաքրքրությունների և մեթոդաբանության վրա<sup>2</sup>: Լինելով իսկական բրիտանացի, Ու. Ուոլբանքը, միևնույն ժամանակ վեր էր սնապարծությունից և ազգային սահմանափակությունից, նա զուրկ էր նաև ազգային նախապաշարմունքներից, որոնք երբեմն հանդիպում են տարբեր երկրների ակադեմիական շրջանակներում<sup>3</sup>: Մեծ էր Ուոլբանքի վրա Ռոստոլցևի ազդեցությունը, ինչը ցայտուն արտահայտվեց նրա 1940–1950-ական թթ. գրված մի շարք աշխատություններում, հատկապես անտիկ դասական Հելլադայի քաղաքակրթության անկման պատճառների մասին<sup>4</sup>: Անտիկ պատմության շատ մասնագետների կարծիքով, Ուոլբանքի անվիճելի արժանիքներից էր այն, որ նա կարողացավ միավորել Քեմբրիջյան պատմագիտական դպրոցին բնորոշ հելլենիստական քաղաքակրթությունն իբրև ամբողջականություն ընկալումը, հելլենիստական դարաշրջաններին վերաբերող առանձին տեքստերի փայլուն մեկնաբանման հետ<sup>5</sup>: Նման համակարգված մոտեցումը Ուոլբանքին դասում է ընդհանրացման և մանրամասների վարպետների շարքին: Ողջ աշխարհում նա հայտնի է իբրև Պո-

<sup>1</sup> Momigliano 1984: 1.

<sup>2</sup> Кащеев 1981: 133–139

<sup>3</sup> Кащеев, Шофман 1984: 204–205; Кащеев: 2002: 3.

<sup>4</sup> Walbank 1944: 10–20; idem 1946.

<sup>5</sup> Momigliano 1984: 1.

լիբիոսի<sup>1</sup> և մի շարք այլ հելլենիստական հեղինակների ուսումնասիրող:

Հելլենիստական քաղաքակրթությունը Ֆ. Ուոլբանքը չի համարում տարբեր թագավորությունների և քաղաքների խառնուրդ (mix), ոչ էլ հունական հանճարի դրսևորում, որն իր ազդեցությունն էր թողնում ոչ հունական հասարակության վրա: Անգլիական պատմաբանի կարծիքով հելլենիզմը «*«բազմամշակութային» համակեցության զարգացման օրինակ էր, փարբեր բնակչությամբ, փարբեր ուսայական պատկանելությամբ, բացահայտ դավանող փարբեր կրոններ և ժառանգած փարբեր քաղաքական և հասարակական ավանդույթներ, ժողովուրդներ, որ թեև ապրում են կողք կողքի, բայց իրարից անջատ, միևնույն ժամանակ իրար հետ մտնելով սերտ հարաբերությունների մեջ»<sup>2</sup>:*

Իր հետազոտություններում Ուոլբանքը հատուկ ուշադրություն է դարձնում Հռոմեական աշխարհի և հելլենիզմի փոխհարաբերություններին: Անգլիացի պատմաբանը կարևորելով Հռոմի ռազմական, քաղաքական և տնտեսական ազդեցությունը հելլենիստական աշխարհի վրա<sup>3</sup>, այնուամենայնիվ համարում է, որ հելլենիստական քաղաքակրթության ազդեցությունը Հռոմի վրա հսկայական էր, ինչը չէր կարող չփոխել Հռոմեական քաղաքակրթության բուն էությունը: Ճիշտ է, պահպանողական ուժերը, ինչպես օրինակ՝ հունաստյաց Կատոն Ավագը, կամ էլ՝ հունական մշակույթի նուրբ գիտակ, Պոլիբիոսի պատրոն Սկիպիոն Էմիլիանոսը, մեծ վտանգ էին տեսնում երկու աշխարհների սերտ փոխշփման մեջ, գիտակցելով, որ հելլենական մշակույթն ու հելլենիստական բարքերը անխուսափելիորեն քայքայիչ ազդեցություն կունենան հռոմեական ավանդական ար-

<sup>1</sup> Walbank 1957: Vol. 1; idem 1967: Vol. 2. idem 1979: Vol. 3.

<sup>2</sup> Walbank & Green P. 1990 // Ancient History Bulletin. 1992. Vol. 6. 1. P. 46.

<sup>3</sup> Walbank 1991/1992: 227–246.

ժեքների վրա<sup>1</sup>, սակայն, ինչպես ասում էր Պոլիբիոսը, այդ գործընթացն այլևս հնարավոր չէր կասեցնել<sup>2</sup>: Այսպիսով, ըստ Ուոլբանքի Հռոմը դարձավ «ոչ միայն բեղմնավոր հունական քաղաքակրթության կործանողը, այլև ժառանգը»<sup>3</sup>: Հռոմի շնորհիվ հելլենիստական քաղաքակրթական արժեքների մի սովոր մասը թափանցեց Արևմտյան Եվրոպա<sup>4</sup>, թեև շատերը համարում են, որ հելլենիզմի գլխավոր ժառանգները Բյուզանդիան է և Ուղղափառ աշխարհը:

Որոշ հետազոտողները նշել են նաև Ուոլբանքի գլխավոր աշխատության թերությունները. օրինակ այն, որ նա չի տալիս հելլենիզմի հստակ սահմանում<sup>5</sup>, բավարար չափով չի լուսաբանում հույների և տեղական արևելյան ժողովուրդների մշակույթների բարդացումն ու փոխհարստացումը, չափազանցում է իշխող հունա-մակեդոնական խավի մեկուսացումը<sup>6</sup>, տեսադաշտից դուրս է թողնում հելլենիստական գեղարվեստական մշակույթի նվաճումները<sup>7</sup>: Բայց այդ և մի շարք այլ թերություններով հանդերձ, Ուոլբանքի քի հելլենիզմի հղացքները ավելի մոտ են պատմագիտական արդի ընկալումներին և զգալի առաջընթաց՝ Դրոյզենի նպատակաբանական (տելեոլոգիական) հղացքի կամ էլ Վիլյամ Թարնի «առաքելական մեկնաբանությունից»: Թեև Ուոլբանքի աշխատություններին պակասում է Թոյնբիի և Ռոստովցևի համարձակ և անկաշկանդ մտածողությունը, իր հիմնարարությամբ նա բնավ չի զիջում վերջիններիս և հելլենիստական քաղաքակրթությանը վերաբերող նրա աշխատությունները պետք է հաշվի առնվեն հետագա հետազո-

<sup>1</sup> Walbank The Hellenistic World. P. 248. Stü ևսև՝ Kierdorf 1980: 205–224; Rawson 1989: 422–476, 451–463; idem 1985; Baltimore: Johns Hopkins University Press, 1985: 3–18; Petrochilos 1974; Штраерман 1992: 140–176.

<sup>2</sup> Walbank 1991/1992: 247.

<sup>3</sup> Idem. 251.

<sup>4</sup> Idem.

<sup>5</sup> Ст'у Климов 1996: 56. [www.sgu.ru/files/nodes/9832/07.pdf](http://www.sgu.ru/files/nodes/9832/07.pdf)

<sup>6</sup> Там же: 55–56.

<sup>7</sup> Ст'у Свенцицкая 1963: 198.

տություններում: Ֆ. Ուոլբանքը ունեցել է մի շարք համախոհներ և հետևորդներ, որոնք շարունակել և զարգացրել են նրա հղացքը:

Երկար ժամանակ համարվում էր, որ Ուոլբանքը անգլիական հելլենիստագիտության «վերջին մոհիկանն է» և այդ բնագավառում նրան վիճակվեց ասել վեջին խոսքը, ձերբազատելով հելլենիստական ուսումնասիրությունները մի կողմից XIX դարի գերմանական պատմագիտական դպրոցին բնորոշ մանրախույզ և ձևապաշտ չորությունից և մյուս կողմից՝ ռոստովցեյան «սանձարձակ» երևակայություններից, գրավելով մի տեսակ միջին դիրք այդ երկու ծայրահեղությունների արանքում: Մյուսներին մնում էր հարմար տեղավորվել այդ ողջամիտ հավասարակշռված գիտական դաշտում, հնարավորության սահմաններում լրացնելով հելլենիզմի պատմության մեջ մնացած որոշ անէական բացերը: Սակայն տեղի ունեցավ անսպասելի շրջադարձ: Վերջին երեք տասնամյակներում ասպարեզ իջան նոր հետազոտողներ, որոնք մշակեցին նոր մոտեցումներ Հին Արևելքի և հելլենիզմի պատմության խնդիրների վերաբերյալ: Հատկապես 1987 թ. լույս տեսավ «Հելլենիզմն Արևելքում» գիտական աշխատությունների ժողովածուն<sup>1</sup>, որտեղ մի խումբ համախոհներ հանդես եկան նոր, իսկ առանձին դեպքերում լավ մոռացված հին գաղափարներով: Տարբեր բնագավառների վեց մասնագետներ (ներառյալ երկու խմբագիր) ծավալուն համատեղ աշխատանքում շրջանառության մեջ դրեցին այն միտքը, որ Սելևկյան թագավորության համար Ասորեստանի, Բաբելոնի և Աքեմենյանների տերության ժառանգությունն ուներ ավելի մեծ նշանակություն, քան համարվում էր մինչ այդ: Ուստի այդ և ուրիշ հելլենիստական թագավորությունների բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել հին արևելյան քաղաքակրթությունների համատեքստում: Դոկտոր Սյուզեն Շերվին-Ուայթը (Susan Sherwin-White)

<sup>1</sup> Kuhrt, Sherwin-White 1987.

“Seleucid Babylonia: A Case Study for the Installation and Development of Greek Rule” իր ակնարկում պնդում է, որ Սելևկյանների տերությունը թեև միատարր չէր, սակայն բնավ թույլ ու փխրուն պետական միավոր չէր: Նա անհիմն է համարում իր նախորդների պնդումներն այն մասին, որ Սելևկյանները չէին վստահում տեղացիներին և չէին ընդգրկում նրանց պետական կառավարման համակարգի մեջ, առավել ևս խուսափում էին նրանց նշանակել բարձր պաշտոնների: Ի դեպ, Շերվին-Ուայթի տեսակետը հաստատելու համար բերենք Անտիոքոս Գ-ի օրինակը, որը, շարունակելով Աքեմենյանների ավանդույթը, նվաճված երկրների ստրատեգոս-կառավարիչներ նշանակեց տեղի իշխաններին, որոնք մինչ այդ բարձր պաշտոններ էին զրավում Սելևկյան բանակում և արքունիքում, սրանց թվին էին պատկանում Արտաշեսը, Զարեհը, Փոքր Հայքի ստրատեգոս Միհրդատը և այլք:

Հին Արևելքի պատմության խոշոր մասնագետ, Լոնդոնի համալսարանի քոլեջի պրոֆեսոր Էմիլի Բյուրթը (Amélie Kuhrt, ծնվ.՝ 1944 թ.)<sup>2</sup> Սելևկյան տերության պատմությունը դիտարկում է Ասորեստանյան, Բաբելական, Մեդական և Աքեմենյան կայսրությունների պատմության համատեքստում: Ավելին, նա պնդում է, որ Բերոսի «Բաբելականը» (կամ «Քաղղեականը») (Babyloniaka, Chaldaika) պատմություն է, գրված Անտիոքոս Ա Սոտերի պատվերով, «Սելևկյաններին գաղափարախոսական աջակցություն ցուցաբերելու համար», բաբելական ավանդույթների տեսակետից, որը նրանք (Սելևկյանները, Ե.Մ.) մեծապես հարգում էին («to provide the

<sup>1</sup> Idem: 1-31.

<sup>2</sup> 1997 թ. Նրա «Հին Մերձավոր Արևելքը. Ք.ա. 3000-330 թթ.» («The Ancient Near East: c. 3000-330 BC») գիրքը արժանացավ Ամերիկյան պատմաբանների ընկերության անգլերեն լեզվով լավագույն գրքի համար Ջեյմս Հենրի Բրիսթոլի ամենամյա մրցանակի: 2001 թ. Բյուրթը ընտրվել է Բրիտանական ակադեմիայի անդամ: Նա Բրիտանական ակադեմիայի գիտական նախագծերի հանձնաժողովի մշտական անդամ է, որը պատասխանատու է Ակադեմիայի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների համար:

*Seleucid dynasty with an ideological support» in terms of the Babylonian traditions that they deeply respected*<sup>1</sup>:

Ժան-Ֆրանսուա Սալես (Jean-François Salles) բերում է նոր ապացույցներ, որոնք վկայում են տեղացիների հետ կանոնակարգված փոխհարաբերությունների համակարգի մասին: Իր հետագա աշխատություններում, նոր հնագիտական տվյալների հիման վրա, Սելզը ցույց է տվել այն սերտ կապերը և փոխազդեցությունը, որ ձևավորվել էր Միջերկրական աշխարհի և Հնդկական օվկիանոսի ավազանի ժողովուրդների միջև<sup>2</sup>: Ֆերգյուս Միլլերը (Fergus Millar) «<Ելլենիստական Ասորիքի խնդիրը» («The Problem of Hellenistic Syria») լայնածավալ հոդվածում նախազգուշացնում է հելլենիստական Ասորիքի վրա հունական ազդեցության գերազնահատումից, առավել ևս, որ աղբյուրները դրա համար բավարար հիմքեր չեն տալիս: Մալքոմ Բոլլեջը (Malcolm Colledge) վերլուծում է հելլենիստական արվեստում արևելյան ազդեցությունների ներքո զուտ հունական տարրի աղճատման և փոխակերպման փուլերը:

Այդ գաղափարներն իրենց հետագա զարգացումը ստացան Բյուրտի և Շերուին-Ուայթի նոր աշխատություններում<sup>3</sup>: Արևմտյան հետազոտողների զգալի մասը՝ հավատարիմ դարեր առաջ պատմագիտության մեջ հաստատված եվրոպակենտրոն մոտեցմանը, սառը, երբեմն էլ նույնիսկ թշնամաբար ընդունեցին այդ հեղինակների համարձակ գաղափարները: Այսպես Ուոլբանքը այդ ուսումնասիրությունն անվանեց «ռեվիզիոնիստական, իսկ տեղ-տեղ ազդեցիվ ռեզիոնիստական»<sup>4</sup>: Հակառակ դրան, այդ ոչ եվրոպակենտրոն մոտեցումը դրականորեն ընդունվեց Ռուսաստանում, ինչը

թերևս պետք է համարել բնական: Անշուշտ, հայ հետազոտողներին ևս անհրաժեշտ է ուսումնասիրել և շրջանառության մեջ մտցնել նոր մոտեցումները: Մնում է ավելացնել, որ բրիտանական պատմագիտությունը լուրջ քայլ կատարեց հելլենիզմի ժամանակագրական շրջանակների ընդլայնման ուղղությամբ<sup>1</sup>:

Սակայն հելլենիստական պորբլեմատիկան՝ ավանդական անգլիական անտիկագիտության մեջ, վերջին մի քանի տասնամյակներում, հատկապես Ռոստովցևի գիտական բարձր հեղինակության շնորհիվ, զգալի տեղ գրավեց նաև ամերիկյան պատմագիտության մեջ: Ամերիկյան հելլենիստագիտությունը հետաքրքիր հետազոտություններ է իրականացրել իշխող հարստության աստվածացման վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է դարձվել այդ երևույթի տեղական արևելյան արմատներին և դրա գաղափարախոսական բովանդակությանը: Այսպես հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել Ռ.Ա. Հեզարդը, որը հատուկ ուշադրություն է դարձրել հելլենիստական Եգիպտոսի թագուհիների պաշտամունքին<sup>2</sup>: Հայտնի է, որ Պտղոմեան Եգիպտոսի թագուհիների աստվածացումը սկսվել է Պտղոմեոս Բ արքայից, որն իր քրոջը՝ Արսինոյային հռչակել էր դիցուհի<sup>3</sup>: Թագուհիների աստվածացման ավանդույթը պահպանվեց նաև հաջորդ դարերում և հասավ բարձրակետի 47 թ-ին, Կլեոպատրա Է-ի օրոք: Ըստ Հեզարդի, Պտղոմեան հարստության թագուհիներն, ըստ մակեդոնական ավանդույթի, ունեցել են ցածր կարգավիճակ, բայց հետագայում, հատկապես վերջիններիս աստվածացումից հետո, արքունիքում և երկրում գրավել են գե-

<sup>1</sup> Entries excerpted from Veremis Thanos and Dragoumis Mark (Eds) 1998: <http://www.macedonian-heritage.gr/bibliography.html>.

<sup>2</sup> Boussac (Editor), Salles (Editor) 2005; idem 1995.

<sup>3</sup> St' u Kuhrt, Sherwin-White 1991: 71–86; idem 1993; Kuhrt & Sancisi-Weerdenburg (edd.) 1994: 283–310.

<sup>4</sup> St' u Walbank [Rev.:] 1988. Vol. 13.7: 108.

<sup>1</sup> Cribb / Herrmann, eds.:2007.

<sup>2</sup> Hazzard 2000.

<sup>3</sup> Չմոռանաք, որ Պտղոմեոս Բ-ն կնության էր վերցրել իր քրոջը՝ Արսինոյային, ճիշտ այնպես, ինչպես Օսիրիսն ամուսնացած էր քրոջ Իսիսի հետ: Յուրայինների հետ ամուսնությունը հին արևելյան արքաների դեպքում նախևառաջ պետք է խորհրդանշեր վերջիններիս աստվածային ծագումը:

րիշխող դեր, երբեմն հետին պլան մղելով իրենց եղբայրներին և ամուսիններին<sup>1</sup>:

Ամերիկյան հետազոտողներին բնորոշ միտում է հելլենիզմն ընկանալելու իր ամբողջականության մեջ և ոչ որպես զուտ մշակութային երևույթ: Հարդյունքս դրա ամերիկյան պատմագիտության մեջ քաղաքացիություն են ստանում հռոմեական, քրիստոնեական և բյուզանդական հելլենիզմի գաղափարները<sup>2</sup>: Հայտնվում են աշխատանքներ, որտեղ հելլենիստական քաղաքակրթության կերպափոխումները սերտորեն կապվում են արևելյան պոլիսի ճակատագրերի և այստեղ ձևավորված հասարակական հարաբերությունների բնույթի հետ: Վերջիններս, ինչպես և հելլենիստական մշակույթը բնորոշվում են որպես կապիտալիստական՝ ստեղծված պոլիսային բուրժուազիայի կողմից<sup>3</sup>: Սակայն, դրա կողքին, ամերիկյան հելլենիստագիտության մեջ շարունակում են իշխել հին հղացքները, որոնք հելլենիզմը հանգեցնում են մշակութային երևույթների ամբողջությանը, այդ ժամանակն ավանդաբար բնորոշելով զուտ որպես հելլենական լեզվի և մշակույթի լայնածավալ տարածման դաշտը<sup>4</sup>:

<sup>1</sup> Դրան թերևս նպաստում էր այն, որ Եգիպտոսի թագուհիները կնության էին բերվում ոչ թե օտար երկրներից, այլ ունեին տեղական ծագում, սերելով Լազյանների արքայական տնից և ամուուսնացած էին եղբայր թագավորների հետ: Այդ ավանդույթն, անշուշտ, ուներ տեղական արմատներ և փոխառնված էր մակեդոնական նվաճողների կողմից:

<sup>2</sup> Peters 1971.

<sup>3</sup> Hadas 1959, 1967.

<sup>4</sup> Cartledge, Gamsey, Gruen 1997.

## ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ֆրանսիայում մինչև Առաջին աշխարհամարտը հելլենիստագիտության խնդիրներով զբաղվում էր Ավգուստ Բուշե-Լեկլերկը<sup>1</sup>: Սակայն ետպատերազմյան տարիներին հետաքրքրությունը հելլենիզմի հանդեպ կտրուկ աճեց: Դա պայմանավորված էր երկրում տիրող հաղթական տրամադրություններով և Մերձավոր Արևելքում ու Հյուսիսային Աֆրիկայում Ֆրանսիայի վարած գաղութատիրական քաղաքականությամբ: Ֆրանսիացի գաղութաբնակները Մադրիբի երկրներում հաճախ նույնացվում էին հելլենիստական դարաշրջանի հունա-մակեդոնական վերաբնակիչներին: Ամենուրեք խոսվում էր Ֆրանսիայի քաղաքակրթական առաքելության մասին: Դա իր դրոշմը թողեց ֆրանսիական հելլենիստագիտության վրա: Ֆրանսիական հետազոտողները հելլենիզմը մեկնաբանում էին իբրև արևելյան ժողովուրդների կողմից արևմտյան հելլենական քաղաքակրթական և առաջին հերթին մշակութային արժեքների միակողմանի փոխառում և դրանց պատվաստում արևելյան հողի վրա: Ֆրանսիացի հետազոտողներից ոչ մեկը արևելյան ժողովուրդներին չէր դիտարկում որպես ինքնուրույն և ինքնարար ուժ: Արևելքում նոր քաղաքակրթության կազմավորման եթե ոչ միակ,

<sup>1</sup> Bouché-Leclercq 1879–1881 (русский перевод 1 т.: Буше-Леклерк 1881; idem 1913–1914; idem 1903–1907; Tome 1, 1903; Tome 2; Appendice 1904; Tome 3, 1906; Tome 4, 1907.

ապա գլխավոր շարժառիթը հռչակվում էր Ալեքսանդրը, որը ժամանել էր Արևելք հատուկ առաջելությանը, իր գործունեությամբ փոխակերպելու հին աշխարհը, վերջինիս հաղորդելով լրացուցիչ լիցք, նոր բարդ և համադրական բովանդակություն:

Այսպես ժ. Ռադեն իր «Ալեքսանդր Մեծ»<sup>1</sup> աշխատության մեջ (1931, 1950 թթ. և մի քանի ավելի ուշ հրատարակություններ) տվեց մակեդոնական արքայի (որով նա անչափ հիանում էր) հաղթանակների և նվաճումների մանրակրկիտ նկարագրությունը: Պ. ժուգեի «Մակեդոնական իմպերիալիզմը և Արևելքի հեղինակությունը»<sup>2</sup> այդ դարաշրջանի Ֆրանսիայում լայն տարածում գտած ընդհանուր միտվածության՝ հին պատմության միջոցով «բարերար իմպերիալիզմի» հայեցակարգի հիմնավորման վառ օրինակ է: Արևելքի նվաճումն արդար և դիտվում էր որպես դարակազմիկ երևույթ, առանց որի լճացած Արևելքի հետագա առաջընթացն ուղղակի անհնարին կլիներ: Սակայն հատկանշական է, որ իր մենագրության մեջ ժուգեն չի անդրադարձել այն հանգամանքին, որ ուշ դասական շրջանում Հելլադան հայտնվել էր ավելի խորը ճգնաժամի մեջ քան Արևելքը, որի պատճառով ուղղակի ընկղմվել էր քաոսի մեջ: Ավելին, ի տարբերություն Արևելքի, նույնիսկ հլլենիստական շրջանում Հունաստանն այդպես էլ չկարողացավ հաղթահարել իրեն կաթվածահար արած ճգնաժամը: Այդ խնդիրներին իր հիմնարար աշխատության մեջ անդրադարձավ Ռոբեր Կոհենը<sup>3</sup>, որի աշխատանքը այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը: Պտղոմեանների տերության բնորոշ յուրահատուկ տնտեսական հարաբերությունների ուսումնասիրմանը նվիրված է Կլեր Պրեոյի արժեքավոր աշխա-

<sup>1</sup> Radet 1931.

<sup>2</sup> Jouquet 1926 (նաև՝ Paris, 1961): 1–8 (այդ աշխատության վերջին հրատարակությունն է, տե՛ս նաև անգլերեն թարգմանությամբ՝ Macedonian Imperialism and the Hellenization of the East 1928).

<sup>3</sup> Cohen 1934.

տանքը<sup>1</sup>: Ալեքսանդրի նվաճողական արշավանքների և հելլենիստական պետությունների քաղաքական պատմության ուսումնասիրության գործում որոշ ներդրում ունեցավ հռոմեական պատմության հայտնի ուսումնասիրող Լեո Օմոն<sup>2</sup>: Թերևս նույն մոտեցումներն ենք տեսնում բելգիացի Ֆրանց Կյումոնի աշխատություններում, որտեղ նա մանրագնին ուսումնասիրելով հռոմեական միթրայականությունը, գրեթե չանդրադառնալով վերջինիս արևելյան արմատներին<sup>3</sup>: Նման օրինակ դրույթներ բնորոշ էին նաև այլ երկրների պատմագիտական դպրոցներին<sup>4</sup>:

Ետպատերազմյան տարիներին ֆրանսիական պատմաբանները ևս շարունակեցին ակտիվ զբաղվել հելլենիզմի խնդիրներով: Ֆրանսիական պատմագիտության համար այդ ավանդական բնագավառում ևս ի հայտ եկան տարբեր, երբեմն իրարամերժ, հայեցակարգեր: Այսպես, հելլենիստական ուսումնասիրությունների մեջ, նախկինի նման առանցքային նշանակություն ուներ եվրոպակենտրոն մոտեցումը: Արևելքի հելլենացմանը նվիրված որոշ պատմաբանների գործերում դեռևս կարելի էր հանդիպել նախապատերազմյան շրջանից ժառանգված «բարերար իմպերիալիզմի» գաղափարախոսության վերապրուկները: Աշխատություններից շատերում աչքի է զարնում Ալեքսանդրի կերպարի բացարձակացում և անվերապահ համոզվածություն, որ հելլենիստական աշխարհի արարումը՝ զուտ նրա հանճարի և անսասան կամքի արդյունքն էր: Նման մոտեցումը բնորոշ էր Պոլ Կլոշեի մենագրություններին<sup>5</sup>, որոնք փայլուն ֆրանսերենի շնորհիվ մեծ ճանաչում ունեին լայն ընթերցողի մոտ: Իր վաղ աշխատությունում Կլոշեն մանրամասն և հետաքր-

<sup>1</sup> Préaux 1939; idem 1978.

<sup>2</sup> Homo 1951.

<sup>3</sup> Кюмон 2000.

<sup>4</sup> Lamb 1946; Gregor 1940.

<sup>5</sup> Cloché 1953.



քիր նկարագրել է դիադոխների քաղաքական պատմությունը<sup>1</sup>: Սակայն հեղինակի վերաբերմունքը Ալեքսանդրին և իր հաջորդներին մնում է զուտ փաստագրական. Ջորավարների և տիրակալների հաջողությունների կամ ձախողումների պատճառները նա գլխավորապես տեսնում է նրանց ընդունակությունների և անձնական այլ հատկանիշների մեջ<sup>2</sup>: Առհասարակ դիադոխների և էպիգոնների պայքարը Կլոշեի աշխատություններում ներկայացված են որպես գաճաճների գզվուտոց իրենց երբեմնի առաջնորդի վիթխարի պատմուճանին տիրանալու համար: Սակայն ֆրանսիացի հեղինակի համոզմամբ Ալեքսանդրի պատմուճանն այնքան մեծ էր, որ «թզուկ» տիրակալները խճճվեցին և կորան նրա մեջ: Առհասարակ, Կլոշեն չի բացառում դավադրության հետևանքով Ալեքսանդրի մահվան վարկածը: Սակայն Ալեքսանդրին սպանելուց հետո էլ նրա յուրայինները դատապարտված էին ապարդյուն պայքար վարել փառապանծ տիրակալի սուվերի դեմ:

Սակայն ֆրանսիական ընթերցողի կողմից սիրված Կլոշեի մեկնագրություններից բացի ետպատերազմյան շրջանում գիտական շրջանառության մեջ մտան նաև այլ բնույթի աշխատանքներ, որոնցում Ալեքսանդրը ներկայացվում է որպես դաժան և սառնասիրտ նվաճող: Ալեքսանդրի նկատմամբ առանձնակի քննական մոտեցում է ցուցաբերել հայտնի իրանագետ Պյեր Բրիանը<sup>3</sup>: Վերջինս, թերևս ընկնելով մյուս ծայրահեղության մեջ, ձգտում է իջեցնել Ալեքսանդրի կերպարը՝ անտեսելով մակեդոնական արքայի կատարած սխրանքի նշանակությունը: Բրիանը ծաղրում է նրանց, ովքեր ի դեմս Ալեքսանդրի փորձում են տեսնել «պոետի», որը՝ դրդված անբացատրելի ներքին ուժով, ձգտում էր ճանաչել աշխար-

<sup>1</sup> Idem 1959.

<sup>2</sup> Idem 1949: 187–195.

<sup>3</sup> Briant 1974; idem 1996.

իղ և այն ճանաչելի դարձնում հույներին: Հեզնանքով է խոսում Բրիանը նրանց մասին, ովքեր համարում են, որ Ալեքսանդրը արտասովոր անձնավորություն էր և նրա արարքները գնահատել «հասարակ հոգեբանության» չափանիշներով անիմաստ է: Հակառակ դրան նա պնդում է, որ Ալեքսանդրի գործունեության շարժառիթները շատ պրագմատիկ էին, նա չունեւ երկարաժամկետ քաղաքական ծրագրեր և գործում էր ելնելով կոնկրետ պատմական իրավիճակից՝ պատմության թելադրանքով, և ոչ թե՛ ուղղորդելով պատմությանը, վերջինիս թելադրելով իր կամքը: Միևնույն ժամանակ, Ալեքսանդրի հաջորդներին, օրինակ՝ Եվմենոսին՝ նվիրված մի շարք հոդվածներում Բրիանը պնդում է, որ մեծ տիրակալի գեներալները ավելի հասուն, խոհեմ և լրջմիտ քաղաքական գործիչներ էին, որոնք առաջնորդվում էին որոշակի քաղաքական և սոցիալական ծրագրերով՝ խարսխված ողջամտության և նպատակահարմարության վրա: Այդ ծրագրերի իրագործման համար նրանք վարում էին երկարատև պատերազմներ, իրականացնում որոշակի ներքին և արտաքին քաղաքականություն: Այդ առումով հատկանշական է նաև Բրիանի «Անտիգոնոս Միակնյա: Կարիերայի սկիզբը և մակեդոնական ժողովրդական ժողովի խնդիրները»<sup>2</sup> մենագրությունը: Ալեքսանդրի հանդեպ Բրիանի քննական մոտեցումը ցայտուն արտահայտվեց մակեդոնական նվաճողներին արևելյան ժողովուրդների դիմադրությանը նվիրված հոդվածներում: Նա վերականգնում է Տյուրոսի պաշարման ժամանակ պարսիկների և ասորիների հակազորի փորձի մանրամասները՝ եզրակացնելով, որ Ալեքսանդրի Արևելյան արշավանքը բնավ չի կարելի համարել «հաղթական երթ»: Սակայն Բրիանը չի սահմանափակվել միայն ֆրանսիական հելլենիստագիտության համար ավանդական դարձած Ալեքսանդրի

<sup>1</sup> Idem 1972: 32–73 & 75, 1973, 43–81.

<sup>2</sup> Idem 1973.

անծի և նրա հաջորդների և մակեդոնացիների ռազմաքաղաքական պատմության հանկարծական փոփոխությունների նկարագրությամբ: Իր առանձին հոդվածներում նա անդրադառնում է նաև հասարակական-տնտեսական խնդիրներին: Այսպես «Նկատառումներ հելլենիստական շրջանի Փոքր Ասիայի լաոյ և գյուղական ստրուկների մասին»<sup>1</sup> հոդվածում նա փորձում է ցույց տալ, որ եվրոպական և առաջին հերթին ֆրանսիական անտիկագիտության մեջ գերիշխող պատկերացումներն այն մասին, որ Աքեմենյան և հելլենիստական դարաշրջանում Մերձավոր Արևելքում գոյություն ունեին ավատատիրական հարաբերություններ անհիմն են և չեն հաստատվում աղքատագիտական տվյալներով: Կարծես ծայնակցելով խորհրդային և առաջին հերթին խորհրդահայ պատմաբաններին՝ նա պնդում էր, որ Աքեմենյան և հելլենիստական դարաշրջանում Մերձավոր Արևելքում իրենց բնույթով ստրկատիրական էին:

Սակայն դրա հետ մեկտեղ, Բրիանը, զուգաձայնելով բրիտանական գիտնականներ Ս. Շերուին-Ուայթին և Ա. Քյուրթին, ինչպես և նրանց գերմանացի գործընկեր Հ. Կրայսիգին<sup>2</sup>, առաջինը Ֆրանսիայում արտահայտեց այն միտքը, որ հելլենիստական պետությունները, նույնիսկ նրանցից վաղագույնները, իրենց վրա կրում էին հին արևելյան տերությունների դրոշմը և հունա-մակեդոնական տարրը առանձնակի բան չի ավելացրել և չէր էլ կարող ավելացնել հազարամյակների ընթացքում ձևավորված համակարգին<sup>3</sup>: Ըստ էության հելլենիզմի բերած փոփոխությունները խորքային բնույթ չէին կրում և էական ազդեցություն չունեցան հասարակական-տնտեսական կառույցների վրա:

<sup>1</sup> Idem 1973: 93–133

<sup>2</sup> Крайсиг 1982; *Общественные науки за рубежом*. 1983: 164–167.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Кошеленко 1975: 6 և սլ.

Ետպատերազմյան տարիներին ֆրանսիական հելլենիստագիտության մեջ իր արժանի տեղն է գտել Պոլ Պոտիի ընդհանուր տեսական բնույթի «Հելլենիստական քաղաքակրթություն» մենագրությունը<sup>1</sup>, որտեղ հեղինակը հելլենիստական աշխարհի սահմանների մեջ ամփոփում է հսկայական տարածք Իրանից Կարթագեն և Եգիպտոսից մինչև Իտալիա: Այսպիսով, Պոտին զգալիորեն ընդարձակում է հելլենիզմի տարածական շրջանակները, դրա ծիրի մեջ ընդգրկելով երկրներ, որոնք երբեք չեն նվաճվել մակեդոնացիների կողմից և չեն գտնվել նրանց քաղաքական ազդեցության տակ: Հետևաբար հելլենիզմն իր բնույթով ոչ այնքան քաղաքական, որքան քաղաքակրթական երևույթ էր: Հելլենիզմի պատմության առանձին մասնավոր խնդիրներին է նվիրված Մարսել Լոնեյի երկհատորանոց «Հելլենիստական բանականների հետազոտությունը»<sup>2</sup>: Հելլենիստական քաղաքակրթության և Եգիպտոսի Ալեքսանդրիայի պատմությանն են նվիրված Անդրե Բերնանի ուսումնասիրությունները<sup>3</sup>: Ֆրանսիական պատմաբանների հետաքրքրության կենտրոնում հայտնվել է Կենտրոնական Ասիայի հելլենիստական երկրների պատմությունն ու մշակույթը<sup>4</sup>, մի բան, որ դժվար էր պատկերացնել երկու Աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում, երբ հելլենիստական միայն համարվում էին այն երկրները, որոնք երկար ժամանակ գտնվել են մակեդոնական կառավարման ներքո և հունական մշակույթի ծիրում: Այդ առումով նաև առանձնանում է Արևմուտքում հայտնի Դենիել Շյումբերթեի «Հելլենականացված Արևելքը»<sup>5</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը որոշ դիտարկումներ

<sup>1</sup> Petit 1965.

<sup>2</sup> Launey 1987.

<sup>3</sup> Bernand 1994; idem 1995; idem 1996; idem 1997: 131–138.

<sup>4</sup> Bovearachchi 2004: 349–369.

<sup>5</sup> Шюмберже 1985.

է անում հետաքեմենյան Արևելքի մշակույթի պատմության վերաբերյալ:

Սակայն այդ բոլոր հետազոտողների մեջ առանձնանում է Պյեր Լևեկի (1921–2004) հելլենիստական քաղաքակրթության հղացքը: Լևեկը վճռական դեր խաղաց հայտնի «Բեզանսոնի պատմագիտական դպրոցի» ստեղծման և կայացման գործում: Տարբեր պատմագրական ձեռնարկներում այդ դպրոցն անվանվում է արդի ֆրանսիական անտիկագիտության ամենահետաքրքիր և հեռանկարային ուղղություն: Մի քանի տարի լինելով Բեզանսոնի (Besançon) համալսարանի ռեկտոր և պատմության ֆակուլտետի ղեկան, նա ոչ միայն մեկ գաղափարի շուրջ միավորեց առաջադեմ մտածող ֆրանսիական գիտնականների զգալի մասին, այլև ստեղծեց որոշակի կառույց (ինֆրաստրուկտուրա), առանց որի անհնար է ցանկացած միավորման արդյունավետ գործունեությունը: Ողջ գիտական աշխարհին հայտնի են Բեզանսոնում հրատարակվող «երկխոսություններ հին աշխարհի մասին» տարեգիրքը, որի յուրաքանչյուր համարը գիտական աշխարհում աննկատ չի անցնում: Ֆրանսիական պահանջկոտ ինտելեկտուալ հանրության շրջանակներում միշտ աշխույժ հետաքրքրություն է առաջացրել նաև «Բեզանսոնի համալսարանի գրական աննալներ» (*Annales littéraires del' Université de Besançon*) խորագրված ժողովածուները, որոնցում հրատարակվել են շատ հետաքրքիր ուսումնասիրություններ՝ նվիրված անտիկ պատմության ընդհանուր տեսական և մասնավոր խնդիրներին: Պ. Լևեկը նաև հանդես եկավ անտիկ աշխարհի սոցիալական խնդիրներին նվիրված միջազգային սիմպոզիումների և կոլոքվիումների կանոնավոր անցկացման նախաձեռնությամբ:

«Բեզանսոնի պատմագիտական դպրոցի» բնորոշ հատկանիշներից է անտիկ պատմության ուսումնասիրությունը համակեցական (սոցիալական) հարաբերությունների լույսի ներքո (այդ գաղափար-

ների բարձրախոսը դարձավ «Analyses des formations sociales d' Antiquité – Université de Besançon» հանդեսը): Լևեկի համոզմամբ հասարակական հարաբերություններն այն հիմքն են որ, վերջիվերջո բնորոշում է հասարակության բոլոր մնացած կառույցները: Հայրն «Բեզանսոնի պատմաբանները» զգալի ուշադրություն են դարձնում անտիկ աշխարհի այդպիսի կառուցվածքային տարրին, ինչպիսին ստրկատիրությունն է և դրա ձևերն ու առանձնահատկությունները:

Դա չի նշանակում, որ «բեզանսոնցիների» հետաքրքրությունները տարածվում են միայն սոցիալական հարաբերությունների խնդիրների վրա: Վերջին շրջանում նկատվում է պատմագիտական մեթոդների և մոտեցումների «ներկապնակի» հարստացման միտում: Ոմանք դա ընկալում են որպես նահանջ մեկ քառորդ դար առաջ որդեգրված սկզբունքներից, մյուսները համոզված են, որ գիտությունը տեղում չի դուփում և «Բեզանսոնի դպրոցը» պետք է մնա ֆրանսիական անտիկագիտության առաջադիմական ուժերի «Մեքքան»՝ իր շարքերի մեջ գրավելով առաջին հերթին երիտասարդությանը:

Ի դեպ, «Բեզանսոնի դպրոցը» վաղուց դադարել է լինել զուտ Բեզանսոնի համալսարանի արգասիքը: Պատմագիտական այդ ուղղության ներկայացուցիչներից շատերը, այդ թվում համալսարանի շրջանավարտները, ապրում և դասավանդում են այլ քաղաքներում՝ Փարիզից մինչև Հռենոս և նրանց միավորումը ոչ ֆորմալ բնույթի է: Այն կարելի է դիտարկել որպես համախոհների կորպորացիա, ֆրանսիական կրեատիվ անտիկագետների համքարություն: Ոմանք այդ ուղղությունը համարում են ավանդական և ազգային ֆրանսիական, քանի որ այստեղ հաջող կիրառվում են ֆրան-

սիական «Աննայների» դպրոցի՝ մեթոդներն ու սկզբունքները: Սակայն մյուսները այն անվանում են միջազգային, քանի որ այստեղ տեղ են գտել համաշխարհային անտիկազիտությանը բնորոշ գործընթացներն ու խմորումները: Թերևս այդ երկու գնահատականները ճշմարտացի են, քանի որ «Բեզանսոնի դպրոցն» իր մեջ համատեղում է ավանդականն ու նորարարականը: Ավելացնենք, որ «Բեզանսոնի դպրոցի» մեթոդների և մոտեցումների, ինչպես և 1960–1970-ականների ողջ ֆրանսիական ինտելեկտուալ մտքի վրա, որոշակի ազդեցություն ունեցավ մարքսիզմը՝ որպես սոցիալական փիլիսոփայություն, որի համար «Բեզանսոնի պատմագիտական դպրոցը» մեծ հարգանքի և անգամ դրվատանքի էր արժանացել խորհրդային պատմաբան-քննադատների կողմից, սակայն այսօր «բեզանսոնցիների» երիտասարդ սերունդն անտարբեր է մարքսիզմի նկատմամբ<sup>2</sup>:

Ինքը Լևեկը շատ բեղմնավոր գիտնական էր: Նրա գրչին է պատկանում «Հելլենիստական աշխարհը»<sup>3</sup> հիմնարար աշխատությունը: Այդ մենագրության բնորոշ կողմերից մեկն այն է, որ հեղինակը չի տարանջատում հելլենիստական մշակույթը և հասարակական-տնտեսական կառույցները՝ դրանք դիտելով ամբողջականության մեջ: Լևեկի համոզմամբ՝ հելլենիստական մշակույթի առանձնահատկությունները պայմանավորված էին որոշակի տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերություններով, որոնք Արևելքում ունեն հին պատմություն և կազմում են հելլենիզմի բուն էությունը: Ի տարբերություն ֆրանսիական շատ պատմաբանների

<sup>1</sup> «Աննայների» դպրոցը ստեղծվել էր որպես զուտ ֆրանսիական Միջնադարի խնդիրներով զբաղվող պատմաբանների կորպորացիա, սակայն հետագայում այդ «դպրոցի» մշակված մեթոդները հաջողությամբ սկսեցին կիրառվել այլ երկրներում և այլ դարաշրջանների ուսումնասիրության համար:

<sup>2</sup> Sté u Postclassique. // Лезек 1989: 239–249.

<sup>3</sup> Lénèque 1969. Sté u նաև վերև բերված ռուսերեն թարգմանությունը:

Լևեկը չի համարում, որ հունա-մակեդոնական նվաճումներն Արևելքի ժողովուրդների համար ունեցան բարերար նշանակություն: Նա մատնանշում է հունա-մակեդոնական անխտիր բոլոր պետությունների «գաղութատիրական» բնույթը: Իսիստ քննադատական մոտեցումը հելլենների գաղութատիրության հանդեպ պայմանավորված էր XX դարի 50–60-ական թվականներին անգլիական և ֆրանսիական գաղութատիրական համակարգերի քայքայման և փլուզման պարագայով: Գաղութատիրական համակարգի ճգնաժամը Ֆրանսիայի ներքին և արտաքին կյանքում առաջացրեց լուրջ խնդիրներ, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում էր հիասթափության և գաղութատիրության գաղափարի մերժմանը:

Ավելացնենք, որ աշխատություններում, հելլենիստական պետությունների հասարակական-տնտեսական կառուցվածքը նկարագրելիս Պ. Լևեկը չի խորշում օգտագործել այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «բուրժուազիա», «կապիտալիստ» և այլն: Բացի այդ, Լևեկն ունի բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված մասնավոր խնդիրներին և հելլենիստական շրջանի գործիչներին, որոնց սակայն նա բնավ չի բացարձակացնում ներկայացնելով որպես փառամոլ և ընչաքաղց անձանց<sup>1</sup>:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ֆրանսիական պատմաբան Ֆրանսուա Շամուի «Հելլենիստական քաղաքակրթություն»<sup>2</sup> ծավալուն մենագրությունը, որտեղ հելլենիստական քաղաքակրթությունը ներկայացված է ոչ իբրև դասական հունական քաղաքակրթության անկում կամ «Իլիականի» ոգով շարադրված հունա-մակեդոնական գաղութարարների ռազմական սխրանքների պատմություն, կամ քառասյին և արյունոտ անցումային շրջանի հունական Արևելքից դեպի լատինական Արևմուտք՝ Աթենքից Հռոմ:

<sup>1</sup> Ibid 1957; idem 1968/69: 135–56; idem 1976: 604–10; idem 1991: 303–7.

<sup>2</sup> Шаму 2008.

Շամուն փորձում է հեյլենիզմը ցույց տալ ավելի բարդ, քան այն սովորաբար ներկայացվում է դպրոցական և բուհական դասագրքերում: Ֆրանսիացի հեղինակը հեյլենիզմը ներկայացնում է որպես հակասական դարաշրջան, որտեղ գոյակցում էին նորարարություններն ու հավատարմությունը հունական և արևելյան ավանդույթներին, սերտ կապը հնի հետ և միտվածություն դեպի ապագա, բնագանցությունը և սթափ բանականությունը, կրքառատությունը և սառնասիրտ ողջամտությունը, ինտելեկտուալ էլիտայի փայլուն էրոտիցիան և նրբաճաշակությունը, որը զարմանալիորեն համատեղվում էր զանգվածների գոեհկության և տգիտության հետ:

## ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ, ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԵՎ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

Հետպատերազմյան տարիներին անտիկ պատմության գերմանացի մասնագետները, հավատարիմ մնալով Ռանկեի «պատմականության» մեթոդին, չարձանագրեցին այդպիսի հաջողություններ, իչպես օրինակ անգլո-ամերիկյան և ֆրանսիական հեյլենիստագետները: Վերջիններս «քիչ կաշկանդված լինելով հետաքրքրությամբ դեպի քաղաքական պատմությունը՝ իրենց ազգային դպրոցների ոգով, ավելի հակված էին հասարակական-քաղաքական և քաղաքակրթության խնդիրների հետազոտմանը»: Անգամ, երբ առանձին հետազոտողներ դիտարկում էին հեյլենական և տեղական ավանդույթների փոխազդեցության խնդիրը, դա որպես օրենք վերաբերվում էր կրոնին, գաղափարախոսությանը կամ մշակույթին<sup>2</sup>: Սակայն վերջին երկու տասնամյակներում հեյլենիզմի ուսումնասիրության բնագավառում Գերմանիայում ևս որոշ առաջընթաց է նկատվում<sup>3</sup>: 1996 թ. Բեռլինում հրատարակվել են հեյլենիստական դարաշրջանին բնորոշ մշակույթային փոխակերպումների (Akkulturation) և քաղաքական կազմակերպման խնդիրներին նվիրված միջազգային կոլոքվիումի նյութեր<sup>4</sup>: Այդ նյութերի ժողովա-

<sup>1</sup> Фролов 1982: 14.

<sup>2</sup> Kahrstedt 1936: 120–124; Schneider 1967: S. 2 ff.; Habicht 1969; Хабихт 1999; idem 2006.

<sup>3</sup> Ehling 1996: 31–37; idem 1997: 21–27; idem 1998: 97–106; idem 1998; idem 1998: 141–151.

<sup>4</sup> Hellenismus 1996; Between Alexandria and Jerusalem: the Dynamic of Hellenistic and Jewish Culture 2005: xiv.

ծուի մեջ, ինչպես և վերջին շրջանի մի քանի այլ հրատարակություններում<sup>1</sup>, հստակ արտահայտվեցին հին աշխարհի հասարակությունների միջև քաղաքակրթական շփման և փոխազդեցության ձևերի ուսումնասիրության նոր միտումներ, որոնք վկայում են, որ գերմանական պատմագիտությունը յուրացրել է համաշխարհային հելլենիստագիտության նվաճումները և, զոնե մասամբ հրաժարվելով եվրոպակենտրոն մոտեցումներից, այժմ զարգանում է ժամանակին համընթաց:

Հերման Բենգտսոնի<sup>2</sup> մահվանից (1989) հետո (որն, ի դեպ, վերջին շրջանում, ընկնելով ուրիշ ծայրահեղության մեջ, համարում էր, որ հելլենիստական պատմությունը Ք.ա. III-I դդ. համաշխարհային պատմություն է), արդի գերմանական հելլենիստագիտության առաջատար դիրքերի վրա է գտնվում Անդրեաս Մեյլը (Andreas Mehl)<sup>3</sup>: Վերջինիս գրչին են պատկանում բազմաթիվ միջազգային ճանաչում ստացած աշխատություններ<sup>4</sup>:

Վերջին շրջանում հելլենիստական ուսումնասիրությունների բնագավառում զգալի առաջընթաց է նկատվում նաև սկանդինավյան երկրներում, Հոլանդիայում<sup>5</sup> և Բելգիայում: Այսպես Ֆլամանդական Բրաբանտի կենտրոնում գտնվող Լյովենի կաթոլիկական համալսարանի (Katholieke Universiteit Leuven) «Դասական հետազոտությունների ինստիտուտը» (Institute of Classical Studies) դարձավ արևմտաեվրոպական հելլենիստական ուսումնասիրությունների «Մեքքան»: Այստեղ բազմիցս անցկացվել են կոլոքվիումներ՝ նվիր-

ված անտիկ և մասնավորապես հելլենիստական պատմության արդի խնդիրներին<sup>1</sup>: Այդ գիտաժողովների նյութերը հրատարակվում են *Studia Hellenistica* տարեգրքում: Դրանցից հատկապես հետաքրքիր են հելլենիզմին նվիրված մի քանի ակնարկներ<sup>2</sup>: Այդպիսի գիտաժողովներից էր, օրինակ, «Պոլիբիոսի ստվերը» (“The Shadow of Polybios”) խորագիրը կրող կոլոքվիումը, որի նյութերը հրատարակվեցին «*Studia Hellenistica*» ծավալուն պրակում: Գիտաժողովի նախաձեռնողն ու ակտիվ մասնակիցը Ուոլբանքն էր, որը մի շարք հելլենիստական հեղինակներին այլաբանորեն անվանեց «Պոլիբիոսի ստվերներ»: Ըստ անգլիական պատմաբանի, Պոլիբիոսի նախորդ և ժամանակակից հելլենիստական հեղինակները մշակել էին հետաքրքիր և կուռ պատմագիտական հղացք, որն էլ հետագայում ստեղծագործաբար օգտագործվեց Հռոմում պատանդ ընկած հույն պատմագրի կողմից: Այսօր պատմաբաններին հայտնի են Պոլիբիոսի նախորդ առնվազն մի քանի հեղինակների անուններ, որոնց գործերը թեև մեզ չեն հասել նրանց ոչ հռոմեական կողմնորոշման պատճառով, բայց մեծ ազդեցություն են թողել Պոլիբիոսի պատմագիտական ընկալումների վրա: Այդ հեղինակների անուններն են Եփորոս, Թեոպոմպոս, Տիմոս, Փիլինոս, Կալլիսթենես, Արատոս, Փիլարքոս և Ջենոն Հռոդոսացի, պատմիչներ Ագատիոկեսը Սամոսից և Անտիսթենեսը, Ֆաբիոս Պիկտորը, քննադատներ Սոսիլոսը<sup>3</sup>: Գիտաժողովի նպատակն էր գտնել Պոլիբիոսի և իր հաջորդների գործերի մեջ ոչ հռոմեասեր հելլենիստական պատմագիտական հայացքների հետքերը, վերականգնել նրանց ստեղծագործությունների հատվածները, որն, անշուշտ, դժվարին գործ է, հատ-

<sup>1</sup> Տե՛ս օրինակ. Schuol, Hartmann, Luther (Hrsg.) 2002.

<sup>2</sup> Տե՛ս Bengtson 1968.

<sup>3</sup> Холод 2005: 532.

<sup>4</sup> Mehl 2000 (2001): 619–761; idem 1995 (erschienen 1996): 27–50; idem 1996 (erschienen 1997): 377–414; idem 1996: 127–152; idem 1995 (erschienen 1996): 93–132; idem 1996 (erschienen 1997): 215–260; idem 1999: 451–458.

<sup>5</sup> Van der Spek 1985: 541–562; idem 1987: 57–74; idem 1988. Philadelphia, 1992: 235–260; idem 1993: 61–77; idem 1993: 91–101; idem 1994: 15–27; idem 1995: 173–245; idem 1998: 137–147; idem 1997/98: 167–175; idem 1998: 205–258; idem 2000. 293–313; idem 2000: 27–36; idem 2000 [2001]: 437–446; idem 2004: 303–332; Vargyas 2004: 333–347.

<sup>1</sup> Իման միջոցառումներ պարբերաբար անցկացվում են նաև Ամստերդամում:

<sup>2</sup> Van 't Dack, Van Dessel, Van Gutcht (Ed.) 1983; Cohen 1983: 63–74; Mehl 1986: XVI և 351 S. Dietze 2000: 77–89.

<sup>3</sup> Timaios, Philinos, Phylarkhos, and Zeno of Rhodes, historians of Agathokles and Antisthenes, Fabius Pictor, the criticism of Sosylos.

կապես Պոլիբիոսի «Պատմության» հատվածային փնելու պատճառով, բայց, ըստ ժողովի մասնակիցների, ոչ անհնարին:

Այսպես Ֆ. Ուոլբանքն իր "The Two-Way Shadow: Polybius Among the Fragments" ակնարկում նշում է, որ թեև Պոլիբիոսի «Պատմության» տեքստն ինքը պահպանվել է միայն մասամբ (only Books 1–5 survive entirely intact) և կարոտ է վերականգնման ու լրացման, այնուամենայնիվ այն մնում է գլխավոր աղբյուր ավելի վաղ հեղինակների գործերի վերականգնման համար: Որպես օրինակ Ուոլբանքը քննության առարկա է դարձնում Պոլիբիոսի երկու դրվագներ (6.264c, 6.272a–b), որոնք նրա կարծիքով պատկանում են մեկ այլ հեղինակին՝ Աթենայոսին: Անշուշտ, ինչպես նշում է Ուոլբանքը, դա շատ բարդ աշխատանք է և պահանջում է նուրբ ինտերտեքստուալ մոտեցում:

Ընդհանուր առմամբ քննադատելով արևմտյան արդի հելլենիստագիտությունը, կարելի է եզրակացնել, որ թեև հետազոտողների մեծ մասը շարունակում է հելլենիզմի պատմությունը դիտարկել եվրոպակենտրոն տեսանկյունից, պատմաբանների նոր սերունդը հելլենիզմի հանդեպ դրսևորում է ավելի ճկուն վերաբերմունք, ցուցաբերելով ավելի սևեռուն ուշադրություն հին արևելյան՝ ղպտիերեն, արամերեն, եբրայերեն, պարսկերեն, սանսկրիտով և այլ լեզուներով աղբյուրների նկատմամբ: Առաջ է քաշվում հելլենիզմի դարաշրջանում երկլեզվության խնդիրը<sup>1</sup>, մանրամասն ուսումնասիրության առարկա է դառնում հելլենիստական աշխարհի ոչ հունա-մակեդոնական տարրերի պատմությունը<sup>2</sup>, օրինակ Եգիպտոսում<sup>3</sup>, Փոքր Ասիայում, Կենտրոնական Ասիայում<sup>4</sup>, Պաղեստինում և Հյուսիսային Մերձսևծովյան երկրներում:

<sup>1</sup> Fitzmyer 1970: 501–531.

<sup>2</sup> Bichler 1983; Gehrke 1990.

<sup>3</sup> Տես օրինակ՝ Samuel 1989; Haagsma, den Boer, Moormann (edd.) 2003: 161–80.

<sup>4</sup> Bernard and Guillaume 1980: 9–32; Bernard 1994: 473–511.

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հելլենիստագիտության որոշ ավանդույթներ ձևավորվել են նաև Լեհաստանում: Դա հնարավոր դարձավ բուլշևիկյան հեղափոխությունից հետո Պետրոգրադից Վարշավա տեղափոխված Տ.Ֆ. Ջելինսկու ջանքերի շնորհիվ: Գավառական Վարշավայի համալսարանում, որի պրոֆեսորադասախոսական կազմը խանդում էր Ռուսաստանում ունեցած Ջելինսկու փառքին և պիտակավորել էր նրան օտարամոլ, նա չստացավ արժանի ճանաչում և բոլորի կողմից մոռացված մահացավ Գերմանիայում 1944 թ: Ուստի Ջելինսկուն մենք դիտարկելու ենք ռուսական հելլենիստագիտության համատեքստում: Սակայն այդ խոշոր պատմաբան-մշակութաբանի դերը Լեհաստանում անտիկագիտության և հատկապես հելլենիստագիտության կայացման գործում չափազանց բարձր է: Այսօր Ջելինսկին Լեհաստանում ճանաչված է որպես ազգային դասական պատմագիտության ռահվիրա:

Հելլենիստական ուսումնասիրությունները Լեհաստանում լայնորեն սկսեցին իրականացվել Երկրորդ աշխարհամարտից հետո, այն էլ խորհրդային հելլենիստագիտության ընդհանուր համատեքստում: Քանի որ Լեհաստանը պահպանողական կաթոլիկական երկիր էր, հակառակ խորհրդային գրաքննության, այստեղ ավանդաբար պահպանվում էր հետաքրքրություն վաղ քրիստոնեության և հելլենիստական աշխարհի հետ նրա փոխադարձությունների խնդրին: Այդ հարցի ուսումնասիրության գործում

մեծ ներդրում ունեն են Կ. Միխայլովսկին<sup>1</sup>, Ա. Կրավչուկը, Վ. Վիտկովսկին<sup>2</sup>, Թադեոշ Ջելինսկու և Կազիմիր Մորավսկու աշակերտ, դասական բանասեր Կ. Կումանեցկին<sup>3</sup> և այլք:

Ինչ վերաբերում է մերօրյա հունական հելլենիստագիտությանը, ապա այն թե՛ բուն Հունաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, առանձնակի զարգացում չի ստացել: Ինչպես և կարելի էր սպասել, հույն պատմաբանները հելլենիզմը դիտարկում են դասական Հելլադայի պատմության համատեքստում և հելլենիստական քաղաքակրթությունը համարում Հունաստանի պատմության անբաժանելի մասը: Որոշ հետաքրքրություն են ներկայացնում Դասկալակիսի աշխատությունը, որում հեղինակը կարծես գիտակցում է այն անջրպետը, որը բաժանում էր դասական Հելլադան և հելլենիզմը<sup>4</sup>:

Այսպիսով, վերջին մեկուկես դարում արևմտյան հելլենիստագիտությունը անցավ երկար և բարդ ճանապարհ և այսօր գտնվում է նոր ուղու որոնումների մեջ:

Հելլենիստական Սպարտայի պատմությանը նվիրված է Ժ.Ժ. Տեսկյեոի «Նաբիսոս»<sup>5</sup> գիրքը, որում ապացուցվում է, որ Ագիստը և Կլեոմենոսը, ի տարբերություն Նաբիսոսի, սոցիալական բարեփոխիչներ չէին և, իր կարծիքով, նրանց միակ նպատակը Սպարտայի երբեմնի ռազմական և քաղաքական հզորության վերականգնումն էր:

Հելլենիզմի պատմության առանձին մասնավոր խնդիրներին նվիրված հետազոտությունների մեջ արժանի է հիշատակությանը Է. Բիլլի «Հելլենիստական աշխարհի քաղաքական պատմությունը»<sup>6</sup> ֆրանսերեն լեզվով թերևս ամենալիարժեք փաստագրական հետազոտությունը:

<sup>1</sup> Михайловский 1973.

<sup>2</sup> Витковский 2005.

<sup>3</sup> Куманецкий 1990.

<sup>4</sup> Dascalakis 1965.

<sup>5</sup> Texier 1975.

<sup>6</sup> Политическая история эллинистического мира (2 тома, 1966–1967).

## ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

### ՀԵԼԼԵՆԻԶՄԻ

#### ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

#### ՀԵԼԼԵՆԻԶՄԸ ԵՎ ՋԵԼՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ

#### ՀՐԵԱԿԱՆ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Երկրորդ աշխարհամարտից հետո անտիկ դարաշրջանի վերաբերյալ բրիտանական հետազոտական միտքը հայտնվել էր ճգնաժամի մեջ<sup>1</sup>: Եվ դա հատկապես նկատելի էր հելլենիստական ուսումնասիրությունների բնագավառում, ուր մինչև XX դ. վերջին տասնամյակը գրեթե չեն արտահայտվել նոր մտքեր և գաղափարներ, չեն ստեղծվել նոր դպրոցներ, իսկ հետազոտողներ գլխավորապես կենտրոնացել էին հունա-հռոմեական աղբյուրների մանրախոյզ ուսումնասիրությունների և պատմագիտական հանրագիտարանների հրապարակումների վրա: Մեթոդաբանության մեջ ևս ակնհայտ էր որոշակի նահանջ. բրիտանացի պատմաբանները ավելի հաճախ քան նախկինում դիմում էին XIX դարի գերմանական պատմականության մեթոդի, որը XX դ. երկրորդ կեսում ընկալվում էր որպես ժամանակավրիպություն: Բացի այդ բրիտանացի հետազոտողները (ինչպես և արևմտաեվրոպական գրեթե բոլոր ազգային պատմագիտական դպրոցների ներկայացուցիչները) հել-

<sup>1</sup> Դրան հակառակ, հատկապես ֆրանսիայում և Իտալիայում վերելք ապրեց միջնադարագիտությունը մշակութաբանությունը և մի շարք հարակից գիտություններ, Գերմանիայում՝ հնագիտությունը, արևելագիտությունը և այլն:



լենիզմի պատմությունը ավանդաբար շարունակում էր դիտարկել եվրոպակենտրոն տեսանկյունից<sup>1</sup>:

Դրան հակառակ շատ դինամիկ էր զարգանում հրեական հելլենիստագիտությունը: Արևելքում հունա-մակեդոնական տարրի և հրեաների փոխհարաբերությունների խնդիրն արդեն վաղուց էր հայտնվել (ազգությամբ հիմնականում հրեա) հետազոտողների ուշադրության կենտրոնում<sup>2</sup>: Հրեական հելլենիստագիտությունը արևմտյան ազգային պատմագիտական դպրոցներից թերևս առաջինն էր, որ փորձեց հելլենիստական դարաշրջանը դիտարկել ոչ միայն հունա-մակեդոնական ընկալման տեսանկյունից:

Հրեական հելլենիստագիտության կայացման հարցում գործուն դեր ունեցավ XX դ. հիրավի խոշորագույն անգլիական պատմաբան Ա.Ջ. Թոյնբին (1889–1975): Նա ծնվել է Լոնդոնում վիկտորյա «Ոսկեդարի» մայրամուտին և երիտասարդ տարիներին ականատես է

<sup>1</sup> Սակայն վերջին երեք տասնամյակներում տեղի ունեցավ անսպասելի շրջադարձ, ասպարեզ իջան նոր ուսումնասիրողներ, որոնք մշակեցին նոր մոտեցումներ Հին Արևելքի և հելլենիզմի պատմության խնդիրների վերաբերյալ: Այսպես, 1987 թ. լույս տեսավ «Հելլենիզմն Արևելքում» գիտական աշխատությունների ժողովածուն (Kuhrt, Sherwin-White (Ed.) 1987), որտեղ մի խումբ համալսոհներ հանդես եկան նոր, իսկ առանձին դեպքերում լավ մոտացված հին գաղափարներով: Տարբեր բնագավառների վեց մասնագետներ (ներառյալ երկու խմբագիր) իրենց համատեղ աշխատության մեջ արտահայտեցին այն միտքը, որ Մելնկյան թագավորության համար Ատրեստանի, Բաբելոնի և Աքեմենյանների տերության ժառանգությունն ուներ ավելի մեծ նշանակություն, քան ենթադրվում էր մինչ այդ: Ուստի այդ և ուրիշ հելլենիստական թագավորությունների բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել նախնաառջ հին արևելյան քաղաքակրթությունների համատեքստում: Այդ գաղափարներն իրենց հետագա զարգացումը ստացան այդ գիտական խմբի ղեկավարներ՝ անտիկագետ դոկտոր Մյուզեն Շերվին-Ուայթի (Susan Sherwin-White) և արևելագետ, Լոնդոնի համալսարանի քոլեջի պրոֆեսոր Էմիլի Բյուրթի աշխատանքներում (Տե՛ս Kuhrt, Sherwin-White 1991: 71–86; idem 1993; Kuhrt & Sancisi-Weerdenburg (edd.) 1994: 283–310:

<sup>2</sup> Moor 1927: 114; Box 1932: 256; Tcherikover 1966; O'Connell, Kevin 1971: 228–31; Jeremias 1976; Goodenough 1953; The Jewish People in the First Century: Hist. Geography, Political History and Religious Life and Institutions 1976: 946; Bar-Kochva 1989; Harrison 1994: 98–108; B.C.E. to 640 C.E. 2001; Choon-Leong 1997; Cohen 1999. Reviews: Wilson 2000/01: 299–300; Hoover 2003: 29–39; Hayes & Mandell 1998; Millard 2000.

եղել Բրիտանական կայսրության աստիճանական մարմանը: Դա չէր կարող ազդեցություն չթողնել Թոյնբիի պատմախոհական հայացքների վրա: Առնույդ Թոյնբին ապրել է երկար կյանք, մի բան որ շատ օգտակար է պատմաբանի համար: Ի տարբերություն մաթեմատիկոսների և ֆիզիկոսների, որոնք իրենց հայտնագործությունները հիմնականում կատարում են երիտասարդ տարիքում, փիլիսոփայող պատմաբանին կայացման համար պետք է շատ ժամանակ: Թոյնբին տեսել է անհանգիստ 20-րդ դարի երեք քառորդ: Սակայն փոթորկոտ քսաներորդ դարը չչեղեց Թոյնբիին ընտրված ուղուց: Ավելին, դինամիկ և անհանգիստ դարաշրջանն օգնեց Պատմաբանին նորովի նայել անտիկ պատմությանը:

Իր տարբեր աշխատանքներում և հատկապես տասներկու հատորանոց «Պատմության ուսումնասիրություն» աշխատության մեջ Թոյնբին մշակել և շրջանառության մեջ է մտցրել հելլենիզմի սկզբունքորեն նոր՝ իսկապես քաղաքակրթական հղացք<sup>1</sup>: Այդ ընկալման հիմքում ընկած է պատմական ժամանակի շրջափուլային ընկալում: Պատմաբանի աշխատությունների մեջ հելլենիզմը ներկայացված է որպես ինքնուրույն ու ինքնարժեք քաղաքակրթություն և ոչ թե անտիկ Հունաստանի քաղաքակրթական աղոտ ստվեր՝ կարծես պատահաբար ընկած Արևելքի վրա: Մյուս կողմից Թոյնբին զգալի ներդրում ունեցավ անտիկ աշխարհի ուսումնասիրության գործում: Նա ի մի բերեց և արժևորեց մեծ քանակությամբ էմպիրիկ նյութեր, սովեց անտիկ քաղաքակրթության բացառիկ պատմական բնութագիր, ի տարբերություն Շպենգլերի՝ այն դիտարկելով որպես հասարակական կատեգորիա:

Իր «Պատմության ուսումնասիրությունը» հիմնարար աշխատության մեջ Թոյնբին բազմիցս անդրադարձել է հելլենիստական քաղաքակրթության և հրեա ժողովրդի փոխհարաբերությունների

<sup>1</sup> Toynbee 1959: 108.

հիմնախնդրին: Պատմության տեսաբանը հելլենիզմը ներկայացնում էր որպես ավանդական եբրայական քաղաքակրթությանը նետված մարտահրավեր: Ըստ նրա, Հուդայի հրեությունն առաջ էր քաշել այդ մարտահրավերի երկու պատասխան՝ զելոտություն և հերովդություն<sup>1</sup>: Անվանումները խիստ պայմանական են և տրվել են ըստ Հռոմեական տիրապետության տակ գտնվող հուդայական կրոնա-հասարակական խմբերի անվանումների: «Ջելոտները» ագրեսիվ և խիստ պահպանողական խմբավորում էր, որը մերժում էր դինամիկ արևմտյան քաղաքակրթության արժեքները, վերջիններիս մեջ տեսնելով վտանգ իր կարծրացած ներփակ, ինքնամփոփ և շատ յուրօրինակ քաղաքակրթության համար: «Հերովդականներին» Թոյնբին անվանել է ըստ Հուդայի Հերովդես Մեծ արքայի, որը դարձավ արտաքին աշխարհին բաց հրեության սակավ մասի մարմնավորումը<sup>2</sup>: Անզիջում և մոլեռանդ զելոտներն իրենց շարքերը համալրում էին գլխավորապես քաղաքաբնակ (ավելի հազվադեպ գյուղաբնակ) ստորին խավերի հաշվին, թեև նրանց առաջնորդները գրեթե ամբողջությամբ կազմված էին քրմական դասի ներկայացուցիչներից և սնանկ, բայց փառամոլ ու իշխանատենչ ազնվականներից: Դրան հակառակ «հերովդականների» մեծամասնությունը ծագում էր տեղական և հելլենիստական քաղաքակր-

<sup>1</sup> Тойнби 1991Ж: 587–89.

<sup>2</sup> Այդ թեի թերևս ամենաճանաչված ներկայացուցիչը Հովսեփոս Փլավիոսն էր (հատկի է նաև որպես Հովսեփի Բեն Մաթաֆիա, իսկ հռոմեական քաղաքացի դառնալուց հետո՝ Տիտոս Փլավիոս Հովսեփոս, Ք.հ. 37 – մոտ 100 թթ.): Հելլենիստական շրջանի հրեա պատմիչ և մատենագիր: Լինելով զելոտ, հրեական պատերազմի ժամանակ (66–71 թթ.) նա անցնել է հռոմեացիների կողմը, դառնալով Փլավիոսների կայսերական ընտանիքի կլիենտ: Գրել է «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Ընդդեմ Ալիոնի», «Եյանքը» աշխատությունները, որոնցում նա ձգտում էր հունա-հռոմեական աշխարհը ծանոթացնել հրեաների մշակույթի և պատմության հետ, մեղմել հրեաների դեմ կանխակալ վերաբերմունքը, բացատրել հրեական սրբազան տեքստերը արևմտյան փիլիսոփայության լեզվով, իրականացնել մի տեսակ քաղաքակրթական թարգմանություն: Թեև հրեական պատմության մեջ դա առաջին օրինակը չէ: Նման փորձ ավելի վաղ կատարել է Փիլոն Ալեքսանդրացին:

թական արժեքների համաչափությանը միտված ընտրախափի ներկայացուցիչներից և նրանց սպասավորներից: Պատահական չէ, որ «հերովդականության» գլխավոր կենտրոնը դարձավ թագավորական պալատը: Ի տարբերություն հնապաշտ «զելոտների», «հերովդականները», բաց էին արտաքին աշխարհին և միտված նորարարությանը<sup>1</sup>, սակայն (թե՛ հնում, թե՛ այսօր) ավանդապաշտ հրեությունը մերժում էր նրանց, ընկալելով իբրև օտարամոլ և կոլլաբորանտ<sup>2</sup>:

Այդ երկու հոսանքներից Թոյնբին նախապատվություն էր տալիս «հերովդությանը»<sup>3</sup>: Դրա մեջ տեսնելով որոշակի արատներ, նա այնուամենայնիվ համարում է, որ հրեության առջև ծառայած մարտահրավերի միակ պատասխանը «խաչաձևումն» է, նորի և ավանդականի ներդաշնակ համադրականությամբ: Սակայն, ըստ Թոյնբիի, ոչ բոլոր քաղաքակրթություններն են ունակ խաչաձևման: Նա համարում է, որ հրեության մեծամասնությունն անընկալունակ գտնվեց հելլենիստական քաղաքակրթական արժեքների ընկալմանը և կորցրեց պատմության կողմից տրված համակողմանի զար-

<sup>1</sup> «Հերովդական» մոդեռնիզացման վաղ օրինակը Թոյնբին համարում է Ռուսաստանի վեստերնացումը Պյոտրի և Թուրքիայի մոդեռնիզացումը Քենալի օրոք:

<sup>2</sup> Суюнбаев 2004: <http://www.centrasia.ru/newsA.php?st=1098821760> 11 Маї, 2010 at 12:59 PM.

<sup>3</sup> Ուսումնասիրողները վաղուց նկատել են, որ Թոյնբիի կուռ պատմիմաստասիրական կառույցի հիմքում ընկած է անտիկ քաղաքակրթության մոդելը: Հայտնի հռոմեացի պատմաբան դեն Վոյեզը, քննադատելով Թոյնբիի մոտեցումները գրում էր, որ վերջինս շատ է տարված անտիկայով և իր պատմագիտական սխեմաները գծելիս տարբեր քաղաքակրթությունները դիտարկում է հելլենիստական քաղաքակրթության հետ համադրության մեջ: Ինքը՝ Թոյնբին առանց վարանելու ընդունում էր, որ դասական քաղաքակրթությունն իր համար չափանիշ է և մյուս քաղաքակրթությունները նա իրոք երբեմն դիտարկում է անտիկ քաղաքակրթության հետ համեմատության մեջ: (Сепреев 1983: <http://www.dissercat.com/content/ellinskaya-tsvivilizatsiya-v-nauchnom-tvorchestve-arnolda-toinbi>. 19.11.2008): Մակայն ի տարբերություն Շպենգլերի, Թոյնբին քաղաքակրթությունները ընկալում էր իբրև «մաքուր» և քարացած, այլ բարդ և համադրական երևույթ: Ըստ Թոյնբիի քաղաքակրթությունն ինքնարարվող օրգանիզմ է, որը կարող է անվերջ հարստանալ նոր տարրերի հաշվին: Այդ գործընթացի դադարը հանգեցնում է քաղաքակրթության լճացման և աստիճանական մարմանը:

գացման եզակի հնարավորություն: Հարդյունս դրա, հրեաները, Թոյնքիի պատկերավոր արտահայտությամբ, վերածվեցին «քարացած հանածոների»<sup>1</sup>, ավերվեց Երուսաղեմի տաճարը, իսկ հրեության մեծ մասը հայրենիքում իր համար հեռանկար չտեսնելով սփռվեց աշխարհով մեկ, դառնալով պանդուխտ և թափառական: Ըստ էության հրեությունը, ամփոփվելով յուր մեջ, չկամեցավ ինտեգրվել աշխարհին մնալով իր հայրենիքում, ուստի առանձին անհատները ստիպված եղան լքել հայրենի հողը և օտարության մեջ սովորելով այն, ինչն իրենց նախնիները չցանկացան սովորել սեփական հարկի տակ:

Հակառակ դրան հելլենիստական քաղաքակրթությունն ավելի ճկուն էր, այն մշտապես խաչաձևվում էր, համալրվելով այլազան քաղաքակրթական տարրերով, ինչի շնորհիվ անընդհատ նորացվում և հարատևում (օրինակ՝ հռոմեական իրավունք, հունական գնոստիցիզմ, միհրականություն և հուդայական կրոն, որի համարությունից ծնվեց քրիստոնեությունը, իսկ ավելի ուշ նոր տարրերի ոչ մեխանիկական գումարմամբ՝ նաև իսլամը)<sup>2</sup>: «Ստիպված ենք եզրակացնել, – գրում է Ժոզեֆ Արթյուր դը Գոբինոն, – որ մարդկության որոշ մասն ի սկզբանե զուրկ է նույնիսկ աննշան ինքնաքաղաքակրթման ունակությունից, քանի որ ի վիճակի չէ իր մեջ ճնշել խաչաձևման հանդեպ բնական նողկանքը, որը մարդիկ և կենդանիները

որ զգում են խաչաձևման հանդեպ»<sup>1</sup>: Խաչաձևումն անբնական երևույթ է, սակայն առանց դրա չի կարող գոյանալ քաղաքակրթությունը, որն ինքն էլ «անբնական» է: Քաղաքակրթությունը կարող է ի հայտ գալ միայն այն ժամանակ, երբ մարդկային համակեցությունը ձերբազատվում է իր նախնական «մաքուր» և «բնական» վիճակից և դառնում բարդ և համադրական:

Անշուշտ հրեությունը վաղուց դասեր է քաղել իր հելլենիստական անցյալից և արդի Իսրայել պետությունը, ավելի քան որևէ մեկը, հավատարիմ մնալով ավանդական հրեական արժեքներին, միևնույն ժամանակ բաց է աշխարհին և բոլոր տեսակի քաղաքակրթական ազդեցություններին: Սակայն հին եբրայական քաղաքակրթության և հատկապես դրա հոգևոր առանցքը կազմող արժեքների մեկնաբանությունը ոչ միանշանակորեն ընդունվեց օրթոդոքս հրեության կողմից: Հատկապես ցավագին ընդունվեց «հրեական ապագայնամետության» (ֆուտուրիզմ) վնասակար ազդեցության գաղափարը: «Ապագայնամետությունը», պատմագետի տերմինաբանությամբ, «... կենսակերպ է, որը տանջում է նրան, ով տենդագին որոնում է նոր ուղիներ, դրդված առաջխաղացման ներքին անորոշ մղմամբ»: Ուստի դրա «... բնորոշ հատկանիշներից է փրկության և երկրային թագավորության մեջ հանգիստ գտնելու հույսը: Դա բնորոշ է հրեական ֆուտուրիզմին: Քանի որ հրեաների պատմությունը լավ է արտացոլված վավերագրերում, մենք հնարավորություն ունենք այդ երևույթը դիտարկել երկար ժամանակահատվածում»: Այնուհետև Թոյնքին շարունակում է. «Հրեաները չբուժվեցին նոր աշխարհիկ պետություն ունենալու ֆուտուրիստական հույսից իրենց պատմության նոր փուլերի ժամանակ», «...հրեաներին պետք եղավ ավելի քան վեցուկես դար, որպեսզի

<sup>1</sup> Тойнби 2002: 122. Մուսոլինին մի առիթով նկատել է, որ կան ոչ միայն պրոլետարական դասակարգեր, այլև պրոլետարական ազգեր. այդ ազգերի թվին են պատկանում արդի աշխարհի ոչ արևմտյան ժողովուրդներ, անգամ էթն «հերովդակներից» հերոսական ճիգերի շնորհիվ երբեմն հաջողվում է արտաքուստ փոխել երկրի դիմապատկերը. ներքուստ դրանք միևնույն է մնում են «գեոտական»:

<sup>2</sup> «Ասորական և հելլենական տարրերն անհնար է տարանջատել ոչ միայն քրիստոնեությունից և իսլամից, այլև քրիստոնեական և իսլամական քաղաքակրթություններից, որոնց համար դրանք կատարել են տիկնիկների դեր: Այդ երկու կրոններն ունեցել են իրենց նախորդները՝ ասորական և հելլենական, ինչն ունի սկզբունքային կարևորություն: Իսլամը, քրիստոնեությունը և մի շարք քաղաքակրթություններ՝ աճեցրած այդ երկու կրոններով, նույն մշակութային շերտի պտուղներն էին, կազմված ինչպես ասորական, այնպես էլ հելլենական տարրերից» (Тойнби 2002: 163):

<sup>1</sup> Де Гобино 2001[2000].

փորձերի և սխալների մեթոդի շնորհիվ հասկանան, որ ֆուրտորիզմը ոչ ճիշտ ուղի է»<sup>1</sup>:

Այդ և մի քանի նմանատիպ արտահայտություններից հետո, մեր օրերի մարգարեն համարվող Թոյնբին, անսպասելիորեն մերժվեց Արևմուտքում<sup>2</sup>: Բացի այդ, հրեա պատմաբանները քննադատում են Թոյնբին հելլենիստական դարաշրջանի հրեությունը ոչ թե իբրև ինքնուրույն, այլ ավելի մեծ և նշանակալից ասորական քաղաքակրթության բաղադրամասը դիտարկելու համար: Այդ «սխալմունքի» պատճառը հրեա պատմաբաններն ուզում են տեսնել ոչ թե քաղաքակրթական, այլ քաղաքական գործոնների մեջ: Բանն այն է, որ մակաբեացիների ապստամբության պարտությունից և Տաճարի խորտակումից հետո, հռոմեացիները Հուդայի և Սամ Արայի տարածքը կցցեին պրովինցիա Սիրիային, ինչը, նրանց կարծիքով, մոլորության մեջ մտցրեց բրիտանացի պատմաբանին<sup>3</sup>: Սակայն շատ տարօրինակ է մեղադրել քաղաքակրթագետ պատմաբան Թոյնբին պատմության քաղաքագիտական և ոչ թե քաղաքակրթական ընկալումների և մեկնաբանությունների համար: Առաջ են քաշվում նաև այլ բնույթի մեղադրանքներ, այսպես հրեաների Աստծուն Թոյնբին անվանում է «Յահվե» (օրթոդոքս հրեական միջավայրում դա պատժելի զանցանք է), մինչդեռ քրիստոնեական Աստվածը նրա համար անանուն է և այլն: Սակայն, Թոյնբիի մոտեցումների մեջ երբայագետների համար թերևս ամենատիպիկն այն էր, որ պատմաբանը անուղղակի կերպով երբայությունը հակադրում է քրիստոնեությունը: Ըստ նրա երկու հազարամյակների սահմա-

<sup>1</sup> Тойнби 2002: 404–405.

<sup>2</sup> Նրա տեղը Արևմուտքի հասարակագիտական մտքի երկնակամարում գրավեցին Թոյնբիական «պատմության վերջն» ազդարարած Ֆրենսիս Գուկայաման (Фукуяма 2004 (англ. Fukuyama 1992)), կամ Թոյնբիի խղճուկ սովերենը՝ Մ. Հանտիգտոնը (St'u Хантингтон 2003) և Յուրգեն Հաբերմասը (St'u Хабермас 2008), որոնք իրենց քաղաքագիտական վերլուծություններում հենվում են Թոյնբիյան հղացքների վրա, առանց հեղինակին վկայակոչելու:

<sup>3</sup> Гарбар: <http://www.berkovich-zametki.com/Nomer18/Garbar2.htm>

նազվիսին հրեությունը հայտնվել էր քառուղու առջև՝ ընտրել «զելոտություն», որն ըստ պատմաբանի նեղ ազգայնական, անգամ ուսիստական կրոնա-գաղափարական ուղղություն էր, կամ քրիստոնեությունը, որը պատմաբանը համարում է հելլենիզմի կվինտ-էսենցիան էր և դեպի վաղվա օրը տանող դուռ: Հրեությունն ընտրեց պատմության կողմից առաջադրված առաջին ճանապարհը:

Իրականում հրեա պատմաբանների կողմից Թոյնբիի հասցեին ներկայացված մեղադրանքներն անհիմն են: Նա ոչ միայն չի «նսեմացնում» հրեա ժողովրդին, կամ «անտեսում» և «աղճատում» վերջինիս դերը մարդկային պատմության մեջ, այլ հակառակը՝ հետհելլենիստական հրեության մեջ տեսնում է ինքնարարման և ինքնահաստատման մեծ ներուժ: Բացի այդ, Թոյնբին հրեական հելլենիզմի շատ վառ և հատկանշային օրինակի վրա ընդամենը ձգտել է ցույց տալ հելլենիստական դարաշրջանի կարևոր երևույթներից մեկը՝ այն, որ Ռոստովցևն անվանում էր «արևելյան ռեակցիա», «արևելյան հակազդեցություն»: Երևույթ, որը շատ կամ քիչ արտահայտված ձևով, հանդիպում ենք գրեթե բոլոր արևելյան երկրներում, այդ թվում Իրանում և Հայաստանում:

Սակայն անկախ նրանից, թե ինչ գնահատական են տալիս հրեա ուսումնասիրողները Թոյնբիի հղացքներին, վերջիններս լուրջ խթան հանդիսացան հրեական ազգային հելլենիստական դպրոցի կայացման գործում: Պատմաբանի հետ ակնհայտ և թաքնված բանավեճի ժամանակ լույս տեսան բազմաթիվ «եբրայագիտական» աշխատանքներ: Ի տարբերություն դասական հելլենիստագետների, եբրայագետների մեծ մասը բացահայտորեն պաշտպանում է

<sup>4</sup> Հիշենք Տիգրանի Բ-ի, Արտավազ Բ-ի և Արտաշիսյան այլ «հերովական» արքաների պայքարը հայկական «զելոտության» դեմ, որի դրսևորումներն էին՝ հայ մեծատոհմիկների և ժողովրդի պարթևական կողմնորոշումը և Արշակունիներին զահին հրավիրելը և այլը: «Արաքսը՝ կամուրջներ չէր հանդուրժում»՝ Արևմուտքը Արևելքի հետ կապող կամուրջներ:

«գելոտական» թևը<sup>1</sup>: Նրանք Համոնեյան ապստամբության և Հուդայում նրանց գերիշխանության գլխավոր նվաճումը համարում են հելլենիստական «մշակութային էքսպանսիայի սաստում»: Բացի այդ, նրանց համոզմամբ, շարժման կարևոր ձեռքբերումներն էին «Էրեց-Իսրայելի» ներքին շրջաններում հելլենիստական քաղաքների և նրանցում հելլենականացված սեմական շրջանների ոչնչացումը, հրեական ցարուցրիվ ցեղերի, այդ թվում ոչ հրեական սեմական ժողովուրդների կրոնական-մշակութային տարածուցում (ասիմիլյացիա), վարչա-քաղաքական միասնության վերականգնումն ու համախմբումը<sup>2</sup>: Հետագայում հենց այս, ոչ հելլենիստական բնակչությունը համառ դիմադրություն ցույց տվեց հռոմեական զավթողականության և հակազդեց քրիստոնեության տարածմանը հրեական միջավայրում: Սակայն երբայագրոսների համոզմամբ, սկզբում հունա-մակեդոնական, իսկ ավելի ուշ՝ հռոմեական հելլենիզմը Պաղեստինում, այնուամենայնիվ, հրեաների համար ունեցավ որոշ դրական դերակատարություն, քանի որ ակամայից նպաստեց հրեա ազգի միավորմանը, խթանեց վերջինիս ինքնության վերջնական կայացումը:

Դրան հակառակ դասական հելլենիստագիտության ազգությամբ հրեա և ոչ հրեա հետևորդները, հելլենիզմն ինքնին համարում

<sup>1</sup> Shi'u Hengel 1961 (Translation: The Zealots: investigations into the Jewish freedom movement in the period from Herod I until 70 A.D. 1989); idem 1969, 2nd edn., 1973 (Translation 1974); idem 1974; idem 1974; idem 1991 esp.: 54–62; idem 1991; idem 2001: 6–37; Aitken 331–341; Herr 1977–78: 20–27 (Hebrew); Bichler 1983; Gregory 1940; idem 1989; Feldman 1977: 371–82; idem 1986: 83–111; idem 3–83; 42–44; 416–22; idem 1993, 33 (2002), 290–313; Lieberman 1942; idem 1950, 1962; Brandon 1967: 29 ff.; Barr 1989. Cambridge Histories Online. Cambridge University Press, 28 January 2012; Collins 2001: 38–61; Goldstein 1981: 64–87; Goodman 1994: 167–74; Gruen 1998; Goldhill 2002 [opposition to Greek in renaissance; M. Arnold on Greek and Hebraism]; Schwartz 1991: 16–38; idem 1998: 37–45; idem 2001; Grimal 1968: 5, creating the “mixed” Graeco-barbarian civilization]; Mendels 2002: 35–42.

<sup>2</sup> Хасмоней // Краткая еврейская энциклопедия. Иерусалим, 1976–2005. Том 9, кол. 707–714. История еврейского народа. Эпоха Второго храма. <http://www.eleven.co.il/?mode=article&id=14465&query=>

են մեծագույն արժեք և գտնում են, որ վերջինիս պատմական նշանակությունը ոչ միայն համաշխարհային այլև հրեական պատմության մեջ ավելի մեծ է քան փորձում են ներկայացնել արդի երբայագետները: Նրանց համոզմամբ ժամանակն է հրաժարվել հազարավոր տարիների ավանդույթից համաշխարհային պատմությունը դիտարկել արևմտյան և հրեական քաղաքակրթությունների հարկադրման մեջ, փոխարենը հրեական պատմությունը պետք է ուսումնասիրել համաշխարհային պատմության համատեքստի ներքո<sup>3</sup>: Երբայագետների ծայրահեղական ազգայնական հայացքներն այսօր լուրջ քննադատության են ենթարկվում գիտական հանրության տարբեր շրջանակներում<sup>4</sup>:

Այդ խնդրին է հատկապես նվիրված Քեմբրիջի քառասատոր «Հուդայականության պատմության» Բ հատորը<sup>5</sup>, որն ընդգրկում է հրեության պատմությունը աբեմենյան շրջանից մինչև Տանայան (Tannaitic) դարաշրջանը, որի բարձրակետը դարձավ Միշնայի կոդավորումը (մոտավորապես 250 թ.): Պրակի հեղինակների համոզմամբ հռոմեական տիրապետության դարաշրջանում հելլենիստական և հուդայական մշակույթները դարձան իշխող գրեթե ողջ Միջերկրականում, ինչն անխուսափելիորեն պետք է հանգեցնեի այդ երկու հզոր և իրարամերժ քաղաքակրթությունների բախմանը: Գրքում քննության է առնված հելլենիզմի միաժամանակյա մերժման և յուրացման խնդիրն աշխարհասփյուռ հրեության կողմից: Հելլենիզմի հետևողական մերժումը քաղաքական ասպարեզում հանգեցրեց Մակաբեացիների ապստամբությանը և Ք.ա. 142–63 թթ. Համոնե-

<sup>3</sup> Sevenster 1968. [knowledge of Greek even by Jesus]; Smith 1971; Rappaport 1991: 1–13; Shavit 1997; Jerusalem 1999; Gerdmar 2001; Martin 2001: 29–61; Alexander 2001: 63–80; Kaufmann Y. Christianity and Judaism: Two covenants. Jerusalem, 1988. P. 82–83; Rajak 1990: 261–280; idem 2001: 535–557.

<sup>4</sup> Grabbe 2002; Millar 1978: 1–21;

<sup>5</sup> Davies & Finkelstein 1989.

յան պետության ստեղծմանը: Միևնույն ժամանակ հեյլենիզմի ընդունման և նրա հետ ադապտացման արդյունքում ծնվեցին զանազան մշակութային արժեքներ՝ առաջին հերթին նշանակալից հեյլենիստական հունա-եբրայական, արամեական և զուտ եբրայական գրականություն: Բացի այդ, հեյլենիզմի քաղաքակրթական ճնշման պատճառով, հրեության կրոնական, մտավոր, հասարակական և քաղաքական կյանքում անընդմեջ աճող լարվածությունը սուբլիմացվեց կատարածաբանական մտքի և դրան համապատասխան գրականությանը: Ասվածի լույսի ներքո գրքի հեղինակները որոշակի հետևություններ են անում հրեության հուդա-հեյլենիստական դիքոտոմիայի, այլ կերպ ասած՝ երկփեղկվածության մասին:

Այսպիսով, հրեական հեյլենիստագիտական հետազոտություններն այսօր կարելի է դասել երկու խմբի: Առաջինը պայմանականորեն անվանենք *ոչ ազգային*: Այն ձևավորվել և զարգացել է հիմնականում ազգությամբ հրեա պատմաբանների ջանքերի շնորհիվ, բայց արևմտյան և խորհրդային հեյլենիստագիտական դպրոցների շրջանակներում: Երկրորդը՝ վերջին կես դարում ձևավորված *խորատյան պատմագիտական* դպրոցն է, որը, հենվելով արևմտյան հեյլենիստագիտության նվաճումների վրա և գտնվելով սերտ համագործակցության մեջ տարբեր արտասահմանյան դպրոցների հետ, վերապրում է քանակական և որակական զարգացման ակտիվ շրջան: Անշուշտ այդ երկու՝ արևմտյան և ազգային հետազոտական դպրոցները չի կարելի հակադրել իրար, հակառակը, փոխազդելով՝ դրանք հարստացնում և լրացուցիչ լիցք են հաղորդում միմյանց:

Այդ երկու դպրոցների միավորման օրինակը կարելի է համարել Էլիաս Ջոզեֆ Բիկերմանին (1897–1981), որի կենսագրությունն ըստ էության հրեական հեյլենիստագիտության անցած ուղու ցայտուն դրսևորումն է: Բիկերմանը ծագումով ռուսաստանցի էր (իս-

կական անունը Իլյա Իոսիֆովիչ Բիկերման), ծնվել է Քիշնևում, մանկությունն անցկացրել է Օդեսայում, իսկ ուսումը ստացել Ս. Պետերբուրգի գիմնազիայում, այնուհետև համալսարանում: Այստեղ նրան ուսուցանել է Մ. Ռոստովցևը, որի ազդեցությունը նա կրել է ողջ կյանքում: 1922 թ. Բիկերմանը ծնողների հետ լքում է Խորհրդային Ռուսաստանը և հաստատվում Գերմանիայում: Այստեղ նա շարունակում է ուսումը Բեռլինի Հումբոլդտ համալսարանում և հրատարակում իր առաջին երեք մենագրությունները, այդ թվում մակաբեացիների ապստամբության վերաբերյալ հետազոտություն: Նացիստների իշխանության գլուխը գալուց հետո նա ստիպված է փնում գաղթել Ֆրանսիա, որտեղ հրատարակեց իր հայտնի «Սելևկյանների պետությունը» (*Institutions des Séleucides*, 1938) մենագրությունը, իսկ Երկրորդ աշխարհամարտի տարիներին տեղափոխվեց ԱՄՆ (1942 թ.):<sup>1</sup> Այստեղ նա դասավանդում էր Նյու Յորքի Հասարակական հետազոտությունների նոր դպրոցում (*The New School for Social Research*), Լոս Անջելեսի Հուդայականության համալսարանում, 1952–1967 թթ. նա դառնում է Նյու Յորքի Կոլումբիական համալսարանի և Հրեական աստվածաբանության ճեմարանի (1967) պրոֆեսոր: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Իսրայելում, որտեղ վայելում էր մեծ հարգանք:

Հրեական թեմային Բիկերմանն անդրադարձել է իր ողջ գիտական կարիերաի ընթացքում: Հրեական ուսումնասիրություններին նվիրված նրա առավել հայտնի աշխատություններն են. «Մակաբեացիներ. նրանց պատմությունը սկզբից մինչև Հասմոնեյան հարստության անկումը»<sup>2</sup>: Այդ մենագրությունը Բիկերմանին միանգամից ճանաչում բերեց գիտական հանրության լայն շրջանակներում, ինչը դրդեց նրան շարունակել այդ թեման և ընդամենը երկու

<sup>1</sup> Петров 2001.

<sup>2</sup> Bickerman 1935 (ընդլայնված անգլիական հրատարակությունը լույս տեսավ 1947 թ.). (Idem 1947 (3 վերահրատարակում):

տարի անց լույս տեսավ նրա «Մակաբեացիների աստված»<sup>1</sup> աշխատությունը: Նույն ոգով էին գրված «Աստվածաշնչի տարօրինակ գրքեր. Հովնան, Դանիել, Սաղմոս, Եսթեր»<sup>2</sup>, «Կրոնը և քաղաքականությունը հելլենիստական և հռոմեական շրջանում»<sup>3</sup>, «Եզրասից մինչև վերջին մակաբեացիներ. հետասվածաշնչյան հուդայականության հիմքերը»<sup>4</sup> և ուրիշ աշխատությունները<sup>5</sup>: Հուդայականության և քրիստոնեության պատմությանն են նվիրված նաև Է. Բիկերմանի անգլերեն և ֆրանսերեն լեզուներով գիտական հոդվածների եռահատոր ժողովածուն, որը հրատարակվել է 1976–1986 թթ.-ին<sup>6</sup>: Բիկերմանի վերջին աշխատանքը «Հրեաները հելլենիստական շրջանում»<sup>7</sup> մենագրությունն է լույս տեսավ հետմահու և նվիրված է հրեական պատմությանը և նրանց փոխազդեցությանը հելլենիստական աշխարհի հետ՝ Ալեքսանդրից մինչև Մակաբեացիները: Լինելով եվրոպական գիտնական նա իր ստեղծագործական ներկայակցելը մշտապես հարստացրել է ռուսական, գերմանական, ֆրանսիական և ամերիկյան անտիկագիտության ավանդույթներով: Սակայն դրա հետ մեկտեղ Բիկերմանը, այնուամենայնիվ, իր ստեղծագործական ուղին ավարտեց իբրև եբրայագետ, դառնալով, ըստ էության, հրեական հելլենիստագիտության ազգային դպրոցի հիմնադիրներից մեկը: Ասվածից կարելի եզրակացնել, որ Թոյնբին ու Բիկերմանը կարող են համարվել մի դեպքում հրեական հելլենիստագիտության և մյուս դեպքում՝ հելլենիստական եբրայագիտության նահապետները:

<sup>1</sup> Idem 1937.

<sup>2</sup> Idem 1968.

<sup>3</sup> Idem 1985 (2 վերահրատարակում):

<sup>4</sup> Idem 1962 (6 վերահրատարակում):

<sup>5</sup> Idem 1958; idem 1965.

<sup>6</sup> Idem 2007.

<sup>7</sup> Бикерман 2000 (Bickerman 1988).

Սակայն ոչ բոլոր հրեա հետազոտողները Բիկերմանի պես ապրեցին արմատական փոխակերպումներ: Ասվածի վառ օրինակը Առնալդո Մոմիլյանոն է (Arnaldo Dante Momigliano, 1908, Պյեմոնտ – 1987, Լոնդոն): Կարելի է զուգահեռներ անցկացնել Մոմիլյանոյի, Ռոստովցևի և Բիկերմանի կենսագրությունների միջև: Վերջիններիս պես Մոմիլյանոն իր գիտական կարիերան սկսել է որպես դասական անտիկ պատմության ուսումնասիրող: 1936 թ. երիտասարդ, բայց շատ խոստումնալից անտիկագետը դառնում է Թոյնբինի համալսարանի պրոֆեսոր, սակայն շուտով ֆաշիստական Իտալիայում հակահրեական հալածանքների սաստկացման պատճառով նա ստիպված լինում լքել Իտալիա և 1938 թ. հաստատվել Լոնդոնում: Անգլիական պրոֆեսորություն (հիմնականում հրեական ծագմամբ) բավականին սառն է ընդունում օտարականին և հայտնի չէ ինչպես կղասավորվեր երիտասարդ գիտնականի ճակատագիրը եթե նրան օգնության ձեռք չմեկներ Միխայիլ Ռոստովցևը, որի ազդեցությունը նա կրում էր ողջ կյանքում: Մոմիլյանոյի պրոֆեսիոնալ աճին նաև զգալիորեն նպաստեց նրա հին ընկեր Ֆրենք Ուլյանքը<sup>1</sup>: Այսպես ճակատագրի հեղիեղուկության և անակնկալ ծանոթությունները հետաքրքրությունների նոր դաշտ բացեցին Մոմիլյանոյի առջև և բերեցին նրան հելլենիստագիտության<sup>2</sup> և եբրայագիտության ոլորտը<sup>3</sup>: Օքսֆորդի համալսարանում երկար ժամանակ երկրորդական դերերում մնալուց հետո նա տեղափոխվում է Լոնդոնի համալսարանի քոլեջ, որտեղ զբաղեցնում է պրոֆեսորի պաշտոն 1951–1975 թթ.: Այդ նույն ժամանակ նա հաճախ հրավիրվում է Չիկագոյի համալսարան դասախոսություններ կարդալու համար: Այստեղ նրան ճանաչում էին իբրև հումանիտար գիտությունների պրոֆեսոր Ալեքսանդր Ուայթ: Թեև իր կյանքի վերջին տարիներին

<sup>1</sup> Murray 1991: 49–64.

<sup>2</sup> Momigliano 1975.

<sup>3</sup> Idem 1981: 325–436; idem. Jews and Greeks, in Momigliano 1994.

Մոմիլյանոն երբեմն այցելում էր Իտալիան և նույնիսկ դասախոսում Պիզայի բարձրագույն դպրոցում (Scuola Normale Superiore di Pisa), նա այլևս չէր գբաղվում Հռոմի պատմությամբ և իրեն համարելով բրիտանացի պատմաբան գրեթե չէր հրապարակվում իտալերեն: Սակայն, դրա հետ մեկտեղ, ճակատագրի բերումով դառնալով երրայագետ, Մոմիլյանոն երբեք տուրք չտվեց ազգայնականությանը և հիմնականում կիսում էր թոյնբիյան մոտեցումները հրեական պատմության վերաբերյալ:

Նման հայացքների տեր գիտնական էր Երուսաղեմի համալսարանի պրոֆեսոր Միշել Էվի-Ջոնահը, լինելով հայտնի երրայագետ<sup>1</sup>, միևնույն ժամանակ, հելլենիզմին նվիրված իր մենագրության մեջ, ոչ միայն չի համարում Արևելքի ժողովուրդների և մասնավորապես հրեաների համար վնասաբեր, այլև հիանում հունա-մակեդոնական մշակույթով<sup>2</sup>: Ավելին, տուրք տալով արևմտյան պատմագիտական ավանդույթներին, նա հելլենիզմը բանաձևում է իբրև հունական պատմության անբաժանելի մաս: Էվի-Ջոնահի պնդմամբ հելլենիզմը նախևառաջ մշակութային երևույթ է, որը Ալեքսանդրի և իր հաջորդների շնորհիվ տարածվել է հեռավոր Արևելք՝ Միջերկրականից Ինդոս<sup>3</sup>: Հրեա պատմաբանը առեղծվածաբանական ակնածանք է տաժում Ալեքսանդրի նկատմամբ, արդեն պատանի տարիներից նրա մեջ տեսնելով ապագա մեծ գործչին<sup>4</sup>: Նա անվանում է Ալեքսանդրին «Նոր Դիոնիսոս», «աստվածաման անձնավորություն», «նշանավոր վարչարար և ստրատեգոս»<sup>5</sup> մի բան, որ շատ բնորոշ է XX դարի առաջին կեսի ֆրանսիական և գերմանական անտիկագետներին, բայց ոչ օրթոդոքս հրեաներին, որոնց նշանային համակարգում հելլենիստական շրջանի հունա-մակեդոնական

<sup>1</sup> St'u Avi-Yonah 1969.

<sup>2</sup> Avi-Jonah 1978.

<sup>3</sup> Ibid: 3.

<sup>4</sup> Ibid: 11.

<sup>5</sup> Ibid: 7.

արքաները մոտավորապես նույն տեղն են գրավում, ինչ հայկական կոլեկտիվ գիտակցության համար պարսից Սասանյանները: Եվս մեկ բնորոշ հանգամանք՝ Էվի-Ջոնահը հատուկ շեշտադրում է Ալեքսանդրի հակվածությունը ժողովրդական արժեքներին, որը նա համարում է «մեծ քաղաքակրթողի» քաղաքականության հիմնական բովանդակությունը:

Հրեական հելլենիստագիտությունը նոր լիցք ստացավ 1990-ականներին, երբ Խորհրդային Միության անկումից հետո, ազգությամբ հրեա մի քանի խոշոր պատմաբաններ՝ հնարավորություն ստացան բնակություն հաստատել Իսրայելում և Միացյալ Նահանգներում<sup>6</sup>: Նրանք արագ ինտեգրվեցին իսրայելյան և ամերիկյան գիտության մեջ, հայտնելով արևմտյան երրայագիտությանն ու հելլենիստագիտությանը նոր որակ: Նրանց աշխատությունների մեջ հրեական մշակույթը դիտարկվում է երկակի, մի կողմից՝ որպես հելլենիստական համադրականության դրսևորում, մյուս կողմից՝ իբրև հելլենիստական քաղաքակրթությանը ներհակ, ինքնամփոփ և ինքնարժեք երևույթ: Այդ մշակույթի մի բևեռում գտնվում է Փիլոն Ալեքսանդրացին և Հովսեպոսը, իսկ մյուս բևեռում Թամուզն ու Հնգամատյանը<sup>7</sup>:

Այսպիսով, հրեական հելլենիստագիտությունը, սկիզբ առնելով արևմտյան և խորհրդային հելլենիստագիտության շրջանակներում, վերջին մի քանի տասնամյակներում այն տեղափոխվեց արագ կա-

<sup>1</sup> Խորհրդային Միությունում ձևավորվել էր հելլենիստական-երրայական խնդիրներով զբաղվող հիմնարար դպրոց, որի ավանդույթներն իրենց հետագա զարգացումը ստացան հրեաների հայրենադարձությունից հետո (Ранович 1937; Он же 1938, № 11; Он же 1941; Он же 1949; Амусин 1983: 117; Ковельман 1988); Он же 1994: 123–137).

<sup>2</sup> Idem 1991: 135–152; Ковельман 1994: 214–241; idem 1996: 111–132; Он же 1996; Ковельман Гершович 1996; Ковельман 2001–2004. Т. 1, Т. 2; idem 2002: 86–92; idem 2002: 86–92; idem 2003: 13–18; idem 2004: 123–146; idem 2004: 162–168; Он же 2004: 42–51; idem 2006: 153–182.

<sup>3</sup> Idem 2005; idem 2007: 162–175; Он же 2007.



յացող Իսրայելի հումանիտար հետազոտությունների դաշտ, որտեղ, ի թիվս այլոց, ձևավորվեց հելլենիստագիտության ինքնուրույն դպրոց: Այդ դպրոցը խարսխված է միաժամանակ արևմտյան անտիկ, ուսումնասիրությունների և երբայագիտության նվաճումների վրա: Չնայած երիտասարդ տարիքին՝ Իսրայելի արդի հելլենիստագիտությունը միանգամայն կարելի է համարել կայացած:

Այն ունի որոշակի առավելություն արևմտյան անտիկագիտության նկատմամբ: Չզիջելով արևմտյանին ուսումնասիրողներին ակադեմիական չափանիշներով, այն ունակ գտնվեց հելլենիստական դարաշրջանը դիտարկել ոչ եվրոպակենտրոն տեսանկյունից, հաշվի առնելով մի կողմից հունա-մակեդոնական և հռոմեական, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր արևելյան և զուտ տեղական ընկալումները: Այսօր նման խնդիր է ծառայել նաև հայ պատմագիտության առջև: Առաջին քայլերն արված են, մնում է չհայտնվել ծայրահեղական «զելոտության» կամ ստրկամիտ արևմտամետ «հերովդականության» ծիրում:

## ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսական անտիկագիտությունը թեև սկսել է զարգանալ ավելի ուշ քան եվրոպականը, այնուամենայնիվ ունի բավականին հին պատմություն: Ինչպես և Արևմտյան Եվրոպայում, ռուսական անտիկագիտության կենտրոնները համալսարաններն էին: Հատկապես աչքի էր ընկնում Ս.Պետերբուրգի համալսարանի դասական անտիկագիտության ամբիոնը, որտեղ XIX դ. ձևավորվել է շատ հիմնարար դասական պարմաբանասիրական դպրոց: Գերմանական անտիկագիտության ազդեցության ներքո ձևավորված այդ ուղղությունը երկար ժամանակ մնում էր ռուսական անտիկ հետազոտությունների բնագավառում գերիշխող<sup>1</sup>: Այդ ուղղությունն առանձնանում էր դասական լեզուների և անտիկ աղբյուրների իմացության նկատմամբ ծայրահեղ պահանջկոտությամբ, չոր, երբեմն խրթին շարադրանքով և գիտական տեքստի գերհագեցվածությամբ տերմիններով և արհեստածին օտարամուտ դարձվածքներով:

Այդ դարաշրջանի Ս.Պետերբուրգի համալսարանի անտիկագետների մեջ առանձնանում է ազգությամբ ռուս, բայց գերմանական նիբուրյան դպրոցի բովով անցած, Միխայիլ Սեմյոնովիչ Կուտորգան (1809–1886)<sup>2</sup>: Իր աշխատություններում, Ս.Պետերբուրգի ու Մոսկվայի համալսարաններում կարդացած դասախոսություննե-

<sup>1</sup> XVIII–XIX դդ. Ս.Պետերբուրգի համալսարանի դասական հետազոտությունները գրկթե ամբողջությամբ կենտրոնացված էին ծագմամբ գերմանացի մասնագետների ձեռքում: Գերմանական ոգին դեռ այսօր էլ կենդանի է այդ գիտակրթական օջախում:

<sup>2</sup> Куторга Михаил Семенович // Большая биографическая энциклопедия. 2009.

րում և հատկապես տանը, նեղ շրջանի համար կազմակերպված սեմինարներում, նա փորձում էր հին շրջանը դիտարկել պատմափիլիսոփայական տեսանկյունից (որի համար, ի դեպ, քննադատվել է Ս.Պետերբուրգի գերմանական պրոֆեսուրայի կողմից): Դա (թեև չհաջողված) պատմափիլիսոփայական և պատմամշակութային մոտեցումների մշակման առաջին փորձն էր, որն ի դեպ, Ռուսաստանում միշտ ունեցել է շատ կողմնակիցներ, հատկապես երիտասարդ մտավորականության շրջաններում<sup>1</sup>: Կուտորգայի պաշտոնանկությունից և Մոսկվայի համալսարան տեղափոխվելուց հետո՝ Ս.Պետերբուրգի համալսարանում նրա տեղը գրավում է Ֆ.Ֆ. Սոկոլովը, որը համարվում է պատմաբանասիրական ուղղության առաջին ռուս ներկայացուցիչը (դասավանդել է դասական լեզուներ և անտիկ պատմություն 1869–1909 թթ.): Իր հետազոտություններից մեկում Սոկոլովն անդրադարձել է հելլենիստական դարաշրջանի քաղաքական պատմության խնդիրներին<sup>2</sup>, բայց այդ աշխատանքը ինքնուրույն գիտական արժեք չի ներկայացնում և ընդամենը Դրոյզենի համապատասխան մեկագրության հակիրճ վերաշարադրանքն է:

Սակայն Սոկոլովը պատրաստել է անտիկագետների հսկայական բանակ, որոնք ուսուցչի մահից հետո շարունակեցին զարգացնել և խորացնել դասական պատմաբանասիրական ուղղությունը Ս.Պետերբուրգի (հետագայում Պետրոգրադի, Լենինգրադի) համալսարանում և Գիտությունների ակադեմիայում: Չնայած արձանագրված որոշ հաջողությունների՝ արդի պատմագրության մեջ այդ ուղղությունն երբեմն բնութագրվում է որպես սքոլաստիկ, ոչ օրիգինալ և միակողմանի ուղղվածություն ունեցող<sup>3</sup>: Դա արտահայտվում էր

գերմանական պատմաբանասիրական դպրոցի մեթոդներից չափից դուրս մեծ կախման մեջ: Այդ դպրոցի ներկայացուցիչներն երկար ժամանակ իշխող դիրքեր էին գրավում Ռուսաստանի խոշոր համալսարանների ամբիոններում և թելադրում իրենց մոտեցումները:

Ամենագոր Սոկոլովի մահից հետո ավանդական պատմաբանասիրական գիծը շարունակեցին նրա սաները, որոնցից հատկապես աչքի են ընկնում Լատիշևը և Ժեբելյովը: Արիեստավարժ վիմագրագետ և հնությունների մեծ գիտակ, «սոկոլովյանների ավագ սերնդի ներկայացուցիչ» Վասիլի Վասիլյևիչ Լատիշևը (1855–1921 թթ.) առաջնային էր համարում պատմական փաստերի վերհանման և քաղաքական պատմության մշակման խնդիրները:

Սակայն XX դարի սկզբում և հատկապես Առաջին աշխարհամարտի նախօրեին՝ ռուս անտիկագիտության մեջ ավանդական պատմաբանասիրական դպրոցի կողքին սկսում են ձևավորվել նոր ուղղություններ՝ պատմիմաստասիրական, պատմամշակութային, հասարակական-քաղաքական և հասարակական-տնտեսական ուղղությունները:

Հելլենիստական քաղաքակրթության տեսական խնդիրներին *ad hoc* առաջինը մոտեցավ ռուս պատմաբան և փիլիսոփա Նիկոլայ Իվանովիչ Կարենը (1850, Մոսկվա – 1931, Լենինգրադ)<sup>1</sup>, որին կարելի է համարել *պատմիմաստասիրական ուղղության* ներկայացուցիչներից մեկը: Ստանալով փայլուն պատմաբանասիրական կրթություն Մոսկվայում, Ս.Պետերբուրգում և Վարշավայում, վերջինս նախընտրեց դոկտորական աշխատանքը պաշտպանել փիլիսոփայությունից: Իր հաջորդ աշխատանքներում նա հանդես եկավ որպես պատմության փիլիսոփա<sup>2</sup> և մշակութաբան, այդ բառի գրեթե ժամանակակից իմաստով: Կիսելով Ն.Յա. Դանիլսկու քաղա-

<sup>1</sup> Фролов 1999.

<sup>2</sup> Соколов 1910: 243–259.

<sup>3</sup> Там же: 401.

<sup>1</sup> Кареев 1908; Его же 1910; Его же 1993; Его же 1991: 6–32.

<sup>2</sup> Кареев 1915: 37.

քակրթագիտական հայացքները՝ Կարենը չէր ընդունում համաշխարհային պատմության գծային-փուլային տեսությունը, որի համար խիստ քննադատության ենթարկվեց արևմտամետ («западники») ռուս պրոֆեսուրայի, հատկապես պոզիտիվիստական դիրքերից հանդես եկող «սոկոլովյանների» կողմից<sup>1</sup>: Վերջիններս ձգտում էին Ռուսաստանը տեսնել միասնական համաշխարհային գործընթացների մաս, ցանկացած քաղաքակրթական յուրօրինակություն ընկալելով որպես շեղում համօրինակ համապարփակ նորմայից:

Կարենը հատուկ ուշադրություն է դարձնում համապարփակ կայսրության գաղափարին: Հատուկ նշվում է, ինչ ազդեցություն է թողել արևելյան միապետական կառավարման ձևը հելլենիստական թագավորությունների վրա, որոնց քաղաքական ավանդույթներն իր հերթին ժառանգեց Հռոմը:

Հելլենիզմը և նմանօրինակ այլ քաղաքակրթություններ, Կարենը դիտարկում էր որպես էկլեկտիկ և ոչ անպայման շատ մեծ համակեցություններ, պատահական չէ որ խորհրդային շրջանում Կարենի պատմափմաստասիրական հայացքները պիտակավորվեցին որպես էկլեկտիկ իդեալիստական: Նա գտնում էր, որ իր բնույթով հելլենիզմը խիստ տարբերվում է դասական հունահռոմեական քաղաք-պետությունների համակեցությունից<sup>2</sup>:

Գրեթե միևնույն ժամանակ ձևավորվեց ռուսական *պարմա-մշակութային դպրոցը*, որի ներկայացուցիչներն իրենց աշխատություններում ձգտում էին վերհանել հին պատմության հոգևոր, խորքային, մշակութային շերտերը և վերափմաստավորել գաղափարաբանական երևույթները (մի բան որ պատմագիտության մեջ այսօր

փորձում է անել մշակութաբանական դպրոցը)<sup>1</sup>: Այդ ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից են Ֆ.Գ. Միշչենկոն և Ն.Ի. Նովոսադսկին, սակայն մշակութաբանական ուղղության, այդ բառի գրեթե ժամանակակից իմաստով, ամենավաղ ներկայացուցիչն էր Ֆադդեյ (Տադեուշ) Ֆրանցևիչ Ջելինսկին (1859–1944 թթ.): Անտիկ դիցաբանության և գրականության մեծ գիտակ, փայլուն հրապարակախոս Ջելինսկին հսկայական ներդրում կատարեց հելլենիստական մշակույթի պատմության ուսումնասիրության գործում: Ազգությամբ լեհ, նա պատկանում էր ռուս մտավորականության այն շերտին, որն ուներ ընդգծված արևմտյան մշակութային կողմնորոշում: Ջելինսկին սովորել է Ս.Պետերբուրգի այնուհետև գերմանական Լայպցիգի, Մյունխենի, Վիեննայի համալսարաններում, մի քանի տարով գործուղվել է Հռոմ: Լայպցիգում նա գերմաներեն լեզվով պաշտպանել է առաջին ատենախոսությունը (1880 թ.): Այնուհետև վերադառնում է Ս.Պետերբուրգի համալսարան, որտեղ դասավանդում և ստեղծագործում է ավելի քան մեկ երրորդ դար (1885–1921 թթ.): Ռուսաստանում նա անմիջապես դարձավ ուսանողների և պետերբուրգյան՝ արևմտամետ մտավորականության սիրելին: Նրա բաց դասախոսությունները լսելու համար երիտասարդները գալիս էին հսկայաճավալ կայսրության ամենահեռավոր ծայրամասերից: Ոգևորված իր հրապարակային դասախոսությունների հաջողությամբ՝ նա դրանցից առավել հետաքրքիրներն ամփոփեց և հրատարակեց մշակութաբանական ակնարկների ժողովածուի տեսքով, որին հատկանշական խորագիր տվեց՝ «Գաղափարների կյանքից»<sup>2</sup>: Այդ ժողովածուի առաջին և երկրորդ պրակները նա խորագրեց «Հին աշխարհը և մենք»: Այստեղ նա ձգտում էր ար-

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Халтурин 2003.

<sup>2</sup> Кареев 1908; Он же 1910; Он же 1993; Он же 1991: 6–32).

<sup>1</sup> Ռուսաստանում մշակութաբանական դպրոցը առավել աչքի ընկնող հետազոտողներից է Լ.Պ. Բնայինան. Репина 2011; Она же 2012; Она же 2003; Она же 2013, редактор; Она же 2004.

<sup>2</sup> Зелинский 1905–1922; Он же 1996: 240–340; Он же 1915.

դի հնչեղություն տալ անտիկ պատմությանը, այն դարձնելով լայն շրջանների արգասիքը: Բայց առավել հետաքրքիր է հելլենիստական դարաշրջանի մարդու ներաշխարհին նվիրված «Քրիստոնեության մրցակիցներ» խորագրով երրորդ հատորը: Այստեղ նա քննում է հելլենիստական տարբերեր (օրինակ Հերմես Տրիսմեգիստի) պաշտամունքները, որոնք պատմականորեն ընթանում էին նույն ուղղությամբ, իսկ քրիստոնեությունը նա դիտարկում է իբրև այդ ուղղությունների հաղթանակած այլընտրանք, միևնույն ժամանակ գրքի մեջ քրիստոնեությունը հանդես է գալիս ոչ ավելի քան ընդհանուր խոր ապատկեր: Վերածնության գործիչներին նվիրված չորրորդ գրքում Ջելինսկին ամփոփել է Ռուսաստանում կարդացած իր վերջին դասախոսությունները, որտեղ նա կիրառելով պատմամշակութային՝ համեմատության մեթոդը, անդրադարձել է հին աշխարհի մշակույթի ճակատագրերին և վերհուշերին (օրինակ Հոմերոսյան և Վիրգիլիոս անդրշիրիմյան աշխարհի վերապրումներին՝ Դանթեի և Շեքսպիրի ստեղծագործություններում): Նշված շրջանում նման մշակութաբանական մոտեցումները նորություն էին ոչ միայն ռուսական այլև արևմտյան իրողության համար:

Լինելով *ex professo* բանասեր, Ջելինսկին շատ է զբաղվել դասական լեզուների և անտիկ գրականության ու թատրոնի խնդիրներով<sup>1</sup>, թարգմանել և մեկնել է Կիկերոնի թղթերը (Կիկերոնի ժառանգությունը միշտ եղել է Ջելինսկու նախասիրությունների թվում)<sup>2</sup>: Սակայն Ջելինսկու ամենահայտնի և հիմնարար գործերը նրա երկու գրքերն են՝ «Հին հունական կրոնը»<sup>3</sup> և դրա շարունակությունը՝

<sup>1</sup> Зелинский 1896: 101–121; Он же 1883; Он же 1885; Zielinski 1885; idem 1885; Он же 1912: 9–15; Он же 1918; Он же 1919; Овидий 1913; Հունական ողբերգությանը նվիրված ամենամեծ գործը. “Tragodoumenon libritres” (Cracoviae, 1925).

<sup>2</sup> Zielinski 1897; idem 1904; idem 1914; Цицерон Марк Туллий 1901; Zielinski 1929; idem 1938.

<sup>3</sup> Зелинский 1918.

«Հելլենիզմի կրոնը»<sup>1</sup>: Այդ մենագրություններում, մի քանի ուղղահայաց կտրվածքների միջոցով, Ջելինսկին աշխատել է ցույց տալ անտիկ աշխարհի կրոնական ընկալումների հնարավորինս ամբողջական պատկեր՝ իրենց զարգացման մեջ: Հեղինակի մտահղացմամբ, այդ գրքերը պետք է դառնային մի ամբողջական մեծ աշխատանքի մասեր: Աշխատանքը պետք է ունենար շարունակություն և կազմեր շարք (6 հատոր), որում արտացոլվելու էին անտիկ հոգևոր մշակույթի, առաջին հերթին կրոնական, գիտակցության փոխակերպումները, անտիկ մարդու ներաշխարհի տրամաբանական ընթացքը առ քրիստոնեություն: Հեղինակը, չնսեմացնելով Քրիստոսի քարոզչական գործունեության նշանակությունը, ձգտում էր ցույց տալ, որ քրիստոնեության իսկական նախապատրաստումը տեղի է ունեցել ոչ թե Փրկչի գալստյան մասին հրեական մարգարեների միջավայրում, այլ անտիկ և հատկապես հելլենիստական աշխարհների ողջ հոգևոր կեցության ընթացքով: Ինչպես Ջելինսկին ինքն է ասել «Հելլենիզմի կրոնի» նախաբանում. «անտիկ կրոնը՝ մեր քրիստոնեության իսկական Հին կտակարանն է»: Հելլենիստական միջավայրն է ծնել և հող նախապատրաստել քրիստոնեական գաղափարաբանության համար: Ահա թե ինչու ողջ մարդկությանն ուղղված Քրիստոսի խոսքը լսելի դարձավ ոչ թե օրթոդոքս հուդայական միջավայրում՝ համակված ազգային բացառիկության և կրոնական անհանդուրժողականության զգացմունքներով, այլ հելլենիստական համապարփակ միջավայրում՝ ամփոփված Հոմեական կայսրության շրջանակների մեջ: Սակայն «հոգևոր հունականության» մասին ոգեշունչ խոսքեր ասելով, արևմտամետ Ջելինսկին շատ քիչ է անդրադարձել «հոգևոր Արևելքի» ներդրմանը քրիստոնեության կայացման գործում, մինչդեռ «հոգևոր Արևելքը» առաջինը նորածին Հիսուսի մեջ ճանաչեց Քրիստոսին («Մոզեի երկրպագություն»), իսկ

<sup>1</sup> Он же 1922.

այնուհետև հելլենիստական Արևելքն ընդունեց քրիստոնեական քարոզը՝ այն համալրելով առանցքային գաղափարներով:

Դա նկատեցին արդեն Ջեյինսկու ժամանակակիցները: Այսպես «Նոր Արևելք» ամսագրում՝ «Հելլենիզմի կրոնի» գրքի գրախոսության մեջ Ա. Ջախարովը այսպես է բնութագրում Ֆարդեյ Ջեյինսկու եվրոպականությունը. «Անտիկայի դասական դրսևորումների ջերմեռանդ երկրպագու հեղինակը, կարծում ենք, չափազանց հակված է առարկան դիտարկել կանխակալ անկյան ներքո: Նրան կարևոր չէ հունական կրոնի «օրինակագումը» (իսկ այսպիսին, շատ հետազոտողների պես, մենք կարծում ենք եղել է, ավելի շատ քան կարծում է մեծարգո գիտնականը), այլ Արևելքի կրոնի «հունականացումը»<sup>2</sup>:

Ռուսաստանի խորհրդայնացումից հետո Ջեյինսկին այլևս չէր կարող մնալ Պետրոգրադում և հայրենադարձվեց Լեհաստան, որտեղ անցավ աշխատանքի Վարշավայի համալսարանում: Սակայն, անկախության տարիներին գավառական և ծայրահեղ ազգայնական Վարշավայի համալսարանի միջավայրը շատ շուտով հիասթափեցրեց (ի դեպ, նախկինում շատ ազգասեր) գիտնականին: «Շնչահեղձ» չլինելու համար Ջեյինսկին օգտագործում էր յուրաքանչյուր առիթ արտասահման, հատկապես Գերմանիա, երկարաժամկետ գործուղումների մեկնելու համար<sup>3</sup>: Վարշավայում Ջեյինսկին շարունակեց գրել հելլենիստական կրոնին նվիրված իր հիմնարար աշխատանքը, որը լուր անտարբերությամբ ընդունվեց լեհական ակադեմիական միջավայրում: Երկրորդ աշխարհամարտի

<sup>1</sup> 1920–1930 թթ. ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր կոմիտեին առնթեր Արևելագետների գիտական միության կողմից հրատարակվող պարբերական մարմին (ընդամենը հրատարակվել է 29 գիրք):

<sup>2</sup> Захаров 1922: 417–418.

<sup>3</sup> Ջեյինսկու մասին տե՛ս Бриллова 1909: 71–76; Ростовцев 1914: 81–83; Библиография работ Зелинского 1909; Перечень трудов проф. Ф.Ф. Зелинского с 1908 1914: 84–87.

սկզբում ոմբակոծման ժամանակ Վարշավայում այրվեց գիտնականի բնակարանը, անվերադարձ կորան Ռուսաստանում, Գերմանիայում և Ֆրանսիայում Ջեյինսկու հավաքած հարուստ գրադարանը, արխիվները և ձեռագրերը: Այս ամենից հետո նա ընդմիջտ լքեց հայրենիքը և կյանքի վերջին տարիները անցկացրեց Բավարիայում, իր որդու տանը: Այստեղ նա փորձում էր վերականգնել հելլենիզմի հոգևոր պատմությանը նվիրված իր անտիպ աշխատանքը, բայց չհասցրեց առողջության կտրուկ վատթարացման պատճառով: Ջեյինսկին մահացավ Գերմանիայում 1944 թ. և նրա մահն անցավ աննկատ թե Լեհաստանում, թե ԽՍՀՄ-ում, թե Եվրոպայում<sup>1</sup>:

Ջեյինսկին պատմա-մշակութային ուղղության ամենավառ, բայց միակ ներկայացուցիչը չէր: Ռուսական և արևմտյան անտիկագիտության մեջ որոշակի ներդրում ունեցան նաև Է. Ռ. Շտեռնը և Բ.Վ. Վարենեկեն: Լիֆլանդիայի գերմանացի Էռնեստ Ռոմանով ֆոն Շտեռնը (1859–1924 թթ.) սովորել է հանրահայտ Դորպատի և Լայպցիգի համալսարաններում, Դորպատում նա պաշտպանել մագիստրոսական և դոկտորական ավարտաճառերը: Այնուհետև շուրջ քառորդ դար դասավանդել է Օդեսա քաղաքի Նովոռոսիյսկի կայսերական համալսարանում, համալրելով Մերձսևծովյան քաղաք-պետությունները պեղող և ուսումնասիրող գիտնականների բանակը: Այդ ժամանակվանից Շտեռնի հետաքրքրության կենտրոնում հայտնվում է Մերձսևծովյան հելլենիստական բնակավայրերի հնագիտական հարուստ նյութը, որի դասակարգմանը և ուսումնասիրությանը նա նվիրել է մեծ ուժ և եռանդ: 1911 թթ. ֆոն Շտեռնը ստացավ հրավեր Հալլեի համալսարան, թափուր ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար: Այստեղ նա ամփոփել էր Ռուսաստանում իր հրապարակած նյութերը: Շտեռնը դարձավ կարևոր օղակ Արևմուտքի անտիկագիտության և արագ զարգացող ռուսա-

<sup>1</sup> Rehm 1948: 155–157.

կան հեյլենիստական ուսումնասիրությունների դպրոցի միջև, ապահովելով նրանց փոխադարձ կապը: Նրա գրախոսականները ռուս հետազոտողների աշխատությունների մասին հրատարակվում էին արևմտյան տարբեր գիտական հանդեսներում:

Պատմա-մշակութային ուղղության զարգացման գործում զգալի ներդրում է ունեցել նաև դասական անտիկ, հեյլենիստական և հռոմեական թատրոնի մեծ գիտակ Օդեսացի Բորիս Վասիլևիչ Վարենեկեն (1874–1944 թթ.), որի ճակատագիրը ողբերգական էր անտիկ դրամայի հերոսների ճակատագրի նման: Իր լավագույն գործերը Վարենեկեն նվիրել է անտիկ դրամայի ուսումնասիրությանը<sup>1</sup>:

Ռուսաստանում *հասարակական-քաղաքական ուղղության* (այսօր այդ ուղղությունը ևս առանձնացել է պատմագիտությունից և կոչվում է քաղաքական տեսություն) հիմնադիրը համարվում է երկար ժամանակ աթենական ժողովրդավարության հիմնահարցերով զբաղվող Վլադիսլավ Պետրովիչ Բուզեսկուլը (1858–1931 թթ.)<sup>2</sup>:

Հիմնարարությամբ, կուռ և հստակ ներքին կառուցվածքով Բուզեսկուլի առանձին աշխատությունները քիչ են գիջում Ռուստովցևի հետազոտություններին: Նա չէր խորշում կատարել տեսական վերլուծություններ և նույնիսկ փորձում էր հակազդել դասական պատմա-բանասիրական ուղղության ներկայացուցիչների նկրտումներին անտիկ հետազոտությունները վերածել բանասիրական-անտիկվար շտուդիաների, որոնք չեն հանգեցնում տեսական ընդհանրացումների և որպես հետևանք՝ դառնում են ինքնանպատակ: Սակայն այդ հակազդեցության մեջ Բուզեսկուլը չափազանց զգուշավոր էր և հստակ չէր արտահայտում իր դիրքորոշումը. «... վեճն այն մասին թե ո՞վ պետք է զբաղվի հունական պատմությամբ, մեզ թվում է էութենապես ավելորդ: Ինդիրը բառերը կամ պիտակները չեն: Բանա-

սերները և պատմաբանները հնությունների ուսումնասիրման գործում կարող են և պետք է շարժվեն ձեռք ձեռքի տված, բայց բանասերին պետք է խորթ չլինի ընդարձակ պատմական տեսանկյուն, իսկ պատմաբանը պետք է ունենա անտիկ գրականության, հնագիտության և վիճագրության վերաբերյալ խորը գիտելիքներ»<sup>1</sup>: Ըստ էության, Բուզեսկուլը չի համարձակվում պնդել, որ անտիկ պատմության տերը պատմագիտությունն է, իսկ բանասիրությունը, վիճագրագիտությունն ու հնագիտությունը պատմագիտության սպասարկող գիտակրթանքներ են: Այդ մի տեսակ երկչոտությունը և դիրքորոշման անորոշությունը պայմանավորված է այդ դարաշրջանում գերմանական պատմա-բանասիրական դպրոցի և հատկապես «սոկրոլյանների» հզոր դիրքերով, որոնց աննշան խաթարումը կարող էին առաջացնել իսկական փոթորիկ:

Ռուսաստանում և Արևմուտքում *հասարակական-տնտեսական ուղղության* զարգացման գործում որոշիչ դերակատարություն ունեցան Ս. Պետերբուրգի և Մոսկվայի դպրոցները, որոնց կարկառուն ներկայացուցիչներն էին նաև Ս. Պետերբուրգի պրոֆեսորներ Ի.Մ. Գրևսը և Մ.Ի. Ռուստովցևը: Երկուսն էլ ընդգծված արևմտամետներ էին և սերտորեն կապված գերմանական և ֆրանսիական պատմագիտական ավանդույթների հետ (ի դեպ, Գրևսի նախնիները Ռուսաստանում հպատակագրած անգլիացիներ էին): Առաջին հայացքից այդ երկու շատ տարբեր գիտնականներ (Գրևսը քնարական, փափուկ և բարեկիրթ, մինչդեռ Ռուստովցևը՝ ուժեղ և պողոթյուն, Գրևսը մշտապես երկմտող և իր ուժերին անվստահ, իսկ Ռուստովցևը արագամիտ, համարձակ և հետևողական իր նպատակների իրականացման գործում<sup>2</sup>) առանձնանում էին արտակարգ հիմնա-

<sup>1</sup> Варнеке: 1909; Он же 1905 (докторская дисс.); Он же 1929; Он же 1940.

<sup>2</sup> Бузескул 1915: 592; Он же 1924: 68–70.

<sup>1</sup> Он же 1931: 165–166.

<sup>2</sup> Չդիմանալով ավանդապաշտ անտիկագետների ճնշմանը նա թողեց այդ շատ խոստումնալից պատմաբանը թողեց անտիկ հետազոտությունները և դարձավ միջ-

րարությանը ու միևնույն ժամանակ նորարարական մեթոդաբանությանը: Ընդունված է, որ Գրևսն ու Ռոստովցևը հիմնեցին ռուսական նոր պատմագիտական դպրոց: Սկսած անցյալ դարի 20-ական թթ. այդ ուղղությունը ստացավ «մոդեռնացում» անվանումը, որը հասկացվում էր որպես նոր ժամանակվա եզրերի և հասկացությունների էքստրապոլացիա (արտատեղափոխում) ավելի վաղ դարաշրջանների երևույթները բնորոշելու համար: Գրևսն ու Ռոստովցևն իսկապես այդ նոր ուղղությունը արմատավորել են Ռոսսաստանում, բայց դրա հիմնադիրները եղել են գերմանացիներ՝ պատմության փիլիսոփա Հենրիկ Ռյուկերտը<sup>1</sup>, անտիկագետներ Էդուարդ Մեյերը և Օ. Ջենկը: Սրանք XIX դ. վերջին քառորդում հետևողականորեն մշակում էին անտիկ կապիտալիզմի, անտիկ ֆեոդալիզմի և անգամ անտիկ սոցիալիզմի տեսությունները:

Սակայն այդ տեսությունները հանդիպեցին կատաղի դիմադրությանը ինչպես «աջից», այնպես է «ձախից»: Բանն այն է, որ Ռյուկերտի և Մեյերի պատմագիտական մոտեցումն արդարացված է միայն այն դեպքում, եթե պատմական ժամանակը դիտարկվում է ներփակ և ինքնամփոփ շրջափուլային կամ բաց զսպանակաձև տեսքով: Այդ դեպքում այս կամ այն հասարակական հարաբերությունները (նահապետական, պատրիմոնյալ, ավատատիրական, կապիտալիստական և սոցիալիստական) կարող են կրկնվել տարբեր շրջափուլերում կամ զսպանակի հաջորդ պտույտի վրա, իհարկե հարստացած նոր հատկանիշներով և առանձնահատկություններով: Սակայն դա անհնար է պատմության գծային էվոլյուցիոն զարգացման տեսանկյունից, որտեղ զարգացման յուրաքանչյուր դարաշրջան ընկալվում է, որպես պատմական էվոլյուցիայի նոր

փուլ, ուստի անկրկնելի է և անխուսափելիորեն «բարձր» է նախորդից: Իսկ զարգացման տարբեր փուլերում հանդիպող երևույթների ցանկացած նմանություն և ընդհանրություն կրում է պատահական բնույթ: Նման պատմագիտական հայացքներ դեռևս էդ. Մեյերն հեզնաբար անվանել է «պարզամիտ», իսկ նրանց կրողներին «պրիմիտիվիստներ» և «անտիկվար» հնություններ հավաքողներ:

Առաջին «պրիմիտիվիստներ» էին պատմության էվոլյուցիոն տեսության կողմնակիցները՝ Կարլ Ռոդբերտուա-Յագեցովը և իհարկե Կարլ Բյուխերը: Այդ հղացքն ընկած է գրեթե բոլոր արդի արևմտյան քաղաքագիտական, քաղտնտեսագիտական և սոցիոլոգիական տեսությունների հիմքում (հակառակ դեպքում դրանք կլինեին ոչ թե քաղաքագիտական, այլ պատմիմաստասիրական կամ պատմախոհական):

Անցյալ դարի 70-ականներին ֆրանսիական և գերմանական պատմագիտության մեջ արձանագրվեցին փորձեր հաշտեցնել այդ երկու մոտեցումները: Հայտարարվել էր, որ բոլորովին էական չէ արդյոք պատմական դիալեկտիկան ունի գծային-փուլային, թե շրջափուլային ուղղագիծ: Նման «փիլիսոփայական» հարցերը բուն պատմագիտության հետ չեն առնչվում և միայն խճճում են հետազոտողներին, չնպաստելով գիտության առաջընթացին: Սակայն, կյանքը ցույց տվեց, որ միամտություն է պատմագիտական հետազոտություն անցկացնել առանց լուրջ տեսական հիմքերի, ուստի վերջին մեկ-երկու տասնամյակներում այդ հիմնահարցը կրկին դարձավ ակտիվ քննարկման առարկա: Մեր համոզմամբ դա ուղղակի դա «credo»-ի խնդիր է:

Ինչ վերաբերում է Գրևսին և Ռոստովցևի, ապա այդ երկուսը քաջամուխ լինելով անտիկ դասական շրջանի հասարակական-տնտեսական խնդիրներին հայտնաբերեցին քիչ ուսումնասիրված և անհամեմատ ավելի բարդ ու հետաքրքիր ոլորտներ: Էդ. Մեյերի

նադարագետ, որտեղ սակայն նոր բան չկարողացավ անել: Դրան հակառակ Ռոստովցևին թշնամիների վայրահաչությունը լրացուցիչ խթան էր հանդիսանում:

<sup>1</sup> McMaster 1955: 61, 63, 65, 66.

նորարարական մոտեցումները Գրևսին դրդել էին Եվրոպական Միջնադարի ուսումնասիրությանը, մինչդեռ Ռոստովցևին՝ սկզբում Հռոմեական քաղաքակրթության խորքային երևույթների լուսաբանմանը, որոնք իրենց հերթին մղել են նրան կայսերական Հռոմին տիպաբանորեն շատ մոտ կանգնած հելլենիստական դարաշրջանի ուսումնասիրությանը<sup>1</sup>: Ռոստովցևը համարում էր, որ հռոմեական կայսրերի պետավարչական և տնտեսական (հատկապես վարձակալական համակարգում) գործունեության հիմքում ընկած են հունա-մակեդոնական թագավորների քաղաքական և տնտեսական ավանդույթները<sup>2</sup>: Արևելքի հելլենիստական քաղաքների բուռն զարգացման մեջ նա տեսնում էր վաղ կայսրության քաղաքային կյանքի ծաղկման նախատիպը, իսկ կախյալ «լատյ» գյուղացիների մեջ՝ կապալառու կոլոնների նախօրինակը: Պատահական չէ, որ

<sup>1</sup> «Հռոմեական կայսրությունը, – ըստ նրա, – ձևավորվել է այսպիսի անգուցադրելի տարրերից, իր մեջ է ներառել այնքան ժողովուրդների պետական ավանդույթներ, որ նրա պետական հաստատությունների պատմության մեջ... մենք պետք է որոնենք և գտնենք նախնիի տարրերը, մինչև հռոմեական ժամանակների պետական իմաստության քաղաքամասերը: Հռոմեական պետությունը հիմնված էր անտիկ պետականության երկու գլխավոր ձևերի՝ հելլենական պոլիտիայի և հելլենիստական միապետության վրա, որոնք իրենց մեջ զետեղել են պոլիտիայի և արևելյան տարածքային մենիշխանության տարրերը: Այդ հիմքերի վրա է հենված Հռոմեական կայսրությունը, մինչդեռ Հռոմեական հանրապետությունը հունական պոլիտիայի Բարձրագույն դրսևորումն էր, Հռոմեական կայսրությունը՝ հելլենիստական միապետության սկզբունքների տարածում ողջ հունական... Տարանջատել [361] հելլենիստական պոլիտիան և հելլենիստական միապետությունը նրանից, ինչ համարվում է գուտ հռոմեական պետական իմաստության արգասիքը... մեր երկրորդ խնդիրն է» (անդ. էջ XI):

<sup>2</sup> XX դ. սկզբներին մեծ տարածում գտան տեսություններ այն մասին, որ հելլենիստական Արևելքի երկրաչափը Կեսարը, Ալեքսանդր Մեծի պես, Արևելքը վեր էր դասում Հռոմից և ձգտում Հռոմը վերածել հելլենիստական տիպի միապետությանը: Այդ վարկածն առաջին անգամ իր հանրահայտ «Կեսարի միապետություն և Պոմպեոսի պրինցիպատը» (1918) մենագրության մեջ արտահայտել է էդ. Մեյերը: Այդոց թվում այդ տեսության կողմնակիցն էր ֆրանսիացի պատմաբան Լեոն Օմոն, ով «Օգոստոս» (1933) մենագրության մեջ Օկտավիանոս Կեսարին անվանում է «լատիական ազգային ռեակցիայի դրսևորում ընդդեմ Կեսարյան արևելյան-հելլենիստական միապետական համակարգի»:

1900 թ., երբ սկսեց հրատարակվել Հռոմի տնտեսական կյանքին նվիրված Ռոստովցևի հանրագիտարանական հոդվածների շարքը և մեկ ակադեմիական ակնարկ կոլոնատի մասին<sup>1</sup>, լույս տեսան նաև հելլենիզմին նվիրված առաջին երկու աշխատանքները. Ուրիխ Վիլկենի Եգիպտոսի և Նումիդիայի օտարակոններին նվիրված աշխատանքի գրախոսությունը: Վերջինս լույս էր սփռում հռոմեական հելլենիզմի կառավարման եղանակների վրա<sup>2</sup>: Միևնույն ժամանակ լույս տեսավ ընդհանուր տեսական բնույթի մի հոդված, որում Ռոստովցևը քննադատորեն է արտահայտվել Կ. Բյուխերի այդպես կոչված օյկոսային տնտեսության տեսության մասին: Ըստ Բյուխերի, հին աշխարհին բնորոշ էր նահապետական պարզունակ տնտեսություն: Ձարգացելով էդ. Մեյերի տեսությունը Ռոստովցևը Հին աշխարհի շատ երկրներում տեսնում էր բարձր զարգացած տնտեսական հարաբերություններ, իսկ հելլենիստական Եգիպտոսը համարում էր առաջին կապիտալիստական երկիր<sup>3</sup>:

Այդ խնդրի շուրջը անթիվ նիզակներ ջարդվեցին, շատերը, ով կիսում էր այդ մոտեցումը, թե Արևմուտքում, թե Ռուսաստանում խոսում էին կես ծայնով կամ զգուշորեն լուռ: Միայն Ռոստովցևն անխոհեմորեն գրոհի էր նետվում էր «հոդմադացների» դեմ: Եվրոպայում երկար ժամանակ նրա մոտեցումներն անվանում էին «սկյութական» և «բարբարոսական» (հատկանշական է, որ Եվրոպայում նման «պատվանունների» արժանացել էին նաև Ռախմանինովը և Շայյապինը): Դա ունի մի քանի պատճառներ. որոնցից մեկն այն է, որ Ռոստովցևն առաջին խոշոր ռուս պատմաբանն էր,

<sup>1</sup> Ростовцев 1900: 105–109; idem 1901: 295–299; idem 1910: 913–921.

<sup>2</sup> Журнал министерства народного просвещения. 1900, март, отд. II. С. 133–165. Ավելի ուշ Ռոստովցևը սկսում է հետաքրքրվել նաև հելլենիստական մշակույթով տեսնելով վերջինիս մեջ ապագա կայսերական հռոմեական մշակույթի համակերպը: Տե՛ս Ռոստովցևի նախաբանը. Баумгартен, Поланд, Вагнер 1914.

<sup>3</sup> Ростовцев 1900: 195–217; Он же 2003: 322–354.



որ «դեսանտ էր իջել» անգլիալեզու գիտական միջավայրում: Այստեղ նա անմիջապես հայտնվել էր ուշադրության կենտրոնում. պեղում էր նոր քաղաքներ և ամբողջ քաղաքակրթություններ, աշխարհի գրեթե բոլոր երկրներում վեց լեզուներով կարդում էր դասախոսություններ և միշտ մեծագույն հաջողությամբ, ոչ մայրենի լեզուներով հրապարակում օրիգինալ հետազոտությունների հաստատիրոհատորներ, մինչդեռ իր Օքսֆորդյան գործընկերները տարիներով գրում էին հանրագիտարանային բնույթի մեկ-երկու հոդված: Ըստ էության նա մենակ անում էր այն ինչ չէր հաջողվում անել մեկ խոշոր համալսարանին կամ ակադեմիական հիմնարկին (նման բաներ գիտական հանրությունը չի ներում): Նրա ապացույցներն ու փաստարկներն այնքան շատ էին և այնքան համոզիչ, որ դրանք կարելի էր մերժել, բայց անհնար էր անտեսել, ինչպես դա ընդունված է ակադեմիական միջավայրում: Սակայն Ռոստովցևի թերևս ամենակարևոր հատկանիշներից էր նրա ունակությունը մասնավորի հետևում տեսնել ընդհանուրը, մի բան, որ իր բրիտանական գործընկերներից քչերին էր բնորոշ:

Իհարկե կային նաև ավելի էական հակասություններ: Արևմտյան քաղաքագետներից շատերը Ռոստովցևի հղացքի մեջ նկատեցին անցանկալի ենթատեքստ՝ նա հռոմեական կապիտալիզմը և վերջինից արտադրյալ շատ երևույթներ բխեցնում էր հելլենիստական կապիտալիզմից և հելլենիզմի շրջանում ձևավորված աշխարհի տեսությունից<sup>1</sup>: Որոշների կարծիքով դա ստվերում է Հռոմեական քաղաքակրթության դերակատարությունը համաշխարհային պատմության մեջ, այն կապում արևելյան քաղաքակրթությունների խառնարանում ձևավորված երևույթների հետ: Ռոստովցևը նման փաստարկներ համարում էր պարզունակ: Իսկապես Հռոմեական քաղաքակրթությունը, հելլենիստական քաղաքակրթությու-

<sup>1</sup> Ростовцев 2003: 360–387.

յան նման համադրական էր, սակայն դասական հունական և արևելյան հելլենիստական քաղաքակրթական արժեքների փոխառությունը, բնավ չի ազդում Հռոմեական քաղաքակրթության ինքնօրինակության վրա, քանի որ, Հռոմն այդ արժեքները փոխառել է ստեղծագործաբար, և ոչ կուրորեն: Ավելին, Ռոստովցևը համարում էր, որ Հռոմի մեծագույն առաքելությունը՝ Արևմուտքում հելլենիստական արժեքների տարածումն էր Արևմուտքում<sup>1</sup>:

Այդ կապակցությամբ, Ռոստովցևի ամենակատարյալ քննադատ ամերիկյան պատմաբան և քաղաքագետ Մոզես Ֆինլին, որն իր կյանքի մեծ մասը նվիրել է Ռոստովցևին պսակազերծ անելու գործին<sup>2</sup>, վերջինիս արևմտամետությունն անվանում է կեղծ, իսկ նրա տեսությունը մոդեռնիստական և մանկամիտ<sup>3</sup>: (Ռոստովցևը որևէ կերպ չէր արձագանքում այդ մեղադրանքներին): Հատկանշական է, որ մինչ օրս էլ Ռոստովցևի քննադատները նրա հայեցակարգը բնորոշում են որպես «մոդեռնային» և ոչ «մոդեռնիստական»<sup>4</sup>, թեև այդ վերջին եզրը (Հաբերմասյան Modernity եզրի ընկալմամբ) ավելի ճիշտ է բնութագրում նրա պատմիմաստասիրական հայացքները:

Իսկ ի՞նչն էր բորբոքում մարքսիստների զայրույթը Ռոստովցևի տեսության մեջ (պրոլետարական գրող Մաքսիմ Գորկին անգամ վիրավորական արտահայտություններ է արել Ռոստովցևի հասցեին): Առաջինն այն է, որ Ռոստովցևն իր տեսությամբ մերժում էր պատմության գծային-փուլային հղացքը, որի համաձայն կապիտա-

<sup>1</sup> Ростовцев 1904.

<sup>2</sup> St' u Крих 2006: 6–26; Новое литературное обозрение 2009, № 95.

<sup>3</sup> Պատմաբանի բոլոր կենսագիրները, այդ թվում նրա ջերմեռանդ երկրպագուները, միաձայն կռում, որ թեև Ռոստովցևն ունեցել է ընդգծված արևմտամետ կեցվածք, իրականում, նույնիսկ երկար տարիներ ապրելով Արևմուտքում, շարունակում էր մնալ ուղևոր ժուժ ու մտավորական (տե՛ս Wes 1990: XXIX; Shaw 1992: 222):

<sup>4</sup> Կենսագիրները կռում են նրա կապերը ռուսական Արժաթի դարի նշանավոր քանաստեղծների հետ, հիշատակում նրա համախափի շփումները Վյաչ. Իվանովի, Ա. Բյուկի, Վ. Նաբոկովի և այլոց հետ, պատմում նրա սալոնի մասին, որը հավակում էր չորսքշաբթի օրերը Ս.Պետերբուրգի Բուշայա Մորսկայա փողոցում, բայց ոչ ավել:

լիստական հարաբերությունները կարող են ի հայտ գալ միայն հաստոցների, ավտոնոմ շարժիչների և ազատ պրոլետարների ասպարեզ իջնելուց հետո: Մարքսի պնդմամբ, առանց այդ նախադրյալների կապիտալիստական հարաբերությունների ձևավորումն անհնար է, ուստի կապիտալիզմի մասին կարելի է խոսել միայն սկսած XVIII դարից և միայն Արևմտյան Եվրոպայում: Դրան հակառակ, Ռոստովցևն առաջարկում է կապիտալիզմի այլ մոդել՝ ըստ նրա կապիտալիստական հարաբերությունները պայմանավորված են նախևառաջ տնտեսապես ակտիվ դասակարգի գիտակցությամբ, որը կարող է դրսևորվել ցանկացած քաղաքակրթության մեջ: Ուստի կապիտալիստական հարաբերությունները խորթ չէին հին դարաշրջանին, կապիտալիզմը ծաղկել է Արևելքում, արդեն հելլենիստական Արևելքում և Հռոմում: Իհարկե, նշում է Ռոստովցևը, տառացիորեն դա ժամանակակից կապիտալիզմ չէ, բայց վաղ Եվրոպական (օրինակ XV դարի) կապիտալիզմի հետ այն միանգամայն համադրելի է:

Նման մոտեցումը «կենդանացնում» պատմությունը, այն դարձնում արդիական, ավելի մոտ և հասկանալի ժամանակակիցներին: Առանց դրա պատմությունը դադարում է խոսել արդի մարդու հետ, դառնում մեռած գիտություն, «անտիկվար հնությունների» հավաքածու: Պաշտպանելով Ռոստովցևին արևմտյան և խորհրդային գործընկերների հարծակումներից, նրա կենսագիր Մ.Ա. Ուեսը գրում էր. «յուրաքանչյուր պատմություն՝ արդի պատմություն է»<sup>1</sup>: Հելլենիստական Արևելքի և Հռոմի մասին ազատ և կենդանի ուսերենով գրված Ռոստովցևի երկերը ներշնչված էին, ոչ միայն անտիկ աղբյուրներով և նորաբաց հնագիտական նյութերով, այլև ժամանակակից ռուս իրականությամբ: Այդ իրականության մեջ տեղի էին ունենում քաղաքային միջին դասի (բուրժուազիայի) սրընթաց

<sup>1</sup> Wes 1988: XXII.

ձևավորվում, վերջինիս միաժամանակյա մրցակցությունն ու համագործակցումը տոհմիկ ավագանու հետ, քաղաքի և գյուղի ծպտյալ հակամարտություն, որը ժամանակ առ ժամանակ վերաճում էր «զանգվածների ապստամբությանը» (խոսքը քաղաքաբնակ լյուսպենացված գյուղացիների մասին է), անհատական ձեռներեցության և տերունական բյուրոկրատական իշխանության միջև խորացող ներքին հակասություններ և վերջապես արևելյան և արևմտյան մշակույթների փոխազդեցություն և փոխինտեգրում<sup>1</sup>: Ճիշտ այսպես, գրեթե առանց վերապահումների կարելի է բնութագրել Հելլենիստական աշխարհը և նրա ժառանգորդ՝ Pax Romana-ն:

Ավելին, բնութագրելով Ռոստովցևի «կենդանի» պատմության կերտման արմատները, Ա. Մոմիլյանոն նկատել է, որ ժամանակակից ռուս իրականությունից բացի պատմաբանի աշխարհընկալման վրա մեծապես ազդել է նաև վտարանդիությունը: Վերջինս Ռոստովցևի ստեղծագործություններին հայտնել է ընդգծված հակապոզիտիվիստական ու միևնույն ժամանակ ողբերգական և անգամ կատարածաբանական երանգ<sup>29</sup>: Դրան հակառակ, մինչև վտարանդիությունը, հայրենիքում պահանջված երիտասարդ և չափազանց հաջողակ պրոֆեսորի, ակադեմիկոսի և ինչու չէ՝ կենդանի դասականի գործերը համակված էին հավատով գիտության ուժի նկատմամբ, ճանաչողական հավակնոտությամբ և նախնիացական լավատեսությամբ:

Վերադառնալով Ռոստովցևյան «մոդեռնիզմին», ավելացնենք, որ արդի հետազոտողներից շատերն այսօր պատմության արդիականացումը դիտում են ոչ թե իբրև արատ, այլ՝ պատմագիտության զարգացման համար անհրաժեշտ ներքին խթան, որի շնորհիվ պատմական գիտությունը կարող է մրցակցել քաղաքագիտության և այլ «արդիական» գիտակրթանքների հետ: Այսպես հենվելով

<sup>1</sup> Idem: 207–221.

Ռոստովցևի գաղափարների վրա Նիկոլայ Բերոյանը<sup>1</sup>, Պավել Ֆլորենսկին<sup>2</sup> և Ումբերտո Էկոն<sup>3</sup> տարբեր ժամանակներում մշակել էին «Նոր Միջնադարի» հղացքը, իսկ Օրտեգա-ի-Գասետը, իր իսկ խոստովանությամբ, հանրահայտ «Չանգվածների ապստամբությունը» գրել է ոգեշնչված Ռոստովցևի «կենդանի պատմությունից»: Ճիշտ է Բերոյանը «ժամանակակից անտիկայի» վախճանը (XIX դ. աշխարհի՝ Վիկտորյական դարաշրջանի, ռուսական դասականության և այլն) ընկալում էր իբրև ողբերգական ճանապարհ դեպի մաքրված և նորացված «միջնադարյան» հասարակություն, ինչին դժվար թե համաձայնվեր Ռոստովցևը: Առաջին աշխարհամարտից հետո նրան ընդհանրապես բնորոշ չէր պատմության լավատեսական ընկալում, բայց նա բավարարված կզգար, տեսնելով թե ինչպես իր հայացքները խթանեցին XX դ. հումանիտար միտքը:

Այսպիսով Ս.Պետերբուրգյան դպրոցների կարկառուն ներկայացուցիչները՝ Ի.Մ. Գրևսը և հատկապես Մ.Ի. Ռոստովցևը հսկայական ներդրում կատարեցին անտիկ աշխարհի հասարակական-տնտեսական պատմության մշակման գործում, սակայն նրանք միայնակ չէին, որ XIX–XX դդ. սահմանազլխին դիմեցին հին պատմության այդ կողմին: Այդ առումով շատ բան արեց Մոսկվայի պատմագիտական դպրոցի ներկայացուցիչ, Կազանի համալսարանի պրոֆեսոր Միխայիլ Միխայլովիչ Խվոստովը (1872–1920 թթ.), որը բազմաթիվ աշխատություններ է նվիրել հելլենիստական և հելլենիստական-հռոմեական դարաշրջաններին<sup>4</sup>: Բացի այդ իր դասախոսություններում, հողվածներում և ակնարկներում անդրադար-

<sup>1</sup> Бердяев 1924.

<sup>2</sup> Хагермейстер 2006.

<sup>3</sup> Эко 1994: 258–267.

<sup>4</sup> Хвостов 1907: 1; Он же 1902, кн. 3: 43–56; 1904, кн. 4: 145–148; Он же 1904: 188–222; Он же 1914: 423–437 (Հողվան ունի բնորոշ խորագիր. «К вопросу о генезисе античного капитализма»).

ծել է պատմագիտության մեթոդաբանությանը և պատմիմաստասիրության խնդիրներին<sup>1</sup>:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ռուսական հելլենիստագիտությունը, թեև ձևավորվեց համեմատաբար ուշ և երկար ժամանակ զարգանում էր արևմտյան, առաջին հերթին գերմանական, անտիկագիտության ազդեցության ներքո, արդեն XIX դ. վերջին քառորդում և հատկապես XX դ. առաջին երկու տասնամյակներում այն արժանի տեղ գրավեց արևմտյան հետազոտական դպրոցների կողքին: Ասվածը առաջին հերթին վերաբերում է հելլենիստական և բյուզանդական հետազոտություններին: Այս բնագավառները համեմատաբար քիչ էին հետաքրքրում արևմտյան հետազոտողներին, որոնք նախապատվություն էին տալիս դասական անտիկագիտությանը<sup>2</sup>, իսկ ռուս պատմաբաններին ավելի էին հրապուրում արևմտյան քաղաքակրթության փոխակերպումները Արևելքում: Բացի այդ նույնիսկ արևմտամետ պատմաբանները երբեք չէին բացարձակացնում արևմտյան քաղաքակրթական տարրերի ազդեցությունը Արևելքի վրա, ավելին նշում էին, որ քաղաքակրթական ազդեցությունը միշտ եղել է փոխադարձ: Ռուսական հելլենիստական առանձնահատկություններից մեկն այն էր, որ այն զարգանում էր մի քանի ուղղություններով և մշակել էր անտիկ պատմության ուսումնասիրության մի քանի ուղղություններ:

<sup>1</sup> Он же 1909: 791–824.

<sup>2</sup> Այս բնագավառում XIX դ. երկրորդ կեսում միանշանակորեն գերիշխում էին գերմանացի հետազոտողները, սակայն Առաջին աշխարհամարտից հետո առաջնային դիրքերը աստիճանաբար անցնում են բրիտանական և ֆրանսիական անտիկագետներին:

## ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո իրավիճակը Ռուսաստանում կտրուկ փոխվեց: Բոլոր ժամանակներում, դասական մշակույթը և իհարկե անտիկ դասական հետազոտությունները հենվում էին հասարակության ամենակրթված խավերի վրա: Ռուսաստանում այդպիսի հենարանը մեծաթիվ ազնվական և բուրժուական մտավորականությունն էր, որը դեռևս Պյոտրի բարեփոխումների ժամանակներից հակված էր դեպի Արևմուտք և նպաստում Ռուսաստանի եվրոպացման և մոդեռնիզացման: Պատահական չէր, որ Ռուսաստանի գիմնագիտներում այդքան մեծ տեղ էր հատկացվում դասական կրթությանը<sup>1</sup>: Ռուսաստանյան ինտելիգենցիան անտիկ դասականությունն ընկալում էր իբրև բնական օղակ՝ շաղկապող ռուսական ուղղափառ քաղաքակրթությունը եվրոպականին: Սակայն դա բնավ չէր նշանակում, որ ռուս մտավորականները հրաժարվում էին իրենց ինքնությունից: Հակառակը նրանց նպատակն էր ազգայինը հարստացնելով նոր տարրերով, Ռուսաստանը դարձնել մրցունակ արագ գլոբալիզացվով աշխարհում: Այդ առումով հելլենիզմի և բյուզանդական քաղաքակրթության պես ոգեշնչող օրինակներ մարդկային պատմության մեջ քիչ կարելի է

գտնել: Ուստի Բուզեսկուլի, Կարենի, Զելինսկու և Ռոստովցևի պես հետազոտողների հայտնվելը ռուսական դասական անտիկագիտության և հելլենիստագիտության երկնակամարում ինչ-որ տեղ անխուսափելի էր և բնական:

Սակայն Ռուսաստանի նոր խորհրդային իշխանությունների համար դասական անտիկագիտությունը որպես գաղափարաբանական հարանիշ խորթ էր և անընդունելի: Պատահական չէ որ դպրոցներում առաջին հերթին վերացվեց դասական կրթության համակարգը: Հսկայական կորուստներ կրեց համալսարանների պրոֆեսորա-դասախոսական կազմը: Կտրուկ իջավ ուսանողության կրթական մակարդակը: Եթե նախկինում համալսարանների ուսանողների մեծ մասը ծագում էր քաղաքային մտավորականության դասից, ապա այժմ պատմության ֆակուլտետները գլխավորապես համալրվում էին մայրաքաղաքները հեղեղած գյուղացի երիտասարդներով: Համախմբվելով կոմերիտմիության շարքերում և արագ յուրացնելով հեղափոխական պոռոտաբանություն, սրանք կազմակերպված գրոհ սկսեցին դասական պատմագիտության վրա: Համալսարաններն ավարտելով, նրանք առաջատար դիրքեր գրավեցին ակադեմիական և համալսարանական գիտության մեջ, հետին պլան մղելով «հին» մասնագետներին: Միայն նրանք, ովքեր անխոս ընդունում էին «խաղի նոր կանոնները» կարող էին շարունակել գրադվել գիտությամբ, բավարարվելով երկրորդական դերերով:

Պատմաիմաստական բազմակարծությանն ու բազմաշերտությանն եկավ փոխարինելու միասնական և բոլորի համար պարտադիր հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին մարքսլենինյան ուսմունքը: Դրա նեղ շրջանակների ներսում 30-ական թթ. սկզբներին մշակվեց համապարփակ անտիկ ստրկատիրական հասարակարգի հայեցակարգը: Անտիկագիտությունը կորցնելով իր գիտական որակը դարձավ մարքսիստական քաղտնտեսագիտությա-

<sup>1</sup> Դասական կրթությունը՝ միջնակարգ հումանիտար կրթություն է, որի ուսումնական պլանը հիմնված է դասական լեզուների (լատիներեն, հունարեն) լեզվի, գրականության, դիցաբանության և պատմագրության, փիլիսոփայության ուսումնասիրության վրա:

յան նեցուկ: Ովքեր չէին ընդունում «խաղի կանոնները» ենթարկվում էին հալածանքների: Այսպես վաղաժամ մահացավ (1931 թ.) Վ. Բուզեսկուլը, որն այդպես էլ չհաշտվեց նոր իրավիճակի հետ: Արիստիդ Իվանովիչ (1897–1982) Դովատուրը և պապիրուսագետ Օտտո Օսկարովիչ Կրյուզերը<sup>1</sup> երկար տարիներ անցկացրել էին տարբեր տաժանավայրում, իսկ բյուզանդագետ Վ. Ն. Բենեշևիչը մահացավ Ներքին գործերի ժողկոմատի (ՄԿՎԸ) զննաններից մեկում:

«Սոկոլովյանների կրտսեր սերնդի» ներկայացուցիչ, հեյլենիզմի խնդիրներով ակտիվորեն զբաղվող<sup>2</sup> Սերգեյ Ալեքսանդրովիչ Ժեբելյովը (1867–1941 թթ.) ստիպված եղավ գնալ բարոյական նսեմացուցիչ կոմպրոմիսի: Ռոստովցևի և Չեխինսկու<sup>3</sup> պես նա չհեռացավ հայրենիքից և անցումային դաժան ժամանակներում, շարունակում էր զբաղվել ավանդական պատմաբանասիրական հետազոտություններով: Անշուշտ նրան ավելի հեշտ էր հարմարվել նոր իրավիճակի: Բանն այն է, որ լինելով «Սոկոլովյան դպրոցի» ցայտուն արտահայտված ներկայացուցիչ, Ժեբելյովը չունեցրեց յուրօրինակ պատմիմաստասիրական և հասարակական-տնտեսական հայեցակարգեր, իսկ անտիկ պատմության նկատմամբ «սոկոլովյաններին» բնորոշ պատմաբանասիրական մոտեցումը միշտ ապաքաղաքականացված էր և որևէ կերպ չէր հակասում մարքս-լենինյան ուսմունքին: Դա հնարավորություն էր տալիս Ժեբելյովին կաբինետային անդորրում շարունակել իր բանասիրական ուսումնասիրությունները և պատրաստել անտիկագետների նոր սերունդ, տարագրված հին սերնդի փոխարեն:

Սակայն, որոշ ժամանակ անց ակադեմիական ավանդույթների մաքրության երբեմնի ջերմեռանդ ջատագով Ժեբելյովը, անսպասե-

լիորեն դրսևորեց կոնֆորմիստական կեցվածք և դարձավ իշխող դոկտրինների հետևողական ջատագով: Նա հանդես եկավ հողվածով «ԽՍՀՄ տարածքում առաջին հեղափոխական ապստամբությանը» վերնագրով: Հենվելով Քերսոնետում Դիոփանտոսի (Διόφαντος ὁ Ἀλεξανδρεὺς, Ք.ա. II դ.) պատվին թողած վիմագիր հրովարտակի տվյալների վրա, Ժեբելյովն առաջ էր քաշել վարկած, որի համաձայն Բոսպորի թագավոր Պերսիադոսի դեմ ապստամբած սկյութների առաջնորդ Սավմակոսն ինքը ստրուկ էր և իր ղեկավարած ապստամբությունը սկյութ-ստրուկների հզոր շարժում էր՝ ուղղված դասակարգային շահագործողների դեմ: Ժեբելյովի նման կերպարանափոխությունը խրախուսանքի արժանացավ իշխանությանների կողմից, ինչի շնորհիվ նա հին ռուս անտիկագետներից դարձավ թերևս ամենաստատուսավոր պատմաբանը<sup>2</sup>:

Սակայն, նույնիսկ Ժեբելյովի քննադատները նշում էին, որ այդ կոմպրոմիսն ուներ նաև դրական կողմեր, վառ անհատականությունների բացակայության պայմաններում Ժեբելյովին հաջողվեց իր շուրջը միավորել ցաքուցրիվ եղած ռուս անտիկագետներին և նրանց օգնությամբ վերականգնել, թվում էր արդեն ընդմիշտ մարած, ռուս անտիկագիտության ավանդույթները: Ճիշտ է հիմնականում դրանք «սոկոլովյան» պատմաբանասիրական դպրոցի ավանդույթներն էին, համեմված մարքս-լենինյան հասարակագիտական մոտեցումներով և հեղափոխական պոռոտախոսությամբ, բայց առանց այդ բազայի խորհրդային անտիկագիտությունն ապագա չէր կարող ունենալ: Ինչևէ Ժեբելյովին հաջողվել էր ապահովել գիտության համար այնքան կարևոր ժառանգականությունը և դաստիարակել անտիկագետների նոր սերունդ<sup>3</sup>: Թեև հետագայում

<sup>1</sup> Крюгер 1934: 189–261).

<sup>2</sup> Жебелев 1879: 13–32. Он же 1922.

<sup>3</sup> Ռոստովցևի և Չեխինսկու պես վառ և ուժեղ անձնավորությունները անշուշտ չէին կարող համակերպվել նոր ռեժիմին:

<sup>1</sup> Жебелев 1938: 43–71.

<sup>2</sup> Սակայն Ժեբելյովին ևս չհաջողվեց խույս տալ ռուս մտավորականության դառը ճակատագրին: St'u Тункина 2000: 116–161.

<sup>3</sup> Васильев 1997; Фролов 2000.

այդ դպրոցի սաներն աչքի չէին ընկնում վառ անհատականությամբ, համարձակ ինքնօրինակ աշխատանքներով, բայց դարձան դասական բանասիրության և անտիկ պատմության (հատկապես պատմագրության) փայլուն ուսուցիչներ:

Սակայն մարքս-լենինյան մոտեցումը անտիկ պատմագիտության մեջ հաստատվեց ոչ միանգամից և անցավ կազմավորման մի քանի փուլեր: 1920–1930 թթ. ԽՍՀՄ-ում ծավալվեց գիտական բանավեճ Արևելքում ստրկության և ստրկատիրական հասարակարգի շուրջ: Որոշ խորհրդային պատմաբաններ, գտնվելով Օսվալդ Շպենգլերի տեսությունների ազդեցության ներքո, փորձում էին նախակապիտալիստական հասարակական-տնտեսական հասակաձուլումները համախմբել մեկ՝ «ասիական» (արխայիկ) հասարակական-տնտեսական հասարակարգի մեջ՝ հիմնված արտադրության ուրույն՝ ասիական եղանակի վրա, որը գոյություն ուներ միայն ասիական հասարակություններում: Ինչպես հայտնի է, «ասիական» հասարակարգի տեսությունը մշակվել է դեռևս Կարլ Մարքսի կողմից կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերին նվիրված «1857–1859 թթ. տնտեսական ձեռագրեր» և «Բրիտանական տիրապետությունը Հնդկաստանում» ակնարկներում:

Սակայն ասիական արտադրաեղանակ կողմնակիցների դեմ հանդես եկան պատմաբան-ունիվերսալիստները, որոնք աշխարհի մի շարք երկրների և տարածաշրջանների արտադրահարաբերությունների վերլուծության հիման վրա եզրակացրել են, որ նման արտադրաեղանակ գոյություն ուներ և ունի ոչ միայն արևելյան հասարակությունների զարգացման նախնական փուլերում, այլ նաև առհասարակ որջ մարդկության մոտ՝ այն համարելով բացարձակ և

ընդհանրական: Սրանից ելնելով՝ արևելյան այնպիսի հասարակություններ, ինչպիսին է Եգիպտոսը Նոր թագավորության շրջանում կամ Աքեմենյանների տերությունը, սկսեցին սահմանվել որպես դասական ստրկատիրական հասարակություններ, որոնք, ըստ էության, ոչնչով չէին տարբերվում հունական պոլիսներից կամ Հին Հռոմի հասարակարգից: Մարքսիստական այս պարզեցված տեսության հիմքում դրված էր համաշխարհային պատմական գործընթացի միասնության գաղափարը, ինչը դրսևորվում էր հասարակարգերի հերթագայության միջոցով՝ որպես մարդկության պատմական զարգացման ընդհանրական փուլեր:

«Հնգամդամ տեսության» հիմնադիր ընդունված է համարել Ալեքսանդր Իլյիչ Տյոմենենը, անտիկ հասարակության պատմության մասին առաջին մարքսիստական աշխատանքների հեղինակ<sup>1</sup>, ով առաջինը կիրառեց ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի հասկացությունը հին Հունաստանի պատմության վերաբերյալ<sup>2</sup>: Հին արևելյան և անտիկ հասարակությունները նա համարում էր ստրկատիրական հասարակարգի երկու տարատեսակներ: Իր աշխատություններում նա գլխավոր ուշադրությունը դարձնում էր Հին կտակարանի պատմության հասարակական-տնտեսական առանձնահատկությունների և անտիկ աշխարհի հետ նրանց կապին<sup>3</sup>: Բացի այդ նա զբաղվել հելլենիստական դարաշրջանի Միջագետքի պատմության հարցերով<sup>4</sup>:

Հելլենիզմի և առհասարակ անտիկ պատմության խոշոր հետազոտող և տեսաբան կարելի համարել Սերգեյ Իվանովիչ Կովալյովին, ով մարքսիստական ֆորմացիոն տեսությունը շաղկապել է

<sup>1</sup> Тюменев: 1922; Он же: 1922.

<sup>2</sup> См.: Тюменев: 1920–22; Он же: 1922; Он же: 1923; Он же: 1923; Он же: 1935. Համեմատության համար տե՛ս նաև. Тюменев 1966: 333; Тюменев 1937.

<sup>3</sup> Тюменев 1959: 58–74.

<sup>4</sup> См.: Тюменев 1957: 37–56.

<sup>1</sup> Sl'u Рабство в странах Востока в средние века: 1986.

հելլենիստական և հոմեակական պատմությանը<sup>1</sup>: Սերգեյ Իվանովիչը խորհրդային տարիներին անտիկ պատմության ուսումնասիրողներից ամենա համարձակ և անկաշկանդ տեսաբանների էր: Նա մինչև վերջ հավատարիմ մնաց հին հասարակությունների բոլորապտուտային (ցիկլիկ) տեսության հետևորդ և այսպես կոչված մոդեռնիստական հայացքներից հին պատմությանը, որը, բացի ամենից արտահայտվում էր «պրոլետարիատ», «ֆեոդալիզմ», «գյուղացիական հեղափոխություն», «ստրուկների և կոլոնների սոցիալական հեղափոխություն»<sup>2</sup> և շատ այլ եզրերի հաճախակի օգտագործման մեջ: Հատկանշական է, որ դեռևս մինչև մարքսիստական տեսաբան դառնալը Կովալյովը գիտական հանրությանը հայտնի էր որպես է. Մեյերի ու Մ. Ռոստովցևի գաղափարակիր: Այսպես հին մակեդոնական հասարակության կառուցվածքի մեջ նա տեսնում էր ավատատիրության տարրեր՝ հիերարխիկ սանդղակարգ, ավատային հողատիրություն և նվաճողական ձգտումներ ունեցող վերնախավ<sup>3</sup>: Սակայն 1936–1937 թթ. Վ.Ս. Սերգեևի հետ համատեղ Կովալյովը տալիս է «հելլենիզմ» հասկացության նոր սահմանում, որը արմատապես տարբերվում էր այդ եզրի Ռոստովցևի ընկալումից: Կովալյովը հելլենիզմը դիտարկում էր որպես Արևելյան Միջերկրականի զարգացման փուլ: Այն բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

- ավանդական հունական պոլիսի ստրկատիրական տնտեսության հասարակական-քաղաքական համակարգի ճգնաժամով

<sup>1</sup> См.: Ковалев 1936; Он же 1932; Он же 1933; Он же 1933: 345–354; Он же 1934: 295–328; Он же 1934: 89–99; Он же 1934: 70–80; Он же 1933 (Совместно с С.А. Жебелевым); Он же 1934: 139–180 (Совместно с С.А. Жебелевым).

<sup>2</sup> Ковалев 1954: 33–44.

<sup>3</sup> Он же 1930: 148–183.

- արևելյան հելլենիստական երկրներում ապրանքային հարաբերությունների և ստրկատիրության զարգացման բարձր մակարդակով
- գյուղական բնակչության շահագործման ձևերով
- հին արևելյան հասարակություններից ժառանգած միապետական կառավարման ձևերի լայն կիրառումով
- պետության մենաշնորհային միտումներով
- համադրականություն մշակույթի տարրեր բնագավառներում

Այսպիսով, Կովալյովի հելլենիզմի ընկալումները զգալիորեն տարբերվում էին արևմտյան շատ հետազոտողների (Դրոյզեն, Թարն, Բիկերման և այլք) մոտեցումներից: Վերջիններս հելլենիզմի համադրականության տարրերը տեսնում էին գլխավորապես մշակույթի և կրոնի բնագավառներում, այն էլ հունական տարրերի բացահայտ գերակշռությամբ և գերիշխանությամբ: Առանձին դեպքերում հնարավոր էին համարում արևելյան և արևմտյան տարրերի փոխազդեցությունը պետավարչական ոլորտում, բայց ոչ ավելին: Ըստ էության, գտնվելով մարքսիստական տեսության գաղափարախոսական ներգործության տակ, Կովալյովը չէր վախենում համարձակ եզրահանգումներ կատարել, նա բազմազան և բազմաշերտ համադրականության կողմնակից էր, ինչն անշուշտ Ռոստովցևի ազդեցություն արգասիքն էր: Կովալյովի համոզմամբ հելլենիզմն ենթադրում է հունական և տեղական արևելյան սկզբնատարրերի համադրականությունը տնտեսության, դասային-դասակարգային, քաղաքական հաստատությունների, մշակույթի և կրոնի, այսինքն կյանքի բոլոր բնագավառներում:

Ըստ Կովալյովի և Սերգեևի հելլենիզմը դարձավ հին հունական և հին արևելյան հասարակությունների զարգացման նոր և ավելի առաջադիմական փուլ: Հունական և արևելյան տարրերի սինթեզը

տարբեր երկրներում և տարածաշրջաններում միօրինակ չէր: Որոշ պետություններում գերիշխում էր հունական հիմնատարրը, մյուսներում՝ արևելյան, առանձին երկրներում՝ արևելյան և հունական տարրերը հավասարաչափ էին ներկայացված: Ավելին, առանձին երկրներում այդ սինթեզն ընդգրկել էր օրինակ հասարակական կառույցները, մյուսներում՝ քաղաքական, երրորդներում՝ մշակույթն ու կրոնը: Հունական և արևելյան հիմնանատարրերի զուգակցման ուժգնությունը պայմանավորված էր հելլենիստական հասարակությունների և պետությունների պատմական առանձնահատկություններով: Այդ դրույթներն իրենց հետագա զարգացումը ստացան հետպատերազմյան շրջանում Աբրամ Բորիսովիչ Ռանովիչի տեսական աշխատություններում:

Ի. Կովալյովը զբաղվում էր հելլենիստական<sup>1</sup> և հռոմեական<sup>2</sup> հասարակական-տնտեսական պատմության խնդիրներով, քրիստոնեության ծագման<sup>3</sup> և դասակարգային բնույթի<sup>4</sup> հարցերով: Դասախոսություններ էր կարդում անտիկ պատմության և պատմագրության վերաբերյալ, որը նրա շարադրմամբ վերածվում էր հելլենիստական-հռոմեական քաղաքակրթության և վաղ քրիստոնեության համայնապատկեր: Նա եղել է հին աշխարհի առաջին մարքսիստական դասագրքերի<sup>5</sup>, այդ թվում դպրոցական դասագրքերի

հեղինակը<sup>1</sup>, որոնցով դաստիարակվել է հետպատերազմյան սաների և առաջին հերթին պատմաբանների մի ամբողջ սերունդ:

Սակայն ինչ-ինչ պատճառներով մարքս-լենինյան ձևաչափի գլխավոր տեսաբան համարվել է խորհրդային շրջանի խոշոր եգիպտագետ և ասորագետ, խորհրդային Միությունում Հին Արևելքի պատմագիտական դպրոցի հիմնադիր Վասիլի Վասիլևիչ Ստրուովեն: Նրա տեսական սխեմաները նույնացվել են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մոտեցումների հետ և, որոշ վերապահումներով ու շտկումներով, տիրապետող են մնացել խորհրդային պատմագիտության մեջ ընդհուպ մինչև վերակառուցման սկիզբը: Նա հայտնի ռուս արևելագետ Բ. Տուրանի աշակերտն էր: Տուրանն իր աշակերտների հետ առաջինը Ռուսաստանում կազմակերպել էր հին եգիպտական, այդ թվում հելլենիստական գրավոր հուշարձանների համակարգված ուսումնասիրությունն ու հրատարակումը<sup>2</sup>: Շարունակելով իր ուսուցչի գործը Ստրուովեն ևս անդրադարձել է հելլենիստական եգիպտոսի պատմության խնդիրներին<sup>3</sup>:

Սակայն ողջ արհեստականությամբ և «գաղափարախոսական ականջները ձգելով» հանդերձ, «հնգանդամ տեսությունը» թույլ տվեց նորովի նայել Արևելքի պատմությանը և ազդակ հաղորդեց Հին Հայաստանի պատմության զարգացմանը: Վ.Վ. Ստրուովեի ունիվերսալիստական, համահավասարեցնող մոտեցումը, հատկապես հրաժարումը հատուկ՝ զուտ ասիական հասարակական-տնտեսական հասարակարգի հարացույցից, համենայնդեպս՝ տեսության

օրս էլ համարվում է հռոմեական պատմության լավագույն համախառնական դասախոսություններից մեկը:

<sup>1</sup> Ковалев 1923–25; Он же 1936; Он же 1948; Он же 1954; Он же 1955; Он же 1956 (Совместно с Е.М. Штаерман)

<sup>2</sup> См.: Тураев Б. Остатки финикийской литературы. СПб., 1903; Он же 1922; Он же 1935.

<sup>3</sup> См.: Струве 1914: 348–353; Он же Т. III, в. I, 1928: 109–185; Т. IV, 1930: 159–248.

<sup>1</sup> Ковалев 1946: 46–56; Он же 1948: 34–42; Он же 1948: 177–178; Он же 1949: 69–73; Он же 1949: 29–40; Он же 1949: 280–308; Он же 1949 (Совместно с У.В. Тарном).

<sup>2</sup> Ковалев 1947: 86–98; Он же 1948: 202–244; Он же 1955: 108–116; Он же 1956: 12–17; Он же 1957: 42–54.

<sup>3</sup> Ковалев 1958: 3–25; Он же 1959: 46–61; Он же: 1964 (Совместно с В.В. Струве); Он же 1960 (Совместно с М.М. Кублановым); Он же 1964 (Совместно с М.М. Кублановым); Он же 1948; Он же 1962: 78–95.

<sup>4</sup> Ковалев 1951; Он же 1952; Он же 1954

<sup>5</sup> Ковалев 1936; Он же 1937: Կովալյովի րազմիցս, այդ թվում Իսալիայում, վերահրատարակվող «Հին Հռոմ» մեկգրությունը. (История Рима: курс лекций. Л.: Изд-во Ленинградского государственного ордена Ленина университета, 1948) մինչ



մեջ, հավասարության նշան դրեց Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի միջև: Եվրոպան գրկվեց բացառիկության և եզակիության բրենդից, ինչը փոքր-ինչ թուլացրեց ավանդական արևմտակենտրոն դիրքորոշումները խորհրդային պատմագիտության, հասկապես արևելագիտության մեջ: Խորհրդային պատմագիտության մեջ դրվեց հելլենիստական աշխարհի աշխարհագրական և ժամանակագրական շրջանակների հարցը, որոնք զգալիորեն ընդլայնված էին: Առաջարկվեց դրանք տարբեր կերպ սահմանել յուրաքանչյուր առանձին երկրի համար: Մի կողմից՝ հելլենիզմի աշխարհագրական սահմանները բավական ընդլայնվեցին դեպի Արևելք, մյուս կողմից՝ կասկածի տակ դրվեց հելլենիստական աշխարհի շրջանակների մեջ Մակեդոնիան և Հունաստանը ընդգրկելու իրավաչափությունը: Նշվեց հելլենիզմի կենսունակության և անգամ Արևելքում հունա-մակեդոնական թագավորությունների անկումից հետո նրա տարրերի ամրապնդման և արմատավորման երևույթի մասին: Ա.Բ. Ռանովիչն առաջարկեց հելլենիզմը դիտարկել որպես անտիկ ստրկատիրական հասարակարգի զարգացման փուլ<sup>1</sup>, ինչն ինքնին տարօրինակ չի թվում, եթե նկատի ունենանք, որ Վ.Վ. Ստրովեն դասական ստրկատիրական հասարակությունների թվին էր դասում Աքեմենյան տերությունը և Քաղդեական թագավորությունը:

Այսպիսով, նշված երեք անտիկագետների ջանքերով 20–30-ական թթ. սահմանագլխին Լենինգրադում տեղի ունեցող գիտական թեժ բանավեճերի արդյունքում մշակվեց և խորհրդային պատմագիտության մեջ իր հաստատուն տեղը գտավ ստրկատիրական հասարակարգի տեսությունը, ըստ որի բոլոր հին հասարակությունների հիմքում ընկած էին ստրկատիրական հարաբերությունները: Ընդ որում ստրկատիրական հասարակարգն ընկալվում էր որպես

<sup>1</sup> Ранович 1950.

«ինգամաս» ֆորմացիոն հայեցակարգի երկրորդ փուլ: Դա բավականին կուռ և միևնույն ժամանակ պարզ հղացք էր, որն ամբողջությամբ համապատասխանում էր նոր մարքսիստական գաղափարախոսության պահանջներին և դարձավ խորհրդային պատմագիտության հիմնաքարը:

1920-ականների վերջում և 1930-ականների սկզբներին մշակված համապարփակ-ֆորմացիոն տեսության դաշտում իրենց ուրույն տեղը գրավեցին այդպիսի ճանաչված պատմաբաններ ինչպիսիք էին Բ.Լ. Բոգանսկին, Կ.Մ. Կոլոբովան, Ն.Ա. Մաշկինը<sup>1</sup>, Ռ.Վ. Շմիդտը, Վ.Դ. Բլավատսկին, Վ.Ֆ. Գայդուկևիչը, Դ.Պ. Կալիստովը և այլք: Նրանք բոլորը այսպես թե այնպես անդրադարձել էին հելլենիստական տեսության և պատմության խնդիրներին<sup>2</sup>: Կուզեինք նշել, որ այդ պատմաբանների բարձր դիրքերը պայմանավորված էին ոչ միայն առաջարկած փաստերի մարքսիստական մեկնաբանությամբ, այլև այդ խնդիրների շուրջը կատարված թեև ոչ միշտ փայլուն, բայց ծանրակշիռ աշխատություններով: Այդ նոր ձևաչափի գիտնականները եռանդով սկսել էին վերափոխել անտիկ պատմագիտությունը մարքսիստական ոգով:

Մարքսիստական ձևաչափի շրջանակներում հելլենիզմի տեսության խնդիրներն իրենց հետագա զարգացումն ստացան Աբրամ Բորիսովիչ Ռանովիչի (Ռաբինովիչ, 1885–1948) 1950 թ. հետմահու հրատարակված վերջինիս «Հելլենիզմը և նրա պատմական նշանակությունը» ծրագրային մենագրության մեջ<sup>3</sup>: Այստեղ հելլենիզմը դիտարկվում էր որպես ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի զարգացման ամենաբարձր և վերջին փուլ (այնպես, ինչպես իմպերիալիզմը, մարքս-լենինյան տեսության

<sup>1</sup> Машкин 1948: 35–54; Он же 1949: 32–39.

<sup>2</sup> Гайдукевич 1949; Он же 1955; Каллистов 1949; Жебелев 1953; Блаватский 1953.

<sup>3</sup> Ранович 1950.

մեջ համարվում էր կապիտալիստական ֆորմացիայի գազաթնա-կետը, ի դեպ իմպերիալիզմը նաև հելլենիզմի բնորոշ կողմերից է): Ռանովիչի համոզմամբ հին աշխարհում հելլենիստական երկրներից բարձր փուլ թևակոխել էր միայն կայսերական շրջանի Հռոմը<sup>1</sup>: Ըստ Ըստ խորհրդային տեսաբանի անտիկ պատմության այդ հերթա-կան, օրինաչափ և անխուսափելի շրջանը դասական հունական պոլիսի և Աքեմենյան պետության ճգնաժամի հետևանք էր, սակայն այդ դարաշրջանը չունի ինքնուրույան արժեք և ընդամենը կոչված էր հող նախապատրաստել ավելի առաջադիմական և ավելի մեծա-ծավալ Հռոմեական կայսրությանը:

Ըստ Ռանովիչի հելլենիզմի բնորոշ հատկանիշներից են.

- առևտրի և դրամային հարաբերությունների ինտենսիվ զար-գացում
- բնատնտեսության արտամղման միտում
- դասական ստրկատիրության տարածում Արևելքում
- տնտեսության որոշ համահարթեցում, էթնիկ մեկուսացման մեղմացում
- սոցիալական հակասությունների և դասակարգային պայ-քարի սրում
- հունական և արևելյան մշակույթների փոխազդեցություն և այլն:

Բայց բոլոր այդ ուղղություններում հելլենիզմի նվաճումները ունեին սահմանափակ ու ժամանակավոր բնույթ և ենթակա են էո-թենական փոփոխությունների, առանց որոնց անհնար է ֆորմա-ցիաների հերթափոխությունը:

Իր աշխատությամբ Ռանովիչը նպատակ ուներ հակադրել «միակ ճշմարիտ» մարքսիստական համապարփակ ֆորմացիոն տեսության հիմքերի վրա մշակված հելլենիզմի հղացքը «բուրժուա-

<sup>1</sup> Он же 1949.

կան» անտիկ պատմագիտության գլխավոր հենասյուն Մ. Ռու-տովցևի «մոդերնիզատորական» հայացքներին: Ռանովիչի հայե-ցակարգն իր հետագա զարգացումը ստացավ խորհրդային այդպի-սի ճանաչված պատմաբաններ աշխատություններում ինչպիսիք էին Կ.Մ. Կոլոբովան<sup>1</sup> և ավելի ուշ Կոչելենկոն<sup>2</sup>, Ս.Տ. Երեմյանը, Գաֆուրովը, Դ.Ի. Ցիբուկիդիսը<sup>3</sup>, Ա.Ս. Շոֆմանը<sup>4</sup>, Ի.Շ. Շիֆմանը<sup>5</sup> և այլք:

Սակայն զարմանալիորեն, նույն այդ անբարենպաստ ժամա-նակներում Ռուսաստանում պահպանվում էին անտիկագիտության պատմափիլիսոփայական և մշակութաբանական ուղղությունների ավանդույթները, կատարվում ինքնօրինակ և համարձակ հետազո-տություններ, առաջ քաշվում նոր գաղափարներ, որոնք նորարա-րությամբ գերազանցում էին ոչ միայն խորհրդային այլև Արևմուտ-քի ուսումնասիրողների գործերը: 1920–1930-ական թթ. այդ նորա-րարական ուղղությունների ռահվիրան դարձավ Նիկոլայ Յակով-ևիչ Մառը, ով անձնական խարիզմայի, գաղափարների ընդգրկ-մամբ, ինքնաստեղծ և նոր խնդիրների դրվածքի շնորհիվ մեծ հա-մակրանք էր վայելում խորհրդային և հատկապես Լենինգրադի մտավորականության մեջ: Իր գաղափարները մեծ ազդեցություն թողեցին մշակութաբանության և դիցաբանության խնդիրներով զբաղվող հետազոտողների, այդ թվում Ի. Գ. Ֆրանկ-Կամենեցկու և Օ.Մ. Ֆրեյդենբերգի վրա, ովքեր Մառի հետ համատեղ ձեռնամուխ եղան «Հարեթական ժողովածուի» («Яфетический сборник») և «Տրիստան և Իսուդա» հանդեսի (Լենինգրադ, 1932) հրատարակ-

<sup>1</sup> Վերջինս մանրամասն անդրադարձավ այդ հարցերին իր այդպես էլ չիրատա-րակված «Հելլենիզմի պատմություն» բուհական ձեռնարկում:

<sup>2</sup> Кошеленко 1978; Он же 1979; Он же 1963; Он же 1990: 12–13.

<sup>3</sup> Гафуров, Цибукидис 1980.

<sup>4</sup> Шофман 1963; Он же 1984.

<sup>5</sup> Шифман 1986: 369–387 и др.

մանը: Այդ ժողովածուների շուրջ ձևավորվել էր հայտնի մատական դպրոցը, որը բավականին երկար ժամանակ ժամանակ համարվում էր Խորհրդային միությունում ամենաառաջադիմականը և հեռանկարային<sup>1</sup>:

Այսպես Իգրայել Գրիգորյևիչ Ֆրանկ-Կամենեցկին, Էռնստ Կասսիրերի ոգով, մշակել էր հնամենի պայմանանշանների և այլաբանությունների հետազոտման համակարգ: Կամենեցկուն նախևառաջ հետաքրքրում էր անցում, ավելի ճիշտ՝ բեկում նախապատմական արքայիկ շրջանից դեպի պատմական ժամանակ: Այստեղից էլ նրա հետաքրքրությունը մարգարեական և վաղքրիստոնեական դարաշրջանների նկատմամբ: Մաքս Վեբերին զուգահեռ և կանխագործելով Կարլ Յասպերսին նա շատ հիմնովին անդրադարձել է «առանցքային ժամանակի» գաղափարին:

Սակայն Մառի ամենատաղանդավոր աշակերտն էր Օլգա Միխայլովնա Ֆրեյդենբերգը: Վերջինս Մառին վերաբերվում էր գրեթե որպես մարգարեի, անգամ նրա հետ գծովելուց հետո<sup>2</sup>: Նույնիսկ «մառականության» դեմ Ստալինի սանձարձակած հալածանքների ժամանակ, նա շարունակում էր պաշտպանել էր իր նախկին ուսուցչին<sup>3</sup>: Իր սկզբունքներին հավատարիմ մնալու պատճառով Ֆրեյդենբերգը գրանցվեց անբարեհույսների շարքը և երկար ժամանակով մերժված էր խորհրդային գիտական հանրության կողմից: Միայն 1932 թ. նրան հաջողվել էր Լենինգրադի համալսարանում վերաբացել դասական բանասիրության ամբիոնը՝ առաջինը Խորհրդային միության մեջ: Այդ ամբիոնը նա ղեկավարել է մինչև 1950 թ., չլքելով այն նույնիսկ Բլոկադայի դաժան տարիներին:

Ֆրեյդենբերգը համարվում է այսպես կոչված խորհրդային դիցաբանական դպրոցի հիմնադիրներից մեկը: Բարձրացնելով իր հետազոտությունները հերմենևտիկայի մակարդակին, նրան հաջողվել էր խորհրդային դիցաբանական դպրոցն շարժապել համաշխարհային իմաստաբանությանը (սեմանտիկա): Ֆրեյդենբերգի տեսական կառույցները զուգաձայնում են Բախտինի (ծաղրերգության, խեղկատակության բնույթի մեկնություն, երգիծանքի և գրոտեսկի տեսություն և այլն)<sup>1</sup> և Կ. Լևի-Ստրոսի<sup>2</sup> և Կ.Գ. Յունգի (միևնույն առասպելույթի, կամ արքետիպի արտացոլումը տարբեր մակարդակների վրա)<sup>3</sup> գաղափարների հետ: Իր աշխատություններում Ֆրեյդենբերգն ունի հելլենիստական թատրոնի և գրականությանը վերաբերող մի քանի խոր նկատառումներ<sup>4</sup>:

Հսկայական ներդրում անտիկ հետազոտությունների բնագավառում կատարել է Պավել Ֆյորենսկու աշակերտ Ալեքսեյ Ֆյոդորովիչ Լոսևը (1893–1988): 1930 թ. «Առասպելի դիալեկտիկա»<sup>5</sup> աշխատության հրապարակումից հետո, որտեղ նա բացահայտորեն արհամարհում էր մարքսիստ-լենինյան տեսությունը իբրև մեթոդ անտիկ պատմության ուսումնասիրության համար, Լոսևը ենթարկվեց հալածանքների: Այդ հալածանքների նախաձեռնողները Լազար Կազանովիչն էր և Մաքսիմ Գորկին: Շուտով Լոսևը ձերբակալվել և դատապարտվել էր 10 տարվա, իսկ նրա կինը՝ 5 տարվա ազատազրկման: Շատերի պես նա հայտնվել էր Բալտիկում, որտեղ գլխի տրավմաների և ծանր ապրումների հետևանքով գրեթե կորցրել էր տեսողությունը: Մ. Գորկու առաջին կնոջ Տ.Պ. Պեշկովայի միջամտությամբ 1932 թ. Լոսևն իր կնոջ հետ ազատ են ար-

<sup>1</sup> Фрейденберг 2001: 325–339, 425–443.

<sup>2</sup> Фрейденберг 1988: 181–204.

<sup>3</sup> Мосс 1994: 98–106.

<sup>1</sup> Фрейденберг 1926: 378–396.

<sup>2</sup> Фрейденберг 1936, 1997.

<sup>3</sup> Фрейденберг 1987: 120–130; Она же 1995: 272–297.

<sup>4</sup> Ст'ю Фрейденберг 1978.

<sup>5</sup> Лосев 1990.

ձակվել և նույնիսկ թույլտվություն ստացան վերադառնալ Մոսկվա: Սակայն, որպես խորթ և անբարեհույս տարրին, նրան արգելված էր հրապարակվել և փիլիսոփայություն դասավանդել: Օգնել էր երիտասարդ տարիքում ստացած դասական և երաժշտական կրթությունը: Շատերի պես նա ստիպված էր զբաղվել թարգմանությամբ հին լեզուներից, Պետական երաժշտարվեստի անդամ էր, դասավանդում էր, Մոսկվայի կոնսերվատորիայում, Գեղարվեստի պետական ակադեմիայում, Մոսկվայի մանկավարժական ինստիտուտում (1944), Նիժնի Նովգորոդ համալսարանում, վերջապես թույլտվություն ստացավ անտիկ գեղագիտություն դասավանդել Մոսկվայի 2-րդ Պետական լսարանում:

Թեև նրան արգելել էին հրապարակվել, Լոսեր շարունակում էր գրել: Նա թողել է հսկայական ժառանգություն: 20-րդ համագումարից հետո հրատարակվելու արգելքը հանվեց, այն պայմանով, որ գիտնականը լոյալություն կդրսևորի իշխող գաղափարախոսության նկատմամբ: 1960-ականներին լույս տեսավ Լոսևի «Անտիկ գեղագիտության պատմության» առաջին հատորը, որն իր գաղափարաբանությամբ և մեթոդաբանությամբ արմատապես տարբերվում էր խորհրդային և արևմտյան անտիկագիտության մեջ ընդունված մոտեցումներից: Դրան հաջորդեցին «Անտիկ գեղագիտության պատմության» նոր հատորներ՝ թվով տաս, որոնցում իմաստասերն ու մշակութաբանը ներկայացրել էր անտիկ հոգևոր մտքի համընդգրկուն պատմություն, բացել Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի իմաստասիրություն նրբությունները, ինչպես և Պղոտինոսի ու այլ նորալատոնականների բնազանցական ապոֆատիկայի առանձնահատկությունները: Այս աշխատություններին բնորոշ է յուրահատուկ ոճ, որը համատեղում է խիստ ակադեմիական հետազոտության մեթոդաբանություն և կենդանի, գեղարվեստական շարադրանք:

«Անտիկ գեղագիտության» հինգերորդ և վեցերորդ հատորները Ա.Ֆ. Լոսևն ամբողջությամբ նվիրել է հելլենիստական-հռոմեական դիցաբանության<sup>1</sup> իմաստասիրության<sup>2</sup> ու գեղագիտության քննական վերլուծության<sup>3</sup>: Այդ հիմնարար տեսական աշխատության մեջ, հելլենիստական գեղագիտությունը ներկայացված է որպես բազմափուլ, շուրջ հազարամյա ուղի անցած հոգևոր շարժում, որն իր բազմաշերտության պատճառով ավելի բարդ է և համապարփակ քան անտիկ դասական շրջանի հոգևոր մշակույթը:

Կյանքի վերջին տասնամյակում Ա. Լոսևի շուրջը ձևավորվել է աշակերտների և հետևորդների խումբ: Ազա Ալիբեկովնա Տախո-Գոդիի ջանքերի շնորհիվ Լոսևի տունը դարձավ մշակութաբանների, բանասերների և փիլիսոփաների հավաքատեղի, այստեղ կազմակերպվող «փիլիսոփայական թեյախմություններին» մասնակցում էին երիտասարդ գիտնականներ Ս.Ս. Ավերինցևը, Վ.Վ. Բիբիխինը, Կ.Ա. Կեդրովը, Ս.Բ. Չիմբինովը և ապագա այլ հայտնի գիտնականներ: Նրանցից Ս. Ավերինցևը զգալի ներդրում է կատարել հելլենիստական հոգևոր մշակույթի ուսումնասիրման գործում<sup>4</sup>: Այսպիսով, նույնիսկ խորհրդային շնչահեղձ մթնոլորտում շարունակում էր զարգանալ հելլենիստագիտության պատմիմաստասիրական և մշակութաբանական ուղղությունները, որոնք, ըստ էության շարունակում էին ռուսական նախախորհրդային շրջանի ավանդույթները:

Իսկ հելլենիզմի քաղաքական, տնտեսական և հասարակական կառույցների պատմագրության մեջ շարունակում էին գերիշխել Ա.Բ. Ռանովիչի մշակած մոտեցումները: Բայց արդեն 50-ականներին, գրեթե անմիջապես Ռանովիչի մենագրության հետմահու լույս ընծայումից հետո, խորհրդային պատմագիտության մեջ բուռն վե-

<sup>1</sup> Он же 1996.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> Он же 1979; Он же 1979.

<sup>4</sup> Авсринцев 1990: 206–266. Он же: 1977.

ճեր ծավալվեցին հելլենիզմի բնույթի շուրջը: Բանավեճի ընթացքում Ռանոլփի սոցիոլոգիական պարզունակ սխեմաները ենթարկվեցին ջախջախիչ քննադատության: Նրա ընդդիմախոսներից Կ.Կ. Ջեյինը և Վ.Դ. Բլավատսկին<sup>1</sup>, Ա.Լ. Կացը<sup>2</sup> հելլենիզմը չէին համարում անտիկ ստրկատիրական ֆորմացիայի զարգացման օրինաչափ և անխուսափելի դրսևորում: Կոնստանտին Կոնստանտինովիչ Ջեյինն առհասարակ հրաժարվեց հելլենիզմը համարել անտիկ ստրկատիրական հասարակարգի զարգացման փուլ<sup>3</sup>: Ջեյինը համոզված էր, որ Ռանոլփի առաջարկած «հելլենիզմ» եզրի կիրառումը միայն բարդացնում է, առանց այդ էլ բարդ և խճճված խնդրի ընկալումը: Փոխարենը Կ.Կ. Ջեյինն առաջարկել է հելլենիզմի իր սահմանումը. այն, նրա կարծիքով, ինքնուրույն պատմա-մշակութային երևույթ է որը սկզբնավորվել է Ալեքսանդրի արշավանքների արդյունքում և բնորոշվում է անտիկ դասական և հին արևելյան հատկանիշների համադրականությամբ՝ հասարակական, քաղաքական, մշակութային (հատկապես գաղափարախոսական) բնագավառներում<sup>4</sup>:

Ռանոլփի ընդդիմախոսները համոզված էին, որ հելլենիստական պետությունները չունեն միասնական հասարակական-տնտեսական հատկանիշներ: Օրինակ դա վերաբերում է ստրկության զարգացման տարբեր աստիճաններ ունեցող Բալկանյան Հունաստանին և Պտղոմեան Եգիպտոսին: Ինքնին այդ մոտեցումը նոր չէր և բնորոշ էր արևմտյան, հատկապես գերմանական դասական պատմագրությանը: Անկախ թե որքանով էր արդարացի այդ մոտեցումը, հետաքրքիրն ինքը տարակարծության փաստը, որը հնարավոր դարձավ 20-րդ համագումարից հետո: 1960 թ. Ջեյինը հրա-

տարակեց հիմնարար հետազոտություն ու չ հելլենիստական Եգիպտոսի հողային հարաբերությունների մասին, որտեղ դրված էր ոչ միայն բուն հողային հարաբերությունների այլև սկզբունքային տեսական հարցերի (ապրանքային և բնամթերային հարաբերությունների դերի, կախման տարբեր ձևերի, տնտեսական և ոչ տնտեսական հարկադրման տեսակների և այլ) խնդիրը<sup>1</sup>:

Սկզբնական շրջանում Ռանոլփի և Ջեյինի տեսակետների կողմնակիցների միջև ծավալված բանավեճը ոչ մի կողմին շոշափելի առավելություն չբերեց: Սակայն խորհրդային միության մայրամուտին Ջեյինի կողմնակիցները Ռուսաստանում արդեն կազմում էին բացարձակ մեծամասնություն: Նոր սերնդի խորհրդային պատմաբանները հելլենիզմը դիտարկվում էին ոչ թե իբրև անտիկ շրջանի ընդհանուր նպատակաբանականությամբ պայմանավորված հերթական փուլ, այլ որպես համահունական շարժում, որը, համընկնելով մակեդոնական թագավորների աշխարհակալ քաղաքականության հետ, նպաստեց նոր քաղաքակրթության առաջացմանը:

Ջեյինի ազդեցության ներքո խորհրդային պատմագրության մեջ ձևավորվեց հելլենիստական հետազոտությունների նոր ուղղություն: Այն հենված էր հիմնականում երիտասարդ սերնդի գիտնականների ուսումնասիրությունների վրա: Վերջիններիս ավելի շատ հետաքրքրում էին հելլենիզմի դրսևորումներն առանձին երկրներում: Այսպես Ի.Ս. Սվենցիցկայան և Ե.Ս. Գոլոբցովան<sup>2</sup>, Ա.Գ. Փերիխանյան<sup>3</sup>, Ա.Ի. Պավլովսկայան<sup>4</sup>, Ն.Ն. Պիկուս<sup>5</sup> անդրադարձել են հելլենիստական երկրների հասարակական-տնտեսական հարաբերությունների և հատկապես կախյալ բնակչության վի-

<sup>1</sup> Блаватский 1967: 12–17.

<sup>2</sup> Кац 1955.

<sup>3</sup> Зельин 1955: 99–108; Он же 1953: 145–156).

<sup>4</sup> Он же 1955: 99–108.

<sup>1</sup> Он же 1960; Он же, Трофимова 1969.

<sup>2</sup> Голубцова 1992: 66–75.

<sup>3</sup> Периханян 1960.

<sup>4</sup> Павловская 1976: 458–476.

<sup>5</sup> Пикус 1972.

ճակին<sup>1</sup>, Ա.Գ. Փերիխանյանը ուսումնասիրել է նաև տաճարային համալիրների կառուցվածքը Փոքր Ասիայում և հելլենիստական Հայաստանում, Գ.Խ. Սարգսյանը՝ Սելևկյան Բաբելոնիայի և Հայաստանյան քաղաքների կարգավիճակը<sup>2</sup>, Գ.Ա. Կոշելենկոն հելլենիստական Արևելքի պոլիսային քաղաքների կարգը<sup>3</sup> և այլն:

Ձեյլինի առաջարկած հայեցակարգի շրջանակներում սկսեց հետևողականորեն մշակվել նախահելլենիզմի հիմնախնդիրը, որը ենթադրում էր հելլենիզմին բնորոշ միայնատարրերի առկայությունն Արևմուտքում դեռևս մինչև Ալեքսանդրի արշավանքները: Այդ հարցերի ուսումնասիրման գործում իրենց ներդրումն ունեցան Լ.Պ. Մարինովիչը<sup>4</sup>, Է.Դ. Ֆրոլովը<sup>5</sup>, Լ.Մ. Գլուսկինան<sup>6</sup>, Վ.Ի. Իսաևան<sup>7</sup> և ուրիշները: Ակտիվ շրջանառության մեջ դրվեց արևմտաեվրոպական հելլենիզմի գաղափարը, առաջարկվեց «հոմեական հելլենիզմ» եզրը<sup>8</sup>: Սակայն կային նաև հակառակ մոտեցումներ, որոշ հետազոտողները կասկածի տակ դրեցին Արևմուտքում, այդ թվում բուն Հելլադայում հելլենիզմի տարրերի առկայությունը:

Ֆորմացիոն հնգամաս տեսության հակառակորդները, ունենալով առանձին անհամաձայնություններ այս կամ այն խնդրի վերաբերյալ միակարծիք են առ այն, որ.

- Ստրուվեի և իր հետևորդների հղացքը շատ դեպքերում լուրջ հիմնավորումներ չունի,

<sup>1</sup> Свенцицкая 1963; Блаватская, Голубцова, Павловская 1969.

<sup>2</sup> Саркисян 1960.

<sup>3</sup> Кошеленко 1979.

<sup>4</sup> Маринович 1975; Он же 1980: 29–51.

<sup>5</sup> Фролов 1976: 247; Он же 1983: 245–260; Он же. 1990: 14–58. Այստեղ ներկայացված տեսակետը զուգաձայնվում է դեռևս անցյալ դարի առաջին քառորդում գերմանացի հետազոտող Ու. Վինկելյնի առաջարկած մակեդոնական տերուսական քաղաքականության վերաբերյալ կազմաձևող դերակառուցության հայեցակարգին:

<sup>6</sup> Глускина 1989: 224.

<sup>7</sup> Исаева 1990: 59–85.

<sup>8</sup> Штаерман 1992: 140–176; Он же 1994; Кашеев 1993: 31; Кашеев 1997; Беликов 2003.

- 1920–1930-ականների սոցիոլոգիական բանավեճերի եզրակացությունները շինծու են և կոնյունկտուրային,
- «հնգամաս» տեսության շուրջ բանավեճը վերսկսվել է, քանի որ գիտության նորագույն նվաճումները չեն տեղավորվում մարքսիստական տեսության «պրոկրուստյան մահիճի» մեջ,
- «ասիական» արտադրաձևի տեսությունը հակամարքսիստական չէ, քանի, որ այն առաջարկել է ինքը՝ Մարքսը,
- ոչ միայն Մարքսը և Էնգելսը, այլև Լենինը երբևիցե չեն օգտագործել հասարակական-տնտեսական ֆորմացիա եզրը,
- Արևելքում դասական տիպի ստրկատիրական հարաբերություններ չէն եղել,
- նախակապիտալիստական հասարակություններում ոչ տնտեսական «անձնական» հարաբերությունները ունեին առավել քան կարևոր նշանակություն,
- որոշ հետազոտողները փակուղուց դուրս գալու ելքը տեսնում են Կ. Մարքսի «ասիական» արտադրաձևի գաղափարին վերադառնալու մեջ<sup>1</sup>,
- հասարակական-տնտեսական ֆորմացիաների հերթափոխը պարտադիր պայման չէ, պատմության ընթացքն ավելի բարդ է և հետաքրքիր, քան ներկայացված է դպրոցական և բուհական դասագրքերում,
- թե Անմուտքի, թե Արևելքի վերաբերյալ լայնատարած «ստրկատիրական հարաբերություններ» եզրը պետք է ընդունել պայմանականորեն և որոշ վերապահումներով,
- ստրկատիրական ֆորմացիան ավատատիրական կացութաձևի համար հող նախապատրաստած փուլ չէ, այն շատ ավելի հին և ինքնարժեք երևույթ է:

<sup>1</sup> Никифоров 1975; Проблемы эллинизма. Реферативный сборник 1975.

4.4. Ձեյլիսի հայեցակարգը բավական երկար ժամանակ գրեթե անվերապահորեն ընդունվում էր խորհրդային ակադեմիական միջավայրի առաջադեմ և հատկապես երիտասարդ ներկայացուցիչների (60-ականների, шестидесятники) կողմից (սակայն մեր կարծիքով՝ 4.4. Ձեյլիսի հայացքների համակարգը նույնպես տառապում է որոշ սխեմատիզմով և բավական խոցելի տեղեր ունի անգամ իր ժամանակի խորհրդային պատմագրության տեսանկյունից)<sup>1</sup>:

Սակայն մեծ դժվարությամբ էր ճանապարհ հարթում արևելյան նախահեյլենիզմի գաղափարը<sup>2</sup>: Այն, թերևս առաջինն արտահայտել էր Վիտալի Ալեքսանդրովիչ Բելյավսկին (1924–1977)<sup>3</sup>, որը Ի.Մ.

<sup>1</sup> Խառնաշփոթի հիմնական պատճառը անգամ պրոֆեսիոնալ պատմաբանների համար եղել և մնում է հենց հեղինիզմ անվանումը: Բանն այն է, որ հեյլենիզմը զուտ արևելյան երևույթ է, որը, սակայն, անվանվել է *հեյլեն* (հունյն) անունից ստեղծված եզրով: Բայց Հունաստանը և Մակեդոնիան դասական ժամանակաշրջանում արդեն վաղուց դարձել էին ինքնուրույն քաղաքակրթություն և ակտիվորեն զինակալում էին արևելյան աշխարհին: Մա, չնայած թվացյալ տարօրինակությանը, օրակարգ է բարձրացնում հեյլենիստական աշխարհին Ատտալյան հունա-մակեդոնական դինաստիայի պատկանելության հարցը: Թեև ինքը՝ մակեդոնական միապետությունը, տիպաբանորեն մոտ էր Արևելքի միապետություններին, և իր գոյության վերջում ենթարկվում էր որոշակի ազդեցության Սելևկյանների կամ Պտղոմեոսների արքայատոհմերի կողմից, այնուամենայնիվ, շատ հետազոտողներ Մակեդոնիան համարում են հունական աշխարհի մաս և ոչ մի կերպ՝ արևելյան տիպի հեյլենիստական թագավորություն: «Հունաստանում շարունակում էր գոյություն ունենալ դասական տրոլություն, ավելին՝ հենց հեյլենիստական դարաշրջանին է համապատասխանում կախվածության այն ձևերի (իլոտիա, պենեստիա և այլն) գրեթե լիակատար վերացման ժամանակը, որոնք իրենց համանմանը ունեն Արևելքի հասարակական-քաղաքական կառուցվածքում: Արևելյան ավանդույթների ազդեցությամբ ծնված սոցիալական և ոչ մի ձև այն ժամանակվա հունական հասարակության կառուցվածքում մենք չենք տեսնում: Հունաստանում շարունակում է գոյատևել պոլիսը, և զարգանում է պետական կազմակերպման նոր տեսակ՝ պոլիսների դաշնային միություն, որը ոչ մի կապ չունի Արևելքում գոյություն ունեցող քաղաքական կառուցվածքի հետ»: «...Միակ ոլորտը, որում Արևելքի ազդեցությունը ինչ-որ չափով զգացվում է մշակույթն է, հիմնականում կրոնական պատկերացումների ոլորտը» (Косшеленко 1990: 12–13): Մենք իրավաչափ չենք համարում նման մոտեցումը, բայց այն ավելի հանգամանալի մշակում է պահանջում, և մենք դրա քննարկումը կրողները հետագային:

<sup>2</sup> Вейнберг 1983: 195–209; Ганбов, Кошеленко, Сердитых 1992.

<sup>3</sup> См.: Белявский 1971 (Совр. переиздание под названием: Тайны Вавилона 2001).

Դյակոնովի հետ ընդհարման պատճառով ակադեմիական շրջաններում դարձավ *persona non grata*: Սակայն աշխատելով գործարանային պահակ, նա շարունակում էր հրատարակվել խորհրդային միության մեջ և արտասահմանում, տհաճություն պատճառելով իր հակառակորդներին:

Մշակվեցին նոր մոտեցումներ հեյլենիստական մշակույթի նկատմամբ<sup>1</sup>: Նույն շրջանում հեյլենիստական ուսումնասիրությունների մեջ սկսում են լայնորեն կիրառվել մշակութաբանական մոտեցումներ: Դասական լեզուների փայլուն գիտակ և ակնառու պատմաբան Ալեքսանդր Իոսիֆովիչ Ջայցևն ուսումնասիրել է անտիկ պատմության բեկումնային շրջանները և նրանց անդրադարձը մշակույթի վրա: Իր հասուն շրջանում դասական անտիկայից բացի նրա ուշադրության կենտրոնում հայտնվել է նաև հեյլենիզմը: Իր աշխատություններում նա ցույց է տվել, որ ինչ-որ պահից սկսած հեյլենիստական մշակույթի գրեթե բոլոր ուղղություններն արձանագրում են լճացում, իսկ այնուհետև անկում: Ջայցևի պնդմամբ մաթեմատիկայի ոլորտում Արքիմեդից և Պերգացի Ապոլլոնիոսից հետո նկատվում է ստեղծագործական ուժերի հետընթաց, այդ միտումը չկարողացավ կանգնեցնել նույնիսկ մեծն Դիոփանտոսը: Հյուպարքոսից հետո սկսում է ճահճանալ նաև աստղագիտությունը: Ստրատոնոս Լամսակցու նպատակաուղղված փորձերը ֆիզիկայի բնագավառում կանգ առան արդեն սկզբնական փուլում: Բնագիտության մեջ իմացական հետազոտությունները դուրս են մղվում մի տեսակ «գույքագրումով»: Հեյլենիստական պոեզիայում փոփոխությունները նկատելի են դառնում մոտ Ք.ա. III դ. կեսերին: Իսկ կերպարվեստի մեջ արդեն Ք.ա. IV դ. հնարավոր չէ նշել որևէ

<sup>1</sup> Античная литература (ред. Тахо-Годи 1963); Древнегреческая литературная критика (под ред. Л.А. Фрейберг) 1975; Рожанский 1988. Бухарин 2000: 88–100; Никулина 1998.

ակնառու արվեստագետի անուն: Հելլենիստական մշակույթի լճացման պատճառները նշանավոր խորհրդային հետազոտողը տեսնում էր «մարդու նկատմամբ հավատի կորստյան մեջ, թերահավատության առ այն, որ սեփական ուժերի օգնությամբ անհատն ունակ է հասնել սկզբունքորեն անհասելիին»<sup>1</sup>: Չայցևի հայացքները զգալի ազդեցություն ունեցան ժամանակակից խորհրդային և հատկապես լենինգրադյան գիտական հանրության վրա<sup>2</sup>: Նրա համբավը համադրելի է անտիկ մշակույթի մեկ այլ հետազոտող, Ջելինսկու համբավի հետ, ով XX դարասկզբում ևս վայելում էր մտավորականության և հատկապես երիտասարդության սերը:

Հատկանշական են հայտնի մշակութաբան և առտնին պատմության մասնագետ Ալեքսանդր Բենցիոնովիչ Կովելմանի աշխատությունները, որոնցում նա անդրադարձել է հելլենիստական և ուշ հռոմեական Ալեքսանդրիայի զանգվածային գիտակցությունը, Եգիպտոսի բազմազգ բնակչության հույզերի և մտորումներին, ինչպես նաև առօրյա պատմության այլ խնդիրներին<sup>3</sup>: Սա բոլորովին նոր մոտեցում էր խորհրդային շրջանի հելլենիստական ուսումնասիրությունների մեջ: Նրա աշխատանքները գրված են հունալեզու պապիրուսների (հասարակ մարդկանց նամակներ, բողոքներ և խնդրագրեր) հիման վրա: Իր աշխատանքներում Կովելմանը ներգրավում է նաև Նոր Կտակարանի նյութերը և I–IV դդ. փիլիսոփաների աշխատությունները: Բացահայտվում են քրիստոնեությանը դարձի և հեթանոսության կործանման պատճառները:

Դեռևս խորհրդային վաղ շրջանում սկսել էր ձևավորվել հելլենիստական-եբրայական խնդիրներով զբաղվող բարձրակարգ դպրոց: Հուդայականության և հելլենիզմի փոխազդեցության խնդիրներ

րով զբաղվել են Ա.Ի. Տյումենը<sup>1</sup>, Ա.Բ. Ռանովիչը<sup>2</sup>, Ի.Դ. Ամուսինը<sup>3</sup>, Կովելմանը<sup>4</sup>, Ռոզովան<sup>5</sup>: Այս ավանդույթներն իրենց հետագա զարգացումը ստացան հրեաների հայրենադարձությունից հետո<sup>6</sup>: Ինչպես նշվել էր 1990-ականներին, խորհրդային Միության անկումից հետո, ազգությամբ հրեա մի քանի խոշոր պատմաբաններ տեղափոխվել են Իսրայել և Միացյալ Նահանգներ<sup>7</sup>: Նրանք նոր լիցք հաղորդեցին իսրայելյան և ամերիկյան եբրայագիտությանն ու հելլենիստագիտությանը: Լենինգրադյան անտիկագիտության դպրոցն անցած հրեա պատմաբաններն ու մշակութաբանները հրեական մշակույթը դիտարկվում է երկակի, մի կողմից՝ որպես հելլենիստական համադրականության դրսևորում, մյուս կողմից՝ իբրև հելլենիստական քաղաքակրթությանը ներհակ, ինքնամփոփ և ինքնարժեք երևույթ: Այդ մշակույթի մի բևեռում գտնվում է Փիլոն Ալեքսանդրացին և Հովսեպոսը, իսկ մյուս բևեռում Թալմուդն ու Հնգամատյանը<sup>8</sup>:

Խորհրդային ուշ շրջանում հելլենիստական ուսումնասիրությունները թևակոխեցին զարգացման նոր փուլ: Անտիկ հետազոտություններում սկսեցին օգտագործել նոր մեթոդներ, քննության առարկա դարձան նոր, մինչ այդ քիչ ուսումնասիրված խնդիրներ: Արդեն ավանդական դարձած այնպիսի հետազոտական թեմաների կողքին, ինչպիսիք օրինակ հունա-մակեդոնական բանակը, զինվո-

<sup>1</sup> Тюменев 1922.

<sup>2</sup> Ранович 1937; Он же 1941.

<sup>3</sup> Амусин 1983.

<sup>4</sup> Ковельман 1994: 123–137.

<sup>5</sup> Рогова 2006.

<sup>6</sup> Ранович 1937; Он же 1938; Он же 1941; Он же 1949.

<sup>7</sup> Kovelman 1991: 135–152; Ковельман 1994: 214–241 (Kovelman 1996: 111–132; Он же 1996; Ковельман, Гершович 1996; Ковельман 2007; Ковельман 2001–2004. Т. 1, Т. 2; idem 2002: 86–92; idem 2002: 86–92; idem 2003: 13–18; idem 2004: 123–146; idem 2004: 162–168; Он же 2004: 42–51; idem 2005; idem 2006: 153–182.

<sup>8</sup> Idem 2005; idem 2007: 162–175; Он же 2007.

<sup>1</sup> Зайцев 2001: 281–282; Zajcev 1993; idem 1996: 693–699; Зайцев 2001.

<sup>2</sup> Жмудь 2000: 8–9.

<sup>3</sup> Ковельман 1985: 134–154; Он же 1984: 170–184; Он же 1985: 213–219; Он же 1988.



րական վերնախավը, թագավորի յուրայինները և այլը<sup>1</sup>, ուսումնասիրության առարկա դարձան նոր խնդիրներ: Երկվեզվության խնդիրը գտավ իր արժանի տեղը հելլենիզմի մասին խորհրդային շրջանի հետազոտություններում<sup>2</sup>: Կրկին քննարկման առարկա դարձան հելլենիստական պետությունների պաշտոնական կրոնը և հատկապես թագավորական պաշտամունքի հարցերը<sup>3</sup>:

Ուշ շրջանի խորհրդային հետազոտողները հրաժարվեցին նախորդ շրջանին բնորոշ արևմտակենտրոն մոտեցումներից: Ի հայտ են եկել վերլուծական տարաբնույթ աշխատանքներ քաղաքական դոալիզմի վերաբերյալ<sup>4</sup>: Որոշ արդի հետազոտողներ առաջարկում են նաև վերանայել հելլենիզմի աշխարհագրական և ժամանակագրային սահմանները վերջիններիս ընդլայնման օգտին<sup>5</sup>: Խորհրդային պատմագիտության կողմից հելլենիստական աշխարհի շրջանակների մեջ ներառվել են խոշոր և մանր պետական կազմավորումներ՝ Սիկիլիայից և Հարավային Իտալիայից արևմուտքում մինչև հյուսիս-արևմտյան Հնդկաստան արևելքում, և Արալյան ծովի հարավային ափերից<sup>6</sup> հյուսիսում մինչև Նեղոսի առաջին քարվաստները հարավում:

<sup>1</sup> Ковалёв 1949: 280–308; Ковалёв 1948: 34–42; Мелюкова 1950: 30–41; Блаватский 1954; Пугаченкова ВДИ. 1966: 27–43; Хазанов 1968: 180–191; Самохина 1975: 62–67; Маринович 1975; Шофман 1987: 143–153; Мурзин, Черненко 1980: 155–167; Самохина 1988: 44–51; Никоноров 1995: 53–61; Десятников 1972: 68–77; Климов 1993: 50–59; Шофман 1976: 215–220.

<sup>2</sup> St'i orh'isul. Саркисян 1986; Казанский, Крючкова 2002: 69–81.

<sup>3</sup> Свенцицкая 1989; Ладьянин 2004; Ладьянин 1998: 32–49; Нефедов Харьков, 1999: 90–95; Нефедов 1999: 46–54; Маргарян 1991 / <http://cheloveknauka.com/svyatilischa-strany-kommageny-i-armeniya>

<sup>4</sup> Бокшанин 1960; Степанян 1976: 171–183; Он же 1978: 187–204.

<sup>5</sup> Թեև Արևմուտքում մինչև օրս էլ զերիշխող է մնում ավանդական ժամանակագրությունը տե'ս (Green 1993: 319, 441).

<sup>6</sup> Толстое 1948; Кошеленко 1972: 59–78; Он же 1979; Кошеленко 1966; Он же 1966; Он же 1974; Литвинский, Виноградов, Пичикян 1985: 84–109; Пилипко 2005: 184–186.

Միևնույն ժամանակ խորհրդային որոշ հետազոտողները կասկածի տակ էին դրել ինքնաբերական թվացող Մակեդոնիայի ու Հունաստանի հելլենիստական աշխարհի բաղադրյալ մաս լինելու դրույթը, մյուսները հելլենիզմի բնորոշ գծերը տեսնում էին Արևմտյան Միջերկրականում և Հյուսիսային Աֆրիկայում<sup>1</sup>:

Վերաքննության ենթարկվեցին նաև հելլենիզմի ժամանակագրական շրջանակները: Առանձին պատմաբաններն այլևս չեն ընդունում արևմտյան պատմագիտության մեջ ավանդական դարձած այն դրույթը, որ հռոմեական նվաճումներից հետո՝ հատկապես Ք.ա. 30-ականներից հետո, հելլենիզմն Արևելքում դուրս է մղվել հռոմեական քաղաքականությանը<sup>2</sup>: Փոխարենը ձևավորվել է կարծիք, որ հռոմեական շրջանում հելլենիզմը ոչ միայն չի կորցրել իր քաղաքակրթական առանձնահատկությունները, այլև հսկայական քաղաքական և մշակութային ազդեցություն է թողել ողջ Pax Romana-ի վրա՝ այն արմատապես վերափոխելով, մինչդեռ հռոմեական քաղաքական և մշակութային ազդեցությունն Արևելքի վրա մեծ էր միայն իրավունքի և ռազմարվեստի բնագավառներում: Վերջին շրջանում հելլենիզմը ներկայացվում է որպես ոչ այնքան մեկ քաղաքակրթության կողմից մյուսի նվաճում, այլ իբրև քաղաքակրթական երկարատև և արդյունավետ երկխոսություն: Ուսումնասիրողներից շատերը առաջարկում են հելլենիզմի ժամանակագրական սահմանները որոշել տարբեր կերպ, ելնելով տվյալ ազգի կամ երկրի առանձնահատկություններից: Այդ մոտեցումը հատկապես արդյունավետ էր հայոց պատմության պարբերացումը որոշելու և ֆենոմենոլոգիական հարցադրումների պատասխանների որոնման

<sup>1</sup> Шифман 1963; Он же 1976.

<sup>2</sup> Հռոմեական շրջանի հելլենիզմի մասին առանձին հետազոտություններ չկան: Որոշ տեղեկություններ հայտնում է E. Kornemann, «Aegyptische Einflüsse im römischen Kaiserreiche» (в «Neue Jahrb. für Phil. und Päd.», 1899). Հմտ. Ростовцев 1900, Шифман 1977.

համար: Այսպես հին հայոց պատմությունը պարբերացնելով խորհրդահայ պատմագետները հելլենիզմի դարձրջանի ավարտը համարել են ոչ թե Ք.ա. 30 թ., այլ հայոց դարձը քրիստոնեության IV դ. սկզբին<sup>1</sup>:

Ուշ շրջանի խորհրդային ուսումնասիրողները նաև նկատել են Արևելքի շատ երկրներում հելլենիստական ավանդույթների կենսունակությունը և անգամ հելլենիստական մշակույթի առանձին տարրերի տարածումն ու արմատավորումը<sup>2</sup>: Այս երևույթը ստացավ *հեփհելլենիզմ* անվանումը: Մեր համոզմամբ հետհելլենիզմի բնորոշ օրինակ է վաղմիջնադարյան Հայաստանը, իր հունաբան դպրոցով և մշակութային այլ մշակութային նվաճումներով (պատմագրություն, աստվածաբանություն, փիլիսոփայություն, ճարտարապետություն և ուր.):

Արդի հայ պատմագիտության համար հելլենիզմի խնդիրը ևս շատ կարևոր է և կարոտ է մոտեցումների և շեշտադրությունների ճշգրտման և հստակեցման:

## ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հելլենիստական հետազոտությունները Հայաստանում սկիզբ են առել համեմատաբար ուշ: Դա կարող է տարօրինակ թվալ մի ժողովրդի համար, որի հին և հարուստ պատմությունը միշտ եղել է ազգային հպարտության առարկա, յուրատեսակ ազգային բրենդ: XIX դարում հին և միջնադարյան պատմությունը որպես «մշակութային անդաստան» տրվեց հայ վիպասաններին, որոնց հեղինակությունը մարդկանց մեջ շատ ավելի բարձր էր, քան ակադեմիական պատմաբաններինը: Իսկ ակադեմիական հայագիտությունը սաղմնավորվեց Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան կաթոլիկ միաբանության գիտական միջավայրում և երկար ժամանակ զարգանում էր գերազանցապես Արևմուտքում (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա) և Ռուսաստանում: Հայաստանի հին պատմության զարգացման մեջ զգալի ավանդ են ունեցել այնպիսի ականավոր պատմաբաններ և բանասերներ, ինչպիսիք են Անտուան Ժան դը Սեն-Մարթենը (1791-1832)<sup>1</sup>, Հուլիոս Հերման Պետերմանը (1801-1876)<sup>2</sup>, Մարի Բրոսսեն (1802-1880), Հենրիխ Հյուբշմանը<sup>3</sup>, Յոզեֆ Մարկվարտը<sup>4</sup>, Թեոդոր Ռեյնսխյը<sup>1</sup>, Ֆ. Վինդշմանը, Ֆրանց Բուպեն, Ֆ.

<sup>1</sup> Տե՛ս Սարգսյան 1966:

<sup>2</sup> Литвинский, Виноградов, Пичикян 1985: 84-109; Гаибов, Кошеленко, Сердитых 1992: 10-58.

<sup>1</sup> Saint-Martin 1841; idem 1850.

<sup>2</sup> Petermann 1837; idem 1842; idem 1860-1861: 47

<sup>3</sup> Hübschmann 1877: 5-49; idem 1883; reprinted in Hübschmann 1976; idem 1904: 197-490.

<sup>4</sup> Markwart 1928: 64. Mit 3 Tafeln; idem 1914: 25-238; repr., Nendeln and Göttingen, 1970; idem 1901; idem 1917; idem 1928; idem 1931; idem 1919.

Մյուլլերը, Պաուլ Անտուան դը Լագարդը<sup>2</sup>, Մաքս Լաուերը, Սոֆուս Բուգեն, Հերբերտ Պետերսոնը<sup>3</sup> և այլք:

Եվրոպացիների և ռուսների հետաքրքրվածությունն արևելագիտությանը և հայագիտությանը՝ որպես եվրոպական արևելագիտության մի մասի, ակադեմիականից բացի, նաև քաղաքական եռթատեքստ ուներ: XIX–XX դդ. առաջին քառորդում Ռուսաստանը և առաջատար արևմտյան տերություններն Օսմանյան կայսրությունն ընկալում էին որպես «Եվրոպայի հիվանդ մարդ», որի օրերը հաշված են, և նրան համարժեք այլընտրանք էին որոնում, որը ներդաշնակորեն կներգրվեր եվրոպական քրիստոնեական «օրքեստրում»<sup>4</sup>: Եվրոպական մեծ քաղաքականության հետևաբեմում պարբերաբար քննարկվում էր Օսմանյան կայսրության մասնատման և դրա տարբեր հատվածները Հին աշխարհի առաջատար տերությունների հովանուն հանձնելու հարցը: Ենթադրվում էր, որ կայսրության առանցքային տարածքները՝ Բալկանները և Փոքր Ասիան, ձևակառուցված կհանձնեն մի ինչ-որ քրիստոնյա ժողովրդի, որը տարածաշրջանում կվարի արևմտյան տերությունների շահերին համապատասխան քաղաքականություն: Բավական երկար ժամանակ այդպիսի ժողովուրդ համարում էին հույներին, որոնք ավանդաբար ընդունվում էին իբրև ինչպես արևմտյան, այնպես էլ արևելաքրիստոնեական քաղաքակրթությունների հիմնադիրներ: Դեռևս Եկատերինա Մեծն էր Միջերկրական ծովում թուրքական նավատորմի լիակատար ջախջախման և Կիլիկիայի կղզիներում հունական հանրապետության<sup>5</sup> ստեղծման ծրագրեր փայփայում, որից սկսվեու

էր Հունաստանի և Բյուզանդիայի վերածնունդը<sup>1</sup>: Նման ծրագրեր փայփայում էին Հաբսբուրգների կայսերական ընտանիքում և Եվրոպայի այլ երկրներում:

Պատահական չէ, որ հենց այդ շրջանում են կատարվել Բյուզանդիայի պատմությանը նվիրված առաջին հիմնարար հետազոտությունները, այդ ժամանակ է շրջանառության դրվել «արևելյան հելլենիզմ» հասկացությունը: Հույներին առաջ են մղում որպես Բալկանների և Փոքր Ասիայի իսկական տերեր: Սակայն որոշ ժամանակ անց Արևմուտքի և Ռուսաստանի քաղաքական շրջանակներում, մանավանդ 1770 թ. Պելոպոնեսյան ապստամբության ճնշումից հետո (արևմտյան գրականության մեջ հայտնի է որպես Օրլովյան ապստամբություն)<sup>2</sup>, ռուս-հունական հարաբերություններում խոր ճեղք առաջացավ<sup>3</sup>: Օսմանյան լծի տակ գրեթե կես հազարամ-

статум; Она же 2015: 517–522; Арш 2008; Зорин 1997: <http://magazines.russ.ru/nlo/1997/24/zorin.html>; Басилов 2018: <https://eu.spb.ru/news/18126-respublikanizm-teoriya-istoriya-sovremennye-praktiki>.

<sup>1</sup> Անգլիայի դեսպան Ջ. Հարիսն այս առիթով տեղեկացնում էր Լոնդոնի կառավարությանը. «Ըջիան Պոսթոլմիկի միտքն անընդհատ գրաված է արևելքում Կայսրության ստեղծման գաղափարով. նրան հաջողվել է կայսրություն վարակել այդ զգացումներով, և նա սցենար է նկարագրել քիմերների, որ նորածին Մեծ Իշխանին կնքել է Կոնստանտին անունով, նրա հաճար ստնտու է վարձել հույն կնոջ՝ Հեղինե անունով և իր շրջապատում խոսում է այն մասին, որ նրան բազմացնի Արևելյան կայսրության գահին: Այդ ինչուց որում նա քաղաք է կառուցում Յագսկոյե սելոյում, որը կոչվելու է Կոնստանտինոպոլ» (Гаррик 1874: сгб. 1465–1512):

<sup>2</sup> Այնքան օրլովն այսպես էր գրում Գրիգորիին այդ տարածաշրջանում ռուսների խնդիրների մասին. «Եթե սիտի գնանք, ապա գնանք մինչև Կոստանդնուպոլիս և ազատագրենք բոլոր ուղղափառներին և բարեպաշտներին ծանր լծից: Եվ կասեմ սցենար, ինչպես ասել է մեր տեղի Պետրոս I-ինն իր հրովախրատման իսկ նրանց՝ անհավատ մահամեղականներին բշե պալատ տախտատաները՝ իրենց հին բնակատեղիներ: Իսկ այստեղ կրկին կտիրի բարեպաշտությունը, և կասենք փառք մեր ամենագոր Աստծուն» (Орлов 1870: Прилож). Տես նաև՝ Зорин 2001: 50. Ср. также: Достоевский 1984: 83:

<sup>3</sup> Ինչպես Պյոտր Մեծի Կասպիական արշավանքի ժամանակ ռուսները չցուցարեցին պատշաճ հաստատամտություն և հետևողականություն ծրագրված խնդիրների իրագործման հարցում, անաբատասխանատու կերպով հուսադրելով տեղի քրիստոնյաներին, հասկապես հայերին՝ նրանք վճռական պահին զիջեցին թուրքերին՝ դաշնակցներին թողնելով բախտի քմահաճույքին: Հույների համար դա վերածվեց ողբերգության, ստակալի կոտորածի Պելոպոնեսում, ուղջ մնացածներից շատերն ընդմիջտ քեցին Մորեան: Ծաղկուն երկրամասը վերածվեց խանձված անապատի:

<sup>1</sup> Reinach 1895.

<sup>2</sup> Lagarde 1877.

<sup>3</sup> Petersson 1920.

<sup>4</sup> Հին հուն. *ὄρχηστρα*, անտիկ թատրոնում հարթակ երգչախմբի համար, ունիսուն նվագող կոլեկտիվ, նվագախումբ:

<sup>5</sup> Տես Ս. Усыкин: <http://www.polit.ru/article/2008/12/19/ekaterina/>; Смилянская 2010: [http://www.perspectivia.net/publikationen/vortraege-moskau/smiljanskaya\\_mittelmee](http://www.perspectivia.net/publikationen/vortraege-moskau/smiljanskaya_mittelmee)

յակ անցկացրած հույները կորցրել էին երբեմնի ավյունը<sup>1</sup> և, ինչպես պարզվեց, այնքան չէին համապատասխանում թուրքերի քրիստոնեական այլընտրանքը լինելու դերին: Եվ այդ ժամանակ արևմտյան և ռուս արևելագետների ուշադրությունը տեղափոխվեց հայերի, սիրորիների, արաբների ու հրեաների վրա: Այդ ժողովուրդների մեջ թերևս ամենապատիվն արևմտյան և ճկուն հայերը, այսպես կոչված «Արևելքի շվեյցարացիները», թվում էր՝ ամենահարմարն էին էմիսար ազգի դերի համար: Հայերը պետք է բոլորից շատ շահագրգռված լինեին տարածաշրջանում արևմտյան քաղաքակրթական արժեքների առաջնության գործում: Արաբները հարմար չէին այդ դերին, քանի որ մահմեդական էին և խաչակրաց արշավանքների ժամանակներից չէին վատահում եվրոպացիներին, ասորիների մեծ մասն իսլամացված և արաբացված էր, հրեաները, չնայած վառ ար-

Շատերը հիասթափվել էին Ռուսաստանի օգնության հարցում, քանի որ հույների ապստամբությունը, ինչպես պարզվեց, ընդամենը նպատակ ուներ շեղել թուրքերի ուշադրությունը Դանուբի ճակատում ռուսական զորքերի կողմից իրականացվող հարձակումից: Իր շահերը պաշտպանելով մերձդանուբյան իշխանություններում Ռուսաստանը լքեց ապստամբներին, մատնելով գազազած մահմեդականների կամայականությանը: «Երջիններս իրենց պարտության վրեժը հանեցին թշվար հույներից: Բացի այդ, Պելոպոնեսի տեռորը նպատակ ուներ օսմանահպատակ քրիստոնյաների մեջ մեկընդմիջտ կոտորել ռուսների հետ համագործակցելու փափագը:

<sup>1</sup> «Տեղի ժողովուրդները կեղծավոր են, խաբեբա, անկայուն, անբարոտիան, վախկոտ, փողի ու ավարի սիրահար, սցեպես որ՝ ոչինչ կրանց չի կարող հետ պահել այս ձգտումից: Դոպրահախտությունը և թեթևամտությունը, թուրքերի ամուր ընթաց դողալը նույնպես մեր հավատակիցների վերջին հատկանիշներից չեն», - գայրույթով գրում էր Ա. Գ. Օրլովը: Մերօրյա պատմաբան Կ. Գոլովաստիկովն այսպես է բնութագրում այդ իրավիճակը: «Օրլովի արշավախմբի հետ արշիպելագ եկած ռուսները ստիպված էին հուսահատություն ապրել. ժամանակակից հույները նման չէին հին սպարտացիներին և Մարաթոնի հաղթողներին: Ե՛վ ռուսները, և՛ նվրոպացիները սկսեցին հանգել այն մտքին, որ կղզիների բնակիչները, որոնք քամահրանքով էին վերաբերվում անտիկ հուշարձաններին, արժանի չեն իրենց մեծ անցյալին: Ըստ էության, դա արդարացում ծառայեց մշակութային արժեքների կոմեկցիոնեություն և դուրսկրման համար. արխիպելագի «հին մարմարե իրերը» («древняя мраморная штука»), Սպիրիդովի արտահայտությամբ, շուտով դարձան Էրմիտաժի ցուցանմուշներ» (Головастикиов: <http://riata.ru/kultura/item/642-rossiya-vladelitsa-grecheskikh-ostrovov.html>; <https://arzas.academy/materials/87>): Տես նաև՝ Смиланская 2010: [http://www.perspectiva.net/publikationen/vortraege-moskau/smilyanskaya\\_mittelmeertraum](http://www.perspectiva.net/publikationen/vortraege-moskau/smilyanskaya_mittelmeertraum).

տահայտված պատիվնարությանը, կրոնական և մի շարք այլ գործոնների պատճառով նույնպես հարմար չէին տարածաշրջանում արևմուտքի և հատկապես Ռուսաստանի գործադիր տնօրենի դերին: Հայերի օգտին վկայող ևս մեկ հանգամանք էր այն, որ քաղաքական առումով հայությունը բավարարում էր թե՛ Արևմուտքին, թե՛ Ռուսաստանին, ինչպես նաև տարածաշրջանի մահմեդական ժողովուրդների մեծ մասին (բնականաբար, թուրքերից, քրդերից և չերքեզներից բացի, որոնց, ինչպես ենթադրվում էր, նրանք պետք է դուրս մղեին այս տարածաշրջանից): Այս ամենով է բացատրվում Նոր և Նորագույն ժամանակների առաջատար տերությունների ակադեմիական շրջանակների աճող հետաքրքրությունը արևելագիտության և ի մասնավորի՝ հայագիտության հանդեպ:

Որևէ տարօրինակ բան չկա առ այն, որ հեյլենիստական պատմության հետազոտությունները զարգացել են նաև «գաղութային» արևելագիտության հունով: Գրեթե մեկուկես հարյուրամյակ հեյլենիզմի պատմության առանցքային քննույթն է եղել այսպես կոչված «սպիտակ մարդու բեռը»: Այդ քննույթի հիմքում արևմտյան գաղութարարի կուլտուրտրեգերյան առաքելության գաղափարն էր, որը եվրոպական քաղաքակրթության լույսն էր բերում Արևելքի ժողովուրդներին հանուն սեփական իսկ բարօրության: Հունա-մակեդոնական նվաճողներին և նրանց հաջորդած հռոմեացիներին հետազոտողները դիտարկում էին բացառապես եվրոպական քաղաքական և էնոցիոնալ «էլիտիզմի» դիրքերից:

Սակայն տարօրինակորեն առաջատար արևմտյան պատմաբաններից կամ բանասեր հայագետներից գրեթե ոչ մեկը Հայաստանի պատմության և մշակույթի մեջ չտեսավ հեյլենիզմի գծեր:

<sup>1</sup> Հայերը, հույների նման, չնայած եվրոպական երկրներում, Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում վառ արտահայտված ողջ պատիվնարությանը, իրենց հայրենիքում պատրաստ չէին լուծելու լուրջ խնդիրներ և անհաջողության մատնվեցին:

Ճիշտ նույն կերպ էլ հելլենիզմի XIX դարի և XX դարի առաջին կեսի պատմագրության հսկաներից և ոչ մեկը, լինեն Յ. Դրոյզենը, Մ.Ա. Ռոստովցևը, Ֆ.Ֆ. Ջելինսկին, Է. Բիքերմանը, Վ. Թարնը, Ֆ. Ուլբանքը թե այլք, չփորձեց ներառել Հին Հայաստանի պատմությունը և մշակույթը հելլենիստական քաղաքակրթության միասնական համատեքստում: Քաղաքական, տնտեսական և մշակութային առումով Հայաստանը, ըստ էության, դիտարկվում էր որպես Pax Iranica-ի մաս, որը հնում գրեթե թշնամական վերաբերմունք ուներ հելլենիստական-հռոմեական աշխարհի նկատմամբ: Գուցե սա բացատրվում է նրանով, որ հայկական, Կոմմագենեի և Ծոփքի երվանդականները, ընդհուպ այդ հարստության անկումը, հաջողությամբ դիմադրում էին Սելևկյան էքսպանսիային, իսկ Արտաշեսյանների գահակալումից հետո Հայաստանն է՛լ ավելի արդյունավետ էր դիմակայում էր Սելևկյաններին՝ Տիգրան Մեծի օրոք ուղղակիորեն ոչնչացնելով այդ հունա-մակեդոնական թագավորությունը: Ինքնիշխանության ձգտումը և՛ սեփական պետականության ամրապնդումը, մրցունակությունն ու ազգային շահերին հետամուտ լինելը արևմտյան և ռուս հետազոտողներն ընկալում էին որպես հայերի և Հայաստանին սահմանակից ժողովուրդների կողմից հելլենիստական արժեքների անընկալունակության դրսևորում: Հունա-մակեդոնական և հունա-հռոմեական քննաքննությունների տարրերը, որոնք ամենուրեք հանդիպում են Եփրատից արևելք ընկած երկրներում, դիտարկվում էին որպես պատահական և անէական օտար մասնիկներ, որոնք հեռավոր արևելք են բերել հույն գաղութարարները: Սելևկյանների պետության կազմի մեջ չմտած երկրների և ժողովուրդների պատմության և մշակույթի՝ որպես հելլենիստականի ընկալումը եկավ ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհայինից հետո (ընդ որում՝ ոչ միանգամից և ոչ բոլորի մոտ): Իսկ մինչ այդ Հայաստանը և մյուս առաջավորասիական երկրները արևմտյան և ռու-

սաստանցի պատմաբանների կողմից դիտարկվում էին (գաղութատիրական քննույթի լավագույն ավանդույթներով) լոկ որպես օբյեկտ, որին ուղղված էր հույն-մակեդոնացիների և նրանց փոխարինած հռոմեացիների ակտիվ քաղաքական և էմոցիոնալ գործունեությունը:

Սակայն հայ պատմաբաններն իրենք էլ Հայաստանը չէին ընկալում որպես հելլենիստական քաղաքակրթության բաղկացուցիչ մաս: Մխիթարյան նշանավոր հայագետների՝ Մ. Չամչյանի (1738–1823), Ա. Գարագաշյանի (1818–1903), Ղ. Ալիշանի (1820–1901) և նաև ռուսահպատակ հայագետների աշխատություններում, ինչպիսիք էին օրինակ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովբե Պատկանովը<sup>1</sup>, Գրիգոր Խալաթյանցը (1858–1902), իսկական գաղտնի խորհրդական Մկրտիչ Էմինը<sup>2</sup>, Լեոն (Առաքել Բարախանյան, 1860–1932), գեթ մի ակնարկ չկա Հայաստանում հելլենիզմի վերաբերյալ: Անգամ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի աշխատություններում չեն հիշատակվում հելլենիստական հարաբերությունները Հայաստանում կամ հարակից երկրներում, և դա այն դեպքում, երբ Ն. Ադոնցի ռուսանոլական և մագիստրոսական տարիները Ա.Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում և դասախոսական կարիերայի սկիզբը համընկան նույն համալսարանում Ռուսաստանում հելլենիզմի խոշոր մասնագետ Մ. Ռոստովցևի դասավանդման տարիների հետ: (Թեպետ, հանուն արդարության պետք է նշել, որ Ն. Ադոնցի գիտական հետաքրքրությունների ոլորտն ավելի շատ կապված էր Հայաստա-

<sup>1</sup> Catalogue de la litterature armenienne depuis le commencement du V jusqu'a XVI siecle. St. Petersburg, 1859; Патканов 1880; Патканов 2011. Սույն աշխատանքը տպագրվել է արամեիկ հոդվածներով՝ «Журнала Министерства Народного Просвещения» ամսագրի էջերում, 1874, 1875, 1881 և 1883 թթ. համարներում, ամսագրի 1883 թ. դեկտեմբերյան (№12) համարում: Տես նաև՝ Эмин 1889.

<sup>2</sup> Эмин 1864; Он же 1872: 657–698), և արամեիկ՝ Москва, 1872; Он же 1873; Он же: 1890: 93–129) և այլն:

նի միջնադարի, քան հին պատմության հետ, իսկ նույն Ռուսաստանում, Եվրոպայում սովորած Վ. Ռոստովցևից բացի, ոչ ոք հելլենիզմի մասին պատկերացում չունեի):

Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում լավ դպրոց անցած հայ հետազոտողները նվիրական աշխատանք են կատարել արևմտյան և ռուսաստանյան ակադեմիական հանրությանը արժեքավոր այն տեղեկություններին ծանոթացնելու գործում, որը կա հայկական միջնադարյան աղբյուրներում և ազգագրական նյութերում: Սակայն Ռուսաստանի հայագետների միայն երկրորդ սերունդը՝ Ն. Ադունց, Ն. Մառ և Հ. Օրբելի, Հ. Մանանդյան, իսկ Վենետիկում՝ Ղ. Ալիշանը, համարձակվեցին ինքնուրույն ընդհանրացումներ կատարել հայագիտության ոլորտում:

Հայաստանի պատմության հելլենիստական հետազոտությունների ոլորտում բեկում նկատվեց XX դարի կեսին մոտ: Որակական փոփոխություններն ակնհայտ դարձան արդեն XX հարյուրամյակի երկրորդ կեսին: Այդ ժամանակ անտիկագիտության<sup>1</sup> և Հին Հայաստանի պատմության ուսումնասիրման կենտրոններ էին մնում Լեւնինգրադի համալսարանական և ակադեմիական կենտրոնները: Այստեղ հիմնարար դպրոց է անցել երիտասարդ հետազոտողների մի ամբողջ սերունդ, որոնք, վերադառնալով Հայաստան, հայկական հելլենաբանության հիմքերը դրեցին:

Ինչպես և ողջ խորհրդային պատմագրությունը, հայկական խորհրդային պատմագրությունը նույնպես խցկեցին ֆորմացիոն տեսության պրոկրոստյան մահիճ: 1920–1930 թթ. ԽՍՀՄ-ում ծավալվեց գիտական բանավեճ Արևելքում ստրկության և ստրկատիրական հասարակարգի շուրջ: Որոշ խորհրդային պատմաբաններ, լինելով Օսվալդ Շպենգլերի տեսությունների ազդեցության ներքո,

փորձում էին խորհրդային պատմագիտության մեջ հայտնի և ընդունված հինգ հասարակական-տնտեսական հասարակարգերին հավելել ևս մեկը՝ «ասիական» (արխայիկ) հասարակական-տնտեսական հասարակարգը՝ հիմնված արտադրության ուրույն՝ ասիական եղանակի վրա, որը գոյություն ուներ միայն ասիական հասարակություններում: Ինչպես հայտնի է, «ասիական» հասարակարգի տեսությունը մշակել է դեռևս Կարլ Մարքսը «Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը» աշխատությունում («1857–1859 թթ. տնտեսական ձեռագրեր» բաժնում): Սակայն արտադրության ասիական եղանակի կողմնակիցների դեմ հանդես եկան մարքսիստ պատմաբան-ունիվերսալիստները, որոնք աշխարհի երկրներում և տարածաշրջաններում արտադրահարաբերությունների վերլուծության հիման վրա եկել են այն եզրահանգման, որ նման արտադրատեղանակ գոյություն ունի ոչ միայն արևելյան հասարակությունների զարգացման նախնական փուլերում, այլև առհասարակ բոլոր հասարակություններում՝ այն համարելով բացարձակ և ընդհանրական: Սրանից ելնելով՝ արևելյան այնպիսի հասարակություններ, ինչպիսին է Եգիպտոսը, Նոր թագավորության շրջանում կամ Աքեմենյանների տերությունը, սկսեցին սահմանվել որպես դասական ստրկատիրական հասարակություններ, որոնք, ըստ էության, ոչնչով չէին տարբերվում հունական պոլիսներից կամ Հին Հռոմի հասարակարգից: Մարքսիստական այս պարզեցված տեսության հիմքում համաշխարհային պատմական գործընթացի միասնության գաղափարն էր, որը դրսևորվում էր հասարակարգերի հերթագայության միջոցով՝ որպես մարդկության պատմական զարգացման ընդհանրական փուլեր:

«Նշանդամ տեսության» հիմնադիր ընդունված է համարել խոշոր եգիպտագետ և ասորագետ, խորհրդային Միությունում Հին

<sup>1</sup> St'u Проект «Санкт-Петербургские антиковеды» //http://centant.spbu.ru/spbant/alph.html

St'u Рабство в странах Востока в средние века 1986.

Արևելքի պատմագիտական դպրոցի հիմնադիր Վ.Վ. Ստրովեին: Նրա տեսական սխեմաները նույնացվել են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մոտեցումների հետ և, որոշ վերապահումներով ու շտկումներով, տիրապետող են մնացել խորհրդային պատմագիտության մեջ ընդհուպ վերակառուցման սկիզբը:

Սակայն ողջ արհեստականությամբ և «գաղափարախոսական ականջները ձգելով» հանդերձ՝ «հնգամյամ տեսությունը» թույլ տվեց նորովի նայել Արևելքի պատմությանը և ազդակ հաղորդեց Հին Հայաստանի պատմության զարգացմանը: Վ.Վ. Ստրովեի ունիվերսալիստական, համահավասարեցնող մոտեցումը, հատկապես հրաժարումը հատուկ՝ զուտ ասիական հասարակական-տնտեսական հասարակարգի հարացույցից, համենայնդեպս՝ տեսության մեջ, հավասարության նշան դրեց Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի միջև: Եվրոպան զրկվեց բացառիկության և եզակիության բրենդից՝ փոքր-ինչ թուլացնելով ավանդական արևմտակենտրոն դիրքորոշումները խորհրդային պատմագիտության, հատկապես արևելագիտության մեջ: Խորհրդային պատմագիտության մեջ դրվեց հելլենիստական աշխարհի աշխարհագրական և ժամանակագրական շրջանակների հարցը, որոնք զգալիորեն ընդլայնված էին: Առաջարկվեց դրանք տարբեր կերպ սահմանել յուրաքանչյուր առանձին երկրի համար: Մի կողմից՝ հելլենիզմի աշխարհագրական սահմանները բավական ընդլայնվեցին դեպի Արևելք, մյուս կողմից կասկածի տակ դրվեց հելլենիստական աշխարհի շրջանակների մեջ Մակեդոնիան և Հունաստանն ընդգրկելու իրավաչափությունը: Նշվեց հելլենիզմի կենսունակության և անգամ Արևելքում հունա-մակեդոնական թագավորությունների անկումից հետո նրա տարրերի ամրապնդման և արմատավորման երևույթի մասին: Ա.Բ. Ռանովիչն առաջարկեց հելլենիզմը դիտարկել որպես անտիկ

ստրկատիրական հասարակարգի զարգացման փուլ<sup>1</sup>, որն ինքնին տարօրինակ չի թվում, եթե նկատի ունենանք, որ Վ.Վ. Ստրովեին դասական ստրկատիրական հասարակությունների թվին էր դասում Աքեմենյան տերությունը և Քաղդեական թագավորությունը:

Այդ նույն ժամանակ ի հայտ են գալիս Սուրեն Տիգրանի Երեմյանի (1908–1992) աշխատությունները՝ նվիրված հելլենիզմին Հայաստանում: Հայաստանը հելլենիստական պետություն ճանաչելու առաջին քայլը դարձան այն ուսումնասիրությունները, որոնցում Ս. Երեմյանը, հենվելով առաջին հերթին հայկական աղբյուրների վրա, փորձեց Հին Հայաստանը ներկայացնել որպես Միջերկրածովյան տիպի ստրկատիրական երկիր<sup>2</sup>: Նա մշակեց Հայաստանում և սահմանակից երկրներում ստրկատիրական կարգի զարգացման շրջափոխանացումը. համայնքային-ստրկատիրական շրջան (մ.թ.ա. VII–IV դդ.), ստրկատիրական տնտեսության ծաղկման շրջան (մ.թ.ա. III դ. – մ.թ. II դ.), ստրկատիրական արտադրահարաբերությունների ճգնաժամի և անկման շրջան (մ.թ. III–IV դդ.): Այս մոտեցումը լիովին տեղավորվում էր Վ.Վ. Ստրովեի և Ա.Բ. Ռանովիչի սխեմայում և արժանացել է Ի.Վ. Ստալինի բարձր գնահատության, որը երկու անգամ Ս. Երեմյանին հրավիրել է իր մոտ՝ Կրեմլ, որպեսզի մուրաբայով մի բաժակ թեյի շուրջ քննարկի Խորհրդային Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի պատմության հետ կապված հայեցակարգային հարցերը: Ըստ էության, Ս. Երեմյանի հայեցակարգն ընդունվեց որպես առանցքային ԽՍՀՄ հին ժողովուրդների պատմության լուսաբանման համար: Այդ նույն ժամանակ մեծ թափ են ստանում Հյուսիսային Մերձսևծովյան հելլենիստական քաղաք-պետությունների հնագիտական հետազոտությունները: Հյուսիսային Մերձսևծովի հելլենիստական ուսումնասիրությունները

<sup>1</sup> Ранович 1950.

<sup>2</sup> Еремян 1939; Он же 1948.

րում մեծ ավանդ ունեն Հ.Ա. Օրբելին<sup>1</sup>, Տ.Վ. Բլավատսկին<sup>2</sup>, Վ.Ֆ. Գրինևիչը<sup>3</sup>, Գայդուկևիչը<sup>4</sup>, Գ.Ա. Կոշելենկոն<sup>5</sup>:

Հայաստանում և Անդրկովկասում ստրկատիրական հասարակարգի հայեցակարգն իր հետագա զարգացումն ստացավ Սուրեն Երեմյանի ավելի ուշ շրջանի աշխատություններում<sup>6</sup>: Ինչպես հայտնի է, քաղաքային կարգը միշտ էլ եղել է հելլենիզմի ցուցիչը: Նրա օգնությամբ համեմատաբար դյուրին էր այս կամ այն երկիրը հարաբերակցել հելլենիստական քաղաքակրթության հետ: Ուստի, Ս. Երեմյանի՝ Հին Հայաստանում և Անդրկովկասում հելլենիզմի պատմության ուսումնասիրման հաջորդ քայլը դարձան Հայաստանի հելլենիստական ուրբանիստիկայի հարցերին նվիրված հետազոտությունները<sup>6</sup>: Ս. Երեմյանի տեսական մշակումները հելլենիստական հետազոտությունների խթան հանդիսացան ոչ միայն Հայաստանում, այլև առհասարակ խորհրդային պատմագիտության մեջ:

Հելլենիստական Հայաստանի քաղաքական պատմության հանդեպ հետաքրքրության ակնհայտ դրսևորում սկսվեց պատերազմական և հետպատերազմյան տարիներին: Ըստ երևույթին, հելլենիստական և հելլենիստական-հռոմեական դարաշրջանների

<sup>1</sup> Նախապատերազմյան տարիներին բոլոր գործունեությունը ծավալեց Հ.Ա. Օրբելին, որն իրավամբ համարվում է խորհրդային ստորջրյա հնագիտության հիմնադիրը [Տե՛ս Օրբելի 1947]: Նա հասցրեց իրականացնել մի ամբողջ շարք հետախուզական հետազոտություններ և կազմեց ստորջրյա հնագիտության զարգացման բազմամյա հեռանկարային ծրագիրը: Այդ ծրագրի առաջնահերթ խնդիրներից մեկը ԽՍՀՄ հիդրոհնագիտական քարտեզի կազմումն էր (Տե՛ս Արծույան 1992: 15; Свенцишкая 1983: 353–367):

<sup>2</sup> Блаватский 1952; Он же 1969; Он же 1976; Он же 1978; Он же 1978; Кошеленко 1963; Потере 1969; Петерс 1969:

<sup>3</sup> Гайдукевич 1949; Он же 1969: 64:

<sup>4</sup> Կ.Է. Գրինևիչի արմկահարույց հնագիտական հետազոտությունները Խերսոնեսի շրջանում [Гриневич 1931; Гриневич 1964] հիմնված էին նյութերի անբարեխիղճ կեղծումների վրա, սակայն դրանք ազդակ հաղորդեցին ԽՍՀՄ-ում ստորջրյա հնագիտության զարգացմանը:

<sup>5</sup> Еремян 1958: 167–169; Он же 1950: 12–26; Он же 1953: 11–31; Он же 1958:

<sup>6</sup> Еремян 1950:

պատմությունը, հատկապես պատերազմը Հռոմի և Արևելքի հելլենիստական տերությունների միջև, ոչ ակնհայտորեն առնչվում էր Հայրենական մեծ պատերազմի և Սառը պատերազմի իրողություններին: Պատահական չէ, որ պատերազմական տարիներին հայկական գեղարվեստական գրականությունում վերածնվեց պատմավեպի ժանրը, որը մինչ այդ «պահված էր թաքստոցում»: Մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել ստեղծագործություններ, որոնք գովերգում էին հայ ժողովրդի հերոսական սխրանքը արտաքին և ներքին թշնամիների հանդեպ<sup>1</sup>: Իսկ պատմագրությունում ի հայտ են գալիս աշխատություններ՝ նվիրված Մեծ Հայքի թագավորության ռազմական պատմությանը և Արտաշեսյանների փայլուն հարստության որոշ ներկայացուցիչների: Այդ տարիներին լույս տեսան Հ. Հ. Մանանդյանի (1873–1952)<sup>2</sup> թերևս լավագույն աշխատությունները: Առաջին անգամ հայ-հռոմեական պատերազմներն սկսեցին դիտարկել ոչ հռոմեական իմպերիալիզմի դիրքերից, ինչպես ավանդաբար ընդունված էր արևմտյան և ռուսական պատմագրության մեջ: Հռոմն այլևս չէր ընկալվում որպես առաջավոր արևմտյան քաղաքակրթության քվինթեսենցիա, որի առաքելությունը լուսավորության լույս սփռելն էր բարբարոս Արևելքի վրա: Ընդհակառակը, այն ներկայացվում էր որպես գիշատիչ իմպերիալիստական կայսրություն, որը, ձգտելով համաշխարհային տիրապետության, ժողովուրդներին բերում էր ստրկացման և տնտեսական լճացման, իսկ

<sup>1</sup> 1943–46 թթ. Դ. Դեմիրճյանը գրեց «Կարդանանք» վեպի 1–2 հատորները գրադաշտական Իրանի դեմ հայոց պատերազմի մասին (2-րդ վերամշակված տարբերակը հրատարակվել է 1951 թ.), իսկ Ս. Չոլյանը 1944 թ. հրատարակեց «Պապ թագավոր» և «Հայոց բերդը» (1959 թ.) վեպերը: Հայոց երիտասարդ թագավոր Պապը ներկայացվել է որպես բարեխիղճ-պետական գործիչ, Ստալինի սիրելի՝ ռուս ցար Իվան Ահեղի տիպի: Պապին խանգարեցին իրականացնել բարեխիղճությունները իշխանները և եկեղեցականները, որի պատճառով երկիրը թուլացավ և բաժանվեց կայսրությունների միջև:

<sup>2</sup> Манандян 1939: 70–82:



երբեմն էլ ամբողջ ազգերի և ցեղերի բնաջնջման<sup>1</sup>: Միևնույն ժամանակ, Արտաշեսյանների հայկական հելլենիստական թագավորությունն ընկալվում էր որպես հիմքային պետական կազմավորում, որը ներդաշնակորեն համադրում էր բուն տեղական (համայնքային), արևմտյան պոլիսային (հունա-մակեդոնական) և արևելյան կայսերական (իրանա-սեմական) սկզբունքները: Սա հայկական պատմագիտության էական առաջընթաց էր:

Հելլենիստական Հայաստանի հոգևոր կյանքի ուսումնասիրության հարցում մեծ ներդրում կատարեցին իրենց ժամանակից առաջ անցած այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք էին Թադոս Ավդալբեգյանը<sup>2</sup> և Կարապետ Մելիք-Օհանջանյանը<sup>3</sup>:

Այսպիսով, Ս. Երեմյանի և մասամբ Հ. Մանանդյանի ջանքերով<sup>4</sup> Հայաստանում դրվեց հելլենիստական հետազոտությունների սկիզբը: Հելլենիզմն սկսեց դիտարկվել որպես հայոց պատմության փուլերից մեկը, որն ազդել է երկրի ողջ հետագա պատմության վրա: Հայկական հելլենիզմը դարձավ անտիկ աշխարհի խոշոր շատ խորհրդային հետազոտողների գիտական որոնումների առարկան: Իրենց հետազոտությունները հելլենիզմի ուսումնասիրությանն են նվիրել Գ.Ա. Կոշելենկոն<sup>5</sup>, Վ.Ֆ. Մինորսկին (Մ. Բրիտանիա)<sup>6</sup>, Կ.Վ. Տրևերը<sup>7</sup>, Ա.Ի. Բոլտունովան<sup>8</sup>, Ի.Մ. Դյակոնովը և այլք<sup>9</sup>:

Սակայն Ս. Երեմյանի՝ Ա. Ռանովիչի գաղափարների ծիրում մշակված հայեցակարգը Հին Հայաստանի ստրկատիրական կար-

<sup>1</sup> Манандян 1943.

<sup>2</sup> Ավդալբեգյան 1960:

<sup>3</sup> Մելիք-Օհանջանյան 1964:

<sup>4</sup> Տե՛ս Մանандյան 1930: 26.

<sup>5</sup> Кошленко 1978: 45–58; Он же 1979; Он же 1990.

<sup>6</sup> Minorsky 1957.

<sup>7</sup> Тревер 1953.

<sup>8</sup> Болтунова 1942; Он же 1963.

<sup>9</sup> Дьяконов 1955.

գի մասին նախապատերազմյան տարիներին ընդունվեց զգուշավորությամբ անգամ հենց Հայաստանում: Փոխարենը հետպատերազմյան տարիներին Հին Հայաստանը, Վրաստանը, ԽՍՀՄ այլ մերձսևծովյան շրջանների հետ, ինչպես նաև խորհրդային Կենտրոնական Ասիայի տարածքում հին այնպիսի պետական կազմավորումներ, ինչպիսիք են Բակտրիան և Սոգդիանան, արդեն անվարան սահմանվում էին որպես ստրկատիրական: Վ. Ստրովեի, Ա. Ռանովիչի և Ս. Երեմյանի հասցեին կասկածներ և քննադատություն հնչեցին միայն Ստալինի մահվանից հետո:

Ա. Ռանովիչի՝ արևելյան հելլենիզմի մասին հայացքների համակարգը առաջինը վերանայեց Կոնստանտին Կոնստանտինովիչ Ջելյինը՝ հրաժարվելով հելլենիզմը համարել անտիկ ստրկատիրական հասարակարգի զարգացման փուլ: Ըստ նրա՝ «հելլենիզմ» տերմինի նման օգտագործումը կարող է լույս դժվարացնել առանց այդ էլ խիստ բարդ և խճճված խնդրի ընկալումը: Կ. Ջելյինի կարծիքով՝ հելլենիզմը որպես փուլ ընկալելը կոնկրետ պատմական հասկացության ոչ ճիշտ կիրառման օրինակ է: Դրան փոխարեն Կ. Ջելյինն առաջարկեց հելլենիզմի իր սահմանումը. այն, ըստ նրա, կոնկրետ պատմական երևույթ է, որը բնութագրվում է հելլենական և տեղի, գլխավորապես՝ արևելյան սկզբունքների համադրությամբ և փոխգործակցությամբ՝ տնտեսական կարգի, հասարակական և քաղաքական հարաբերությունների, գաղափարախոսության և մշակույթի ոլորտներում: Այդ համադրությունը տեղի էր ունենում կոնկրետ պատմական միջավայրում, որը հիմնականում ձևավորվել էր մակեդոնական նվաճման արդյունքում:

Կ. Ջելյինի հայեցակարգը բավական երկար ժամանակ գրեթե անվերապահորեն ընդունում էր խորհրդային ակադեմիական միջավայրը (սակայն մեր կարծիքով՝ Կ. Ջելյինի հայացքների համա-

<sup>1</sup> Зельин 99–108; Он же 1953: 145–156.

կարգը նույնպես տառապում է որոշ սխեմատիզմով և բավական խոցելի տեղեր ունի անգամ իր ժամանակի խորհրդային պատմագրության տեսանկյունից<sup>1</sup>: Եվ այնուամենայնիվ, նրա գաղափարները բավական առաջադեմ էին իր ժամանակի համար և անդրադարձել են Հայաստանում հելլենիզմի հայեցակարգի հետագա մշակման վրա, որը կապված է այդ պահին տակավին երիտասարդ խորհրդային հետազոտողների Գագիկ Խորենի Սարգսյանի (1926–1998), Անահիտ Գեորգիի Փերիխանյանի (1928–2012)<sup>2</sup>, Գևորգ Արտաշեսի Տիրացյանի (1926–1993), Սիմոն Միսակի Կրկյաշարյանի (1923–2011) և այլոց հետ: XX դարի 50–60-ական թթ. վերջերին թերևս հելլենիզմի պատմության ինքնատիպ աշխատությունների

<sup>1</sup> Խառնաշփոթի հիմնական պատճառը անգամ պրոֆեսիոնալ պատմաբանների համար եղել և մնում է հենց հելլենիզմ անվանումը: Բանն այն է, որ հելլենիզմը գուտ արևելյան երևույթ է որը, սակայն, անվանվել է *հելլեն* (հունյ) անունից ստեղծված եզրով: Բայց Հունաստանը և Մակեդոնիան դասական ժամանակաշրջանում արդեն վաղուց դարձել էին ինքնուրույն քաղաքակրթություն և ակտիվորեն դիմակայում էին արևելյան աշխարհին: Սա, չնայած թվացյալ տարօրինակությանը, օրակարգ է բարձրացնում հելլենիստական աշխարհին Ատտալիան հունա-մակեդոնական դինաստիայի պատկանելության հարցը: Թեև ինքը մակեդոնական միապետությունը, տիպարանորեն մոտ էր Արևելքի միապետություններին և իր գոյության վերջում ենթարկվում էր որոշակի ազդեցության Սելևկյանների կամ Պտղոմեոսների արքայատոհմերի կողմից, այնուամենայնիվ, շատ հետազոտողներ Մակեդոնիան համարում են հունական աշխարհի մաս և ոչ մի կերպ՝ արևելյան տիպի հելլենիստական թագավորություն: «Հունաստանում շարունակում էր գոյություն ունենալ դասական ստրկություն, ավելին՝ հենց հելլենիստական դարաշրջանին է համապատասխանում կախվածության այն ձևերի (խլոտիա, պենետիա և այլն) գրեթե յուրաքանչյուր վերացման ժամանակը, որոնք իրենց համանմանը ունեն Արևելքի հասարակական-քաղաքական կառուցվածքում: Արևելյան ավանդույթների ազդեցությամբ ծնված սոցիալական և ոչ մի ձև այն ժամանակվա հունական հասարակության կառուցվածքում չենք տեսնում: Հունաստանում շարունակում է գոյատևել պոլիսը, և զարգանում է պետական կազմակերպման նոր տեսակ՝ պոլիսների դաշնային միությունը, որը ոչ մի կայ չունի Արևելքում գոյություն ունեցող քաղաքական կառուցվածքի հետ»: «...Միակ ոլորտը, որում Արևելքի ազդեցությունը ինչ-որ չափով զգացվում է մշակույթն է, հիմնականում կրոնական պատկերացումների ոլորտը» (Ковчеленко 1990: 12–13): Մենք իրավաչափ չենք համարում նման մոտեցումը, քայց այն ավելի հանգամանալի մշակում է պահանջում, և մենք դրա քննարկումը կբողնենք հետագային:

<sup>2</sup> Периханян 1960; Idem 1966: 17–29; Она же 1971: 124–138; Նույնը՝ 1971: 78–82).

մեծ մասը ԽՍՀՄ-ում գրել են հայ հետազոտողները, որոնք ակտիվորեն ներգրավվել էին նոր հնարավորությունների (ավելի հասանելի էր օտարալեզու գրականությունը, հնարավոր էր գիտական կապեր հաստատել օտարերկրյա գործընկերների հետ, խրուշչովյան «ծնհալով» ընձեռված այլ հնարավորություններ) հետ կապված նոր տեսական մշակումներում:

Նախ՝ անհրաժեշտ էր ազատվել Վ. Ստրուվեի և Ա. Ռանովիչի մշակած արևելյան ստրկատիրության հիմնահարցի գաղափարախոսական կապանքներից: Խորապես և ըստ էության տիրապետելով աղբյուրագիտական հենքին՝ հայ պատմաբանները հասկանում էին, որ ստրկատիրություն (տերմինի մարքսիստական դասագրքային ընկալմամբ) Հայաստանում չի եղել, ուստի Հին Հայաստանը ստրկատիրական երկիր անվանել կարելի է լոկ մեծ վերապահումով, այն էլ՝ իբրև շոդակում ժամանակի գաղափարախոսական կոնյունկտուրային: Այսպես, Գ. Սարգսյանը<sup>1</sup> և Ա. Փերիխանյանը<sup>2</sup>, ինչպես նաև Ա. Սուքիասյանը<sup>3</sup> կասկածի ենթարկեցին Հայաստանում դասական ստրկատիրության գոյությունը, որի կողմնակիցներն էին Ս. Երեմյանը և Ս. Հակոբյանը<sup>4</sup>: Խ. Սամուելյանը Հ. Մանանդյանի նման կարծում էր, որ Հին Հայաստանում ստրկություն ըստ էության չի եղել, և Հայկական լեռնաշխարհում դեռևս մինչդարձարտական ժամանակներից հաստատվել է ֆեոդալիզմի հատուկ ձև, որը բացառում էր ստրկական ուժի լայն կիրառումը<sup>5</sup>: Այս մոտեցումները սուր քննադատեցին ինչպես օրթոդոքսալ մարքսիստ-լենինյանները, այնպես էլ Հայաստանում ստրկատիրության հայեցակարգի չափավոր պաշտպանները, որոնք ստրկատիրական կարգն ընդունում

<sup>1</sup> Саркисян 1960; Սարգսյան 1962:

<sup>2</sup> Еремян 1953.

<sup>3</sup> Сукиасян 1963.

<sup>4</sup> Հակոբյան 1948, Նույնը 1957:

<sup>5</sup> Սամուելյան 1937, Նույնը 1939:

էին վերապահումներով: Անտիկ պատմությամբ զբաղվող հայ պատմաբանների մեջ նրանք մեծամասնություն էին:

Ի տարբերություն Ս. Երեմյանի՝ հայ պատմագետների նոր սերնդի առջև այլևս չէր դրվում հելլենիստական աշխարհին Հին Հայաստանի պատկանելությունն ապացուցելու և հիմնավորելու նպատակը: Եկել էր մեթոդական այլ մոտեցումների մշակման ժամանակը՝ **հայկական հողի վրա հելլենիզմի ընդլայնված և ավելի հանգամանալի ուսումնասիրման և ընկալման համար՝ հենվելով դասական և հին հայկական գրավոր աղբյուրների, վիճագրական և հնագիտական նյութերի վրա:** Ինչպես ցույց է տվել Գ. Սարգսյանը, հայկական գրավոր աղբյուրների շարքում հելլենիստական ժամանակի իրողությունների մասին ամենաարժեքավոր տեղեկություններն առկա են Մովսես Խորենացու կոթողային «Հայոց պատմություն» աշխատությունում: «Հայոց պատմության քերթողահոր» այս աշխատությունը նոր ընթեռնման կարիք ուներ, և միանգամայն օրինաչափ էր Գ. Սարգսյանի ցանկությունը՝ այն նորից՝ գրաբարից թարգմանել ուսերեն<sup>2</sup>: Թեև գրականության այս կոթողային աշխատությունն ստեղծվել է V դարում, նրա հիմքում ընկած են ավելի վաղ շրջանին, առաջին հերթին՝ հելլենիզմի դարաշրջանին վերաբերող աղբյուրներ: Գ. Սարգսյանի «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» աշխատությունը<sup>3</sup> թույլ տվեց նորովի դիտարկել ինչպես հելլենիզմը, այնպես էլ հայոց պատմահորը:

Ինչպես հայտնի է, Արևելքում հելլենիստական քաղաքակրթության կենտրոններ էին նախ և առաջ **քաղաքները և քաղաքա-**

**ցիական համայնքը:** Հելլենիզմն առաջին հերթին քաղաքային կյանքն էր: Մեծ Հայքի առավել մեծ և նշանակալի հելլենիստական քաղաքներն էին Վանը, Երվանդաշատը, Արտաշատը, Ջարեհավանը, Ջարիշատը, մի քանի Տիգրանակերտները, Գառնու արքայական ավանը, Մծուրնը, Վաղարշապատը, Դվինը, Արշակավանը, հավանաբար Նախիջևանը: Քիչ չէին հելլենիստական քաղաքները Փոքր Հայքում, Կոմմագենեում և Ծոփքում (Մալաթիա, Սեբաստիա, Սամոսատ, Արշամաշատ, Արկաթիակերտ, Նիմփայոսի Արսամեա և այլն): Երբ 384–368 թթ. հայ-պարսկական պատերազմի ժամանակ պարսից Շապուհ արքայի հրամանով Մեծ Հայքի քաղաքային բնակչությունը քշվեց դեպի Իրանի խորքերը, հայկական հելլենիզմը մարեց գրեթե կես հարյուրամյակով՝ վերածնվելով արդեն այլ միջավայրում և այլ ձևով:

Իհարկե, հելլենիստական Հայաստանում նոր քաղաքների ծագումը պայմանավորված էր ներքին գործոններով և երկրի շահեկան աշխարհագրական դիրքով, որով անցնում էին Մետաքսի ճանապարհի մայրուղիները<sup>2</sup>: Սակայն չի կարելի հաշվի չառնել հայ հելլենիստական թագավորների պասիոնարությունը, որոնց համար քաղաքաշինությունը հատուկ իմաստ ուներ: Ուստի, հայկական հելլենիզմի հետազոտողների համար քաղաքները և քաղաքային կարգը միշտ եղել են սևեռուն ուշադրության առարկա: Գ. Սարգսյանի հելլենիստական պրպտումների գլխավոր լաբորատորիան դարձավ Տիգրանակերտը՝ Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաքներից մեկը: Այս թեմային է նվիրված նրա առաջին մենագրությունը<sup>3</sup>: Դրանում խոսվում է հելլենիստական տիպի քաղաքների առաջացման նախադրյալների, սինոլիզմի՝ որպես հել-

<sup>1</sup> «Պատմության» թարգմանության առաջին տարբերակը իրականացվել էր դրանից ավելի քան հարյուր տարի առաջ: Տե՛ս Эмин 1893.

<sup>2</sup> Мовсес Хоренаци 1990.

<sup>3</sup> Սարգսյան 1956: 31–42): Նույնը՝ 1966: Նույնը՝ 1968: 119–146: Նույնը (a)՝ 1973: 156–158, Նույնը (b)՝ 1973: 43–60:

<sup>1</sup> Маргарян 2007.

<sup>2</sup> Манандян 1930: 19–49.

<sup>3</sup> Саркисян 1960; Саркисян 1976.

լենիստական Հայաստանում քաղաքակերտման գլխավոր ուժի մասին: Այն ժամանակ դեռ երիտասարդ հետազոտողին հաջողվեց վեր հանել տիգրանակերտյան *պոլիպեայի* և առաջավորասիական տարածաշրջանի հելլենիստական քաղաքային համայնքների տեսակային նմանությունն ու տարբերակիչ առանձնահատկությունները: Հայաստանում հելլենիստական քաղաքների և քաղաքային կյանքի վերաբերյալ հարցերում հայ գիտնականների, ինչպես և օտարերկրյա գիտնականների շրջանում լուրջ տարածայնություններ չկային, եթե հաշվի չառնենք դրանց առկայությունը մանրամասների հարցում: Այդ հարցերին են նվիրված Գ. Տիրացյանի<sup>1</sup> և Ս. Կրկյաշարյանի<sup>2</sup> հետազոտությունները:

Մյուս առանցքային և բազմաթիվ վեճերի առիթ հանդիսացող հարցը *հողային հարաբերություններն էին հելլենիստական Հայաստանում և սահմանակից երկրներում*, ինչպես նաև *անմիջական արտադրողների և նրանց շահագործման ձևերի*<sup>3</sup> մասին<sup>3</sup> հարցը: Այս հարցերի պարզաբանման մեջ անգնահատելի ավանդ է ունեցել Ա. Փերիխանյանը, որի ակադեմիական հետազոտությունները խթան են հանդիսացել առաջավորասիական տարածաշրջանում հելլենիզմի նոր խնդիրների մշակման համար: Իր առաջին մենագրությունում («Храмовые объединения Малой Азии и Армении»), որը լույս տեսավ Գ. Սարգսյանի «Տիգրանակերտ» գրքից մեկ տարի առաջ, Ա. Փերիխանյանը հարուստ աղբյուրագիտական հենքի վրա դիտարկում է Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային համայնքների հետ կապված ամենատարբեր հարցեր: Մենագրությունում վերլուծվում են վիճահարույց հարցեր, որոնք վերաբերում են տաճարային համայնքների և միավորումների հողատիրությանը,

<sup>1</sup> Тирация 1988.

<sup>2</sup> Կրկյաշարյան 1970: 140–141:

<sup>3</sup> Периханян 1956; Նույնը՝ 1957: 47–68; Она же 1956: 44–59; Она же 1952: 13–27.

հետազոտվում են բարդ հարցեր՝ կապված տաճարային և համայնքային հողին «կցված» ստրուկների (λαοί) և այլ արտադրողների հետ: Տույց է տրվել տաճարային միավորումների դերը հելլենիստական քաղաքներում:

Գ. Սարգսյանը հողամշակների խնդրի հետ կապված բարդ և խճճված հարցերին է անդրադարձել մի շարք հետազոտություններում: Հետազոտողը պետք է պահեր այն նուրբ սահմանագիծը, որը բաժանարար էր գաղափարախոսական արքիոմների և ակադեմիական գիտության միջև: Նրան հաջողվեց մշակել հարացույց, որը հիանալի տեղավորվում էր իր ժամանակի խորհրդային գաղափարախոսական սխեմաներում և միևնույն ժամանակ համապատասխանում ակադեմիական ամենաբարձր չափորոշիչներին: «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» հատուկ աշխատությունում նա դիտարկել է հողատիրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են ագարակները և դաստակերտները, որոնք պատկանում էին արքային, ավագանուն, տաճարներին, հոգևորականությանը, քաղաքներին և այլն: Գ. Սարգսյանի կարծիքով՝ այդ մասնավոր տնտեսություններն սկզբում իրենց ձևով ստրկատիրական էին: Վաղ միջնադարի դարաշրջանում Հայաստանում դրանք փոխակերպվում են իրենց ժամանակի համար առավել առաջավոր տնտեսությունների՝ ավատատիրական կալվածքների:

Ըստ Գ. Սարգսյանի՝ բնակչության գերակշիռ մասն ապրում էր գյուղերում, գյուղական համայնքներում: Համայնքային գյուղացիները՝ շինականները, ունեին ամենաբարձր կարգավիճակը հողի վրա անմիջական արտադրությամբ զբաղվողների մեջ: Ագարակներին և դաստակերտներին հողին ամրագրված անմիջական արտադրող-

<sup>1</sup> Սարգսյան 1962:

ների կարգը աղբյուրներում հիշատակվում է «մշակ» անվամբ: Մշակները, Գ. Սարգսյանի կարծիքով, մշակում էին օտարի հողը՝ որպես վարձու աշխատող, վարձակալող կամ ճորտ, թեև առանձին դեպքերում այս եզրը կարող էր նշանակել աշխատող, որի կարգավիճակը մոտ է ստրկականին: Միևնույն ժամանակ, Գ. Սարգսյանի կարծիքով, «ծառա» եզրը միանշանակ ցույց է տալիս շահագործվողի ստրկական վիճակը: Սակայն Հայաստանի ավատացման շրջանում տեղի ունեցավ դաստակերտ-ագարակների բնակիչների և հողին «կցված» ստրուկների կարգավիճակների մերձեցում: Վերջիններս իրենց կարգավիճակով առանձնապես չէին տարբերվում Սպարտայի իլոտներից կամ Հոմի կոլոններից: Նոր իրավիճակում հին եզրերն սկսեցին կորցնել նախկին, բուն իմաստը՝ ձեռք բերելով նոր իմաստային բովանդակություն, թեև որոշ աղբյուրներում պահպանվում էին հին հասկացությունները: Առանձին դեպքերում երկու տարբեր եզրեր կարող էին նշանակել իմաստով մոտ հասկացություններ՝ դժվարություններ ստեղծելով հետազոտողների համար: Այստեղից էլ նույն եզրերի նկատմամբ տարբեր մոտեցումները և տարբեր մեկնություններն այս կամ այն արդի հեղինակի կողմից: Սակայն տարբեր հետազոտողների միջև հակասությունների հիմնական պատճառ դարձավ այդ նույն այսպես կոչված «հնգանդամը», որը երբեմն փակուղի էր տանում անգամ ամենատաղանդավոր գիտնականներին: Երիտասարդ շատ հետազոտողներ գերադասում էին զբաղվել մասնավոր հարցերով: «Լճացման» տարիներին ձեռք բերված սովորությունը՝ խուսափել խոր վերլուծությունից և ընդհանրացումներից, ցայժմ զգացվում է: Հայաստանում և մի շարք սահմանակից երկրներում հողատիրության և անմիջական արտադրողների կարգավիճակի հիրավի բարդ թեմայի հետագա իմաստավորման և մշակման համար հարկավոր էր դուրս գալ գաղափարախոսական կարծրատիպերի և դոգմաների հեղձուկ շրջա-

նակից, այլ ոչ թե փորձել «ճողոպրել», «ծվածեղ պատրաստել՝ առանց ծուն կոտրելու»:

Հելլենիստական պոլիտեայից բացի, Առաջավոր Ասիայում հելլենիստական մշակույթի բնորոշ ցուցիչ է նաև **հելլենիստական միապետության պալատական արարողակարգային հասարակությունը**: Այս թեման համարվում է առանցքայիններից մեկն արդի հելլենիստական հետազոտություններում: Սակայն այստեղ ևս, քաղաքական կոնյունկտուրայից ելնելով, շատ հարցեր «փակ են մնացել»: Եվ այնուամենայնիվ, արքայի տիտղոսաշարի՝ և արքայական տարբերանշանների հետ կապված որոշ առումներ լուսարանվել են հայ հետազոտողների աշխատություններում: Հետազոտողներին առանձնապես հետաքրքրել են Արտաշեսյանների հայկական խույրը և հզորության, թագավորական իշխանության կամ պալատական մեծատոհմիկների այլ արտաքին նշանները<sup>2</sup>: Քիչ հետազոտություններ չեն նվիրվել դինաստիական ժառանգականությանը և թագավորների կարգավիճակին հելլենիստական Հայաստանում<sup>3</sup>:

**Դինաստիական պաշտամունքը** հելլենիստական Արևելքի բնորոշ գծերից է: Այս երևույթին հայ հետազոտողները նույնպես զգալի աշխատություններ են նվիրել, որոնք թույլ են տվել նորովի մեկնաբանել հայ և անտիկ հեղինակների վաղուց քրեստոմատիական դարձած վկայությունները<sup>4</sup>, իմաստավորել հնագիտության, վիճագրագիտության և դրամագիտության տվյալները<sup>5</sup>:

Հելլենիզմի հայկական երիտասարդ պատմագրության տարբերակիչ գիծը դարձավ ավանդական հայագիտությանը ոչ բնորոշ՝

<sup>1</sup> Կրկյաշարյան 1982: 45–51:

<sup>2</sup> Степанян 1991.

<sup>3</sup> Սարգսյան, Տիրացյան 1958: 53–72): Մանասերյան 1999: 77–85:

<sup>4</sup> Սարգսյան 1966: 23–78: Тирация 1985: 59 сл.; Саркисян 1988: 14–23.

<sup>5</sup> Мусегян 1962. Մուշեղյան 1973: Նույնը՝ 1983:

հին հայկական պատմության իրողությունների դիտարկումը տարածաշրջանի և համաշխարհային պատմության միասնական համատեքստում: Այսպես, Ա. Գ. Փերիխանյանը միասնական համատեքստում ներկայացրեց Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային համայնքների զարգացման<sup>1</sup>, տաճարային համայնքների և միավորումների հողատիրության պատկերը, տաճարապատկան կալվածքներում անմիջական արտադրողներին, տաճարային միավորումների դերը հելլենիստական պետություններում: Գ. Սարգսյանը ներկայացրեց Տիգրանակերտի պոլիտեայի իրողությունները Ասորիքի և Բաբելոնի հելլենիստական քաղաքացիական համայնքների համեմատությամբ: Նույն համատեքստում դիտարկվեց հելլենիստական թագավորների և նրանց նախնիների պաշտամունքը Հին Հայաստանում: Գ. Տիրացյանը միասնական և անխզելի կապի մեջ էր դիտարկում հելլենիստական Հայաստանի, Ծովքի և Կոմմագենի իրողությունները:

Հայամետ դիրքերից դիտարկվեցին Մեծ Հայքի և տարածաշրջանի հելլենիստական թագավորությունների բարդ փոխհարաբերությունները, մանավանդ վերլուծվեցին այնպիսի հզոր տերության հետ փոխհարաբերությունները, ինչպիսին էր Սելևկյան թագավորությունը<sup>2</sup>, իսկ նրա կործանումից հետո՝ փոխհարաբերությունները Հռոմեական կայսրության և Արշակունիների Պարթևական տերության հետ<sup>3</sup>:

Հելլենիստական Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրման մեջ մեծ ավանդ ունեցան Ա. Փերիխանյանը<sup>4</sup>, Բ. Առաքելյանը (1912–2014)<sup>1</sup>, Գ. Տիրացյանը (1926–1993)<sup>2</sup>, Գ. Սարգսյանը<sup>3</sup> և այլք:

<sup>1</sup> Тирациян 1956: 69–74; Маргарян 1991: //http://cheloveknauka.com/svyatilischastrany-kommageny-i-armeniya/:

<sup>2</sup> Սարգսյան 1965: 77–85, նույնը՝ 1969: 41–61), Էջիբեկյան 1979:

<sup>3</sup> Մանասերյան 1987: 240:

<sup>4</sup> Периханян 1966: 103–133.

Խորհրդային դարաշրջանի ավարտին լույս տեսան անտիկ պատմության հայ մասնագետների նոր սերնդի ներկայացուցիչների՝ Ռ.Լ. Մանասերյանի<sup>4</sup> և Ա.Ա. Ստեփանյանի<sup>5</sup> գրքերը, որոնցում մշակվեցին Հայաստանում հելլենիզմի դարաշրջանի ուսումնասիրման նոր մեթոդներն ու մոտեցումները:

Անցման հետխորհրդային բարդ շրջանում նորաստեղծ ՀՀ հունանիտար միտքն ընկավ տարընթացության և տարութերումների մեջ: Հայաստանի և Ռուսաստանի գիտական կապերը գրեթե լիովին խզվեցին: Չհաջողվեց շփումներ հաստատել հելլենիզմի դարաշրջանի արևմտյան հետազոտողների հետ: Հայ պատմագրությունը բաժանվեց երկու թևի՝ արևմտակենտրոնների և «զելոտների» (պայմանականորեն այդպես ենք անվանել «գեղջկական հայրենասերների» պահպանողական թևը, որը պայքարում էր ազգային արժեքների «մաքրության» համար՝ կամա թե ակամա գավառականացնելով հայկական պատմագիտությունը)<sup>6</sup>: Արևմտականների և «զելոտների» անպտուղ և անառարկա վեճերն առանց այդ էլ բարդ ժամանակներում լուր շեղեցին հետազոտողներին անտիկ և միջնադարի պատմության ոլորտում արդյունավետ աշխատանքից:

Այսօր Հայաստանի հելլենիստական պատմագրությունը պետք է անցնի ապագադրությամբ, ստրկամիտ արևմտականությունը մերժելու ևս մեկ փուլ՝ միաժամանակ ձերբազատվելով «զելոտիզմից», որը 80-ական թթ. վերջի – 90-ական թթ. սկզբի հայրենասիրական շարժման ալիքի վրա եկավ և ցայսօր հաստատում է իր գե-

<sup>1</sup> Аракелян 1951: 265–267); Он же 1951; Он же 1951: 101–114; Он же 1957; Նույնը՝ 1956; Он же 1961; Он же 1978; Он же 1982; 1971; Он же 1975.

<sup>2</sup> Тирациян 1988. Տե՛ս Он же 1978; Минацкаян. Тирациян 1961: 71–81.

<sup>3</sup> Саркисян 1976: 51–62.

<sup>4</sup> Манасерян 1982: 122–139; Նույնը՝ 1999: 77–85:

<sup>5</sup> Степанян 1978: 187–204; Он же Рандейский договор и коронация Тиридата Аршакида в Риме. С. 171–183; Он же 1991.

<sup>6</sup> Մարգարյան 2014: 289–308:

րակայող դիրքերը հայագիտության մեջ: Ըստ էության, դեռ պետք է վերականգնել այն փխրուն հավասարակշռությունը, որը մի ժամանակ գտնվել և խնամքով պահպանվում էր անցյալ դարի 50–70-ական թթ. առաջատար հայագետների կողմից:

